


884

L. III-5

1701

1701



ՆՈՐ ՇՐՋԱՆ

VI ՏԵՐԻ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա. Գ Ի Ր

№ 7

Յ Ո Ւ Լ Ի Ս

1906



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան „ՀԵՐՄԷՍ“ Մադար. փող. № 15.

ԲՈՎ ԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. ՎԵՐԱԾՆՈՒԱԾԸ, (գրածա 3 գործ.) Լեւոն Մանուէլեանի	5
2. ԷԼԵԳԻԱ, (ոտանաւոր) Վահ. Տ.—Դր.—ի	52
3. ՃԵՄԱՐԱՆՅՈՒ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՅ, Արզումի	53
4. ՄԵՂՄԱՅՈՒՑԻՉ ՊԱՐԱԳԱՆԵՐ, (պատմ. Մորիս Լըվէլի Թարգմ. Ա. Շահէնի	62
5. ՖԻՆԼԱՆԴԻԱ Ն.—ի	68
6. ՍԵՐՈՒՆԴՆԵՐ, ոտանաւոր Լեւոն Մանուէլեանի	81
7. ՊԵՐՃԱԽՈՍ ԹՈՒԵՐ ԵՒ ՈՒՇԱԳՐԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ— ՆԵՐ, Սալլիսմանի	82
8. ԵԹԷ ՅՈԳՆԵՅԻՐ ԿԵԱՆՔԻ ՄԷՉ ոտան. Լեւոն Մա— նուէլեանի	88
9. ՄՕՏԻԿ ԱՆՅԵԱԼԻՅ, Անկախի	89
10. ԿԱՐԼ ՄԱՐԲՍԸ ԵՒ ՄԱՐԲՍԻՉՄԸ, Բ. Իշխանեանի	95
Քաղ.—սոց. բրոշիւրների երկը հրատարակութիւններ.— Ատրպետի «Հողատիրութիւնը» Մ.	107
11. ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ. —	109
12. ՆՈՐ ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐՔԵՐ	
13. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Գումայի պատմական միասիւն: —Ուրուստի մերկացումները, Բելոստոկի ջարդը բըն— նող յանձնաժողովը եւ առաջին օրէնսդրական ակտը՝ մահուան պատժի վերացումը:—Մեծ եւ փոքր քառս: —Բռնի ոյժի չեղորացումը ընտրութիւններից:—Քառ— անդամ ընտրութիւնն է սեղ հարկաւոր:	112
14. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ. «Խանաբալա», «Կեանք», «Boston Armenia»	
15. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Թիւրքահայերի հարցը. նոր ճանապարհը: Լ. Ս.—ի	119
16. ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ Պ. Սըրապեանի	123
ՊՈՍՏ—ԱՐԿՂ	127
ՎՐԻՊԱԿՆԵՐ	127

Նոր շրջան VI տարի

Հրատ. XVIII տարի

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԵՐԵԿԱԿԱՆ ԵՐ ՊԵՂԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 7

Յ Ո Ւ Լ Ի Ս


1906



ԹԻՖԼԻՍ

Տպարան „ՀՐԱՊԷՍ“ Ընկ. Մագաթ. փող. 15.

1906



№ 7

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. ՎԵՐԱԾՆՈՒԱԾԸ, (գրածա 3 դործ.) Լեւոն Մանուէլեանի 5
- 2 ԷԼԵԴԻԱ, (ոտանաւոր) Վալ. Տ.—Դր -ի 52
3. ՃԵՄԱՐԱՆՑՈՒ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ, Արզումի 53
4. ՄԵՂՄԱՑՈՒՑԻՉ ՊԱՐԱԳԱՆԵՐ, (պատմ. Մորիս Լըվէլի
Թարգմ. Ա. Շահէլի 62
5. ՖԻՆԼԱՆԴԻԱ Ն.-ի 68
6. ՍԵՐՈՒՆԴՆԵՐ, ոտանաւոր Լեւոն Մանուէլեանի 81
7. ՊԵՐՃԱԽՕՍ ԹՈՒՆԵՐ ԵՒ ՈՒՇԱԳՐԱՒ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ, Սալլիսիանի 82
8. ԵԹԷ ՅՈԳՆԵՑԻՐ ԿԵԱՆՔԻ ՄԷՉ ոտան. Լեւոն Մա-
նուէլեանի 88
9. ՄՕՏԻԿ ԱՆՑԵԱԼԻՑ, Անկարի 89
10. ԿԱՐԼ ՄԱՐԲՍԸ ԵՒ ՄԱՐԲՍԷՉՄԸ, Բ. Իշխանեանի 95
Քաղ.-սոց. բրոշ'ւրների երեք հրատարակումներ.—
Ատրպետի՝ «Հոլատիւրումիւնը» Մ. 107
11. ԲՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ. — 109
12. ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԴՐՔԵՐ
13. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Դումայի պատմական միասին:
—Ուրուսովի մերկացումները, Բեյոստովի ջարդը բըն-
նող յանձնաժողովը եւ առաջին օրէնսդրական ակտը՝
մահուան պատժի վերացումը:—Մեծ եւ փոքր քառս:
—Բռնի ոյժի չեղարացումը ընտրումիւններից:—Քառ-
անկամ ընտրումիւնն է սեղ հարկաւոր: 112
14. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ. «Խամաբալա»,
«Կիանք», «Boston Armenia»
15. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Թիւրքաձայերի հարցը. նոր
ձանադարհը: Լ. Ս.-ի 119
16. ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ Պ. Սըապեանի 123
ՊՈՍՏ-ԱՐԿՂ 127
ՎՐԻՊԱԿՆԵՐ 127

19. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ	128
20. ՅԱԽԵԼՈՒԱԾ I -ին. Ջէյմս Մորիէր՝ «ՀԱՁԻ ԲԱՅԱՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ», վէպ պարսկ. կեանքից, թարգմ. անգլ. Մ. Կարապետան	255—270
21. ՅԱԽԵԼՈՒԱԾ II-րդ, ԼէՕի ՎԱՅՈՅ ՀԱՐՑԸ	33—64

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից՝ գրել պարզ մտնաւանդ բուերը, յատուկ անուններն ու օտար բառերը, եւ թերթի միայն մի երեսի վրայ. առանձնապէս ուշ դարձնել կէտադուրեան, ուղղադուրեան եւ նոր պարբերութիւնները որոշակի լինելու վրայ: Թարգմանութեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեանը նաեւ բնագիրը:

2. Չընդունուած մեծ յօդուածները պահուած են խմբագրատանը 6 ամիս, իսկ յետոյ ոչնչացնուած են: Ձեռագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը: Փոքր յօդուածներն ու ոտանաւորները չեն վերադարձնուում:

3. Դրուածքների վարձատրութեան չափը որոշում է խմբագրութիւնը: Խմբագրութեան առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները համարւում են անվճարելի:

4. Խմբագրութիւնն իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:

5. «Մուրնի» համարը չստացուելու դէպքում պէտք է խմբագրութեանը տեղեկութիւն տալ ոչ ուշ, քան յաջորդ համարի լոյս տեսնելը:

6. Խմբագրութեանը դանազան հարցումներով դիմող անձինք պէտք է պատասխանի համար ուղարկեն նամակագրոջմ կամ պոստային Բլանկ:

7. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպէկի Հասցէի փոփոխումը պէտք է ստացուի իւրաքանչիւր ամսի 10-ից ոչ ուշ, որպէսզի առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցէով: Նոր հասցէի հետ պէտք է այտնել նաեւ հին հասցէն:

ՎԵՐԱԾՆՈՒԱԾԸ

(Դրամա 3 զործողութեամբ)

Լ Ե Ի Ո Ն Մ Ա Ն Ո Ի Է Լ Ե Ա Ն Ի

Առաջին ներկայացման համար *)

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Աննա, հասակն առած կին	. . .	օր. Աւալեան
Տիգրան	}	նրա որդիքը . . . պ. Ն. Յովհաննիսեան
Սամսոն		. . . պ. Մ. Մանուկեան
Հրանոյշ	}	նրա աղջկերքը . . . ա. Սիրանոյշ
Վարդուշ		. . . ա. Օհաննիսեան
Զաքո, միջնորդ		պ. Կիրակոսեան
Արամեան, դերասան		պ. Յ. Սևումեան
Ալեքսան, ծառայ		պ. Մանուկեան

Անցքը ժամանակակից է և տեղի է ունենում Կովկասի մեծ
քաղաքներից մէկում:

*) 1906 թ. Յունուարի 7-ին, Ալեքսանդրապոլի ժողովրդական տան
շինութեան մէջ:

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ

Մի հիւրասենեակ, որի կահ-կարասին փափուկ է և կահաւորութիւնն առհասարակ շքեղ, մինչև իսկ փարթամ, բայց համառ, — ապացոյց, որ մենք զանաւոր ենք նախկին հարստի տան մէջ: Աջակողման և ձախակողման զոները տանում են զէպի բնակարանի ներսը, իսկ ձախտի դուռը գլխաւոր մուտքն է:

Ժամանակը — առտու:

• Հրանդշը նստած է ըագմոցի վրայ և գիրք է կարդում: Քիչ յետոյ մանում է Արամեանը, որը շտապում է օրիորդին բարեկու:

Տ Ե Ս Ի Լ 1.

Հրանդշ, Արամեան.

ԱՐԱՄԵԱՆ. Օրիորդ Հրանդշ, յարգանքս:

ՀՐԱՆՈՅՇ. Բարև ձեզ, պարոն Արամեան:

ԱՐԱՄԵԱՆ. Ես ձեզ խանգարեցի:

ՀՐ. Ո՛չ, նստեցէք խնդրեմ:

ԱՐ. Ի՞նչ էիք կարդում: Երեւի, վէպ է:

ՀՐ. Ո՛չ, «Օրլէանի կոյսը»:

ԱՐ. Ա՛, լաւ բան է: Բայց մի՞թէ դեռ նոր էք կարդում:

ՀՐ. Ո՛չ, բայց ես շատ եմ հաւանում այս գիրքը: Կարդում եմ, չեմ կշտանում: Մի քանի տեղեր մինչև անգամ անգիր եմ արել:

ԱՐ. Զլինի՞, օրիորդ դուք մտադիր էք կատարել այդ գերը:

ՀՐ. Ներեցէք, ես այդպիսի յանդգնութիւն չունիմ:

ԱՐ. (Վիժաղում է) Իհարկէ, իհարկէ, ես կատակ եմ անում: Հո, այժմ մեր գործից խօսենք: Հիմա դուք կը մտածէք, սրա կամ ադն է պակաս, կամ մաղը, որ էլի...

ՀՐ. Երեւի դարձեալ ներկայացում:

ԱՐ. Այո, օրիորդ Հրանդշ, դարձեալ ներկայացում: Եւ ես եկել եմ ձեզ մօտ յատկապէս նրա համար, որ խնդրեմ ձեր բարեհաճ մասնակցութիւնը:

ՀՐ. Ի՞նչ պիէս էք ընտրել:

ԱՐ. Մի նոր պիես է, և դուք մի շատ լաւ գեր ունիք: Ես վստահ եմ, որ դուք կ'արդարացնէք մեր յոյսը: Շատ աղ-

դու և շնորհապարտ դեր է և ձեզ միջոց կը տայ այս անգամ ձեր բոլոր բեմական ձիրքը փայլեցնել բեմի վրայ:

ՀՐ. Իսկ եթէ իմ ոյժից վեր լինի այդ դերը...

ԱՐ. Ամենեին ոչ: Ձեռք չափած է ձեզ համար: Կարծես հեղինակը ձեզ է ունեցել աչքի առաջ այդ դերը գրելիս:

ՀՐ. Եթէ պատասխանատու դեր է, ես վախենում եմ փր-
ջացնեմ:

ԱՐ. Համեստութիւնը մի կողմ, օրինդ: Ես կարող եմ կո-
րաշխատել, որ դուք շատ լաւ կը տանէք այդ դերը:

ՀՐ. Բայց ես դեռ այնքան անփորձ եմ: Հազիւ մի քանի անգամ բեմ ելնել, իբրեւ սիրողուհի, և յանկարծ ստանձնել մի այլքան պատասխանատու դեր, այն էլ նոր պիեսի մէջ, դա, ինձ թոււմ է, մինչև անգամ յանդգնութիւն իմ կողմից:

ԱՐ. Օրինդ, իրաւ է, կան այնպիսի անշնորհքներ, որոնց բեմ դուրս դալը առհասարակ յանդգնութիւն է. բայց ում տը-
րուած է ընդունակութիւն, արդէն յանցանք է թաղցնել իր քանքարը, նման ժլատին, որ իր գանձը թաղում է հողի տակ: Երբ դուք առաջին անգամ բեմ դուրս եկաք և այն ոչ փայլուն դերի մէջ, դուք միանգամից գրաւեցիք հասարակութեան հո-
մալըութիւնը: Ձեր մասծուած խաղը, ձեր մաքուր ձայնը, ձեր չափաւոր շարժումները—այնքան դուր եկան հանդիսական-
ներին, որ ձեզ հինգ-վեց անգամ ուկերուած դուրս կանչեցին: Դա մի պատիւ է, որին արժանացնում են միայն ճանաչուած և տաղանդաւոր արտիստներին: Պարզ է, ուրեմն, որ դուք ու-
նիք անուրանալի ձիրք կամ գուցէ և տաղանդ:

ՀՐ. (շոյուած և ուրախ) Օ, մինչև անգամ տաղանդ...

ԱՐ. Այո, այո, մինչև անգամ տաղանդ... Տաղանդը, կար-
ծում էք, պողաւմը է լինում: Այո, դուք ունիք տաղանդի բոլոր նշանները, որ միայն փորձառութեան է կարօտ, որպէսզի դար-
գանայ: Եւ սա միայն իմ կարծիքը չէ: Միթէ լրագիրները հո-
մարեա նոյն կտրծիքը չյայտնեցին ձեր մասին:

ՀՐ. Գիտէք, պարոն Արամեան, ես, իհարկէ, ուրախու-
թեամբ կը վերցնէի ձեր առաջարկած դերը... Դա ինձ համար էլ մեծ բաւականութիւն է... Ես ձեզ, կարծեմ, առաջ էլ ասել եմ, որ ես թատրոնի սիրահար եմ, որ թատրոնից աւելի ըստ-
ձքը զուարճութիւն չկայ ինձ համար, բայց...

ԱՐ. Բայց ի՞նչ:

ՀՐ. Մեծ հարց է—ի՞նչպէս կը վերաբերուեն իմ տանեցիք:

ԱՐ. Միթէ նրանք կարող են հակառակուել:

ՀՐ. Ես կարծում եմ: Անցեալ անգամ ի՞նչ զժուարու-
թեամբ կարողացայ համոզել մօրս, իսկ մեծ եղբայրս ուղղակի

դէմ էր. ես դուրս եկայ բեմ նրա կամքի հակառակ, և դրանից յետոյ նա մի ամբողջ շաբաթ էլ ինձ հետ չէր խօսում:

ԱՐ. Ջարմանալի է, ճշմարիտ: Որ ձեր մայրը ձեզ այդ արգելում է, այդ դեռ հասկանալի է. ինքը պառաւ կին, հին հասկացողութիւնների տէր, նախապաշարուած, ասէկօսէներից վախեցող... Իսկ ձեր եղբայրները... Նրանք հօ երիտասարդ մարդիկ են, իրանք էլ երբեմն յաճախում են թատրոն. քիչ թէ շատ, երեւի, հասկանում են թատրոնի նշանակութիւնը, նրանք ինչու պէտք է դէմ լինեն, ասացէք խնդրեմ, ես այդ չեմ հասկանում...

ՀՐ. Գիտէք, դերասանի և դերասանուհու անունը առհասարակ կոտորում է մեզանում...

ԱՐ. Այո, ճշմարիտ է, բայց...

ՀՐ. Դրանք չեն կարող հաշտուել այն մտքի հետ, որ կարելի է լինել դերասան, կամ դերասանուհի և մնալ միևնոյն ժամանակ ազնիւ և պատուաւոր:

ԱՐ. Ինչպէս էլ լինի, օրիորդ, դուք պէտք է վերցնէք այս դերը: Շատ և շատ խնդրում եմ: Դուք կարող էք ձերոնց հեշտութեամբ համոզել: Դժուարը առաջին անգամն էր...

ՀՐ. Կ'ուզէ՞ք, ես կանչեմ մօրս, և դուք նրան համոզեցէք:

ԱՐ. Ուրախութեամբ: Խնդրեմ:

ՀՐ. Ես—իսկոյն: (Գնում է.)

Տ Ե Ս Ի Լ 2.

Արամիան (մենակ):

Ջարմանալի է մեր բանը: Ինքը հասունացած աղջիկ, ընդունակ, թատրոնի սիրահար, կարող էր այնքան օգտուէտ լինել մայրենի բեմին, և պէտք է հպատակուի մի տգէտ պառաւի և մի տխմար հղբօր քմահաճոյքին... Որքան անմեղ ցանկութիւն և ինչպիսի՜ խօչնդոտներ... Այսքան էլ ճնշել մարդու անհատականութիւնը... Ջարմանալի է:

(Գտնում են Աննա և Հրանդը)

Տ Ե Ս Ի Լ 3.

Աննա, Հրանդ, Արամիան.

ԱՐ. Բարե ձեզ, տիկին:

ԱՆ. Բարով էք եկել: Համեցէք:

ՎԵՐՍՏՆՈՒԱԾԸ

ԱՐ. Տիկին, ես մի բան եմ խնդրելու, բայց չմերժե՞ք։
Շուտով մենք մի ներկայացում պիտի տանք։ Մի լաւ դեր կայ,
որ կամենում ենք առաջարկել օրիորդ Հրանդշին։

ԱՆ. Որդի, ի՞նչ էք տեսել Հրանդշից... Նա հօ դերասա-
նուհի չէ։

ԱՐ. Միրողների ներկայացում է, տիկին։ Դրա համար էլ
մենք դիմում ենք օրիորդին, իբրեւ լաւ սիրողուհու։

ԱՆ. Է՛հ, չէ, յարմարութիւն չկայ...

ԱՐ. Ի՞նչ էք ասում, տիկին։ Ինչ անյարմար բան կայ
այստեղ։ Օրիորդն ունի լաւ բեմական ձիրք, հիմնալի իսպառում
է, ամենքն հաւանում են... Եւ դուք նրան արգելում էք։

ԱՆ. Ախր ի՞նչ կարող է սովորել աղջիկս էդ ձեր թատ-
րոնումը։ Ես հոն թոյլ տամ աղջկաս էնքան բազմութեան ա-
ռաջ դուրս գալ բեմ, ծումուի, սրա նրա հետ սիլի-բիլի անի...
Մի անգամ որդիքս ինձ թատրոն տաւան։ Մի բան տեսայ—ա-
մօթից միտս թափուեց։ Մի աղջիկ դուրս եկաւ, առանց ամա-
չելու եկաւ, տղամարդու վզովը փաթաթուեց ու...

ԱՐ. Տիկին, այդ ձեռքնում են միայն, իսկապէս հօ չեն
սիրում իրար։ Կարող է պատահել, որ բեմի վրայ միմիանց
այդպէս փայփայող դերասանն ու դերասանուհին, բեմի ետեւ
իրար հետ չեն խօսում անգամ, իրար ատելով ասում են...

ԱՆ. Միենոյն է։

ԱՐ. Տիկին, ձեր երկիւղը միանգամայն անտեղի է։ Մենք
հօ չենք առաջարկում օրիորդին դերասանական խումբը մտնել,
դերասանների հետ մշտական ներկայացումներ տալ։ Սա մի
սովորական ներկայացում է, որին ժամանակցում են շատ պա-
տուական տներից կանայք և օրիորդներ։ Այս նախ և առաջ։
Յետոյ, բացի այդ, դերի մէջ էլ ոչ մի սիրային արկած չկայ.
եթէ փաթաթում և համբուրում է,— միայն իր ընկերուհու
հետ։ Ուրեմն...

ԱՆ. Գիտե՞ք, ինչ կայ։ Եթէ ես թողնեմ էլ, միենոյն է,
ախպէրբը չեն համաձայնի։ Նրանք չեն սիրում այդ տեսակ
բաներ։

ԱՐ. Այդ դէպքում ես կ'ուզէի խօսել նրանց հետ։

ԱՆ. Հիմի ոչ Տիգրանն է տանը, ոչ Սամսոնը։

ԱՐ. Այդ ոչինչ։ Ես կը գամ երեկոյեան կամ, եթէ չկա-
ջողացայ, վաղը։ Կարելի՞ է։

ԱՆ. Ինչու չէ։

ԱՐ. (Վեր կենալով) Ուրեմն ց'տեսութիւն։

ԱՆ. Գնաք բարով։

ԱՐ. (Որ. Հրանդշին) Օրիորդ, դուք էլ հողը պատրաստեցէ՛ք։

ՀՐ. Դժբախտաբար, ինձանից ոչինչ չէ կախուած:
ԱՐ. Ես յոյսս չեմ կորցնում: Յ'տեսուեթիւն: (Գնում է):
ՀՐ. (Խէթ նայելով մօրը) Դուք միշտ այդպէս էք: (Գնում է):
ԱՆ. Էդպէս որ աչքերդ չոեցիր վրաս, ես էլ քեզանից
վախեցայ, չէ: Ի՞նչ գարդը—բո՞ւ գարդը: (Մտնում է Տիգրանը):

Տ Ե Ս Ի Լ 4.

Աննա, Տիգրան.

ՏԻԳ. Մայրիկ, Ձաքօն չի՞ եկել:
ԱՆ. Ո՛չ, չի եկել: Տիգրան, հիւսիս տեսար դրանը:
ՏԻԳ. Ոչ որի: Ո՞վ էր այստեղ:
ԱՆ. Արամեանը:
ՏԻԳ. Դերասանը: Ինչի՞ համար էր եկել:
ԱՆ. Էլ ինչի՞ համար կը գար:
ՏԻԳ. Ձլինի էլի դեր էին բերել:
ԱՆ. Բաս ինչ: Ներկայացում ունին, ուզում են Հրա-
նոյշին դեր տան...
ՏԻԳ. Ա՛հ, ես դրանց... Մայրիկ, տես, մի բան է ասում
եւ, դրանք վերջի վերջոյ Հրանոյշին խելքից հանելու են: Վա՛,
սո՞ ինչ բան է, ցած կտմար են դտել... Կարծես էլ ուրիշ աղ-
ջկերք չկան, հէնց մենակ Հրանոյշն է... Ձանձրացրին, վերջա-
պէս...
ԱՆ. Ես տեղեակ չէի: Հրանոյշը եկաւ թէ, մայրիկ, բեղ
մարդ է կանչում: Ես էլ միամիտ եկայ էստեղ, տեսնեմ—մեթ
անբեղ անմօրուք սլարոն դերասանը առաջին կանգնեց:
ՏԻԳ. Յետո՞յ... Դու իհարկէ, մերժեցիր նրան:
ԱՆ. Ես չէի համաձայնում: Բայց էնքան խնդրեց, էնքան
աղաչեց, որ դուռստն ասած, երեսս չկտրեց, որ չէ ասէի: Ես
պատասխան տուի, որ Տիգրանը գիտէ, նրա բանն է, կը գաջ
—կ'ասեմ, կ'ընդունի, լաւ, չի ընդունի, ինքը գիտէ:
ՏԻԳ. Է՛հ, ես զարմանում եմ բեղ վրայ: Էլ Տիգրանն
ինչացի՞ էր: Հարկաւոր էր կտրուկի մերժել, որ էլ չհամարձա-
կուի մեղ ձանձրացնել... Էլ ի՞նչ դարդ... Մեր հոգսը հէնց դրանց
ներկայացումն է... Ձեւ իմանում, ինչպէս անենք, որ շուտ տեղ
անենք խեղճ աղջկան... հասակն անց է կենում, գնայ իր հա-
մար տուն ու տեղ սարքի... Մենք էլ մի քիչ թեթեւանա՛նք մը-
տածմունքից... Սրանք եկել են դես նոր նոր բաներ են սար-
քում... Ի՛նչ գիտես, որ հէնց յժա համար չէ, որ էսքան ժա-
մանակ ուզող չեղաւ ու տանը մնաց... Հազիւ մեղ մի քիչ մո-

նացել էին: Հիմա եկ ու նորից բամբասանքի տակ գցիր խեղճ աղջկան...

Ան. էլ ասում ես, որդիս: Դրա դարձը ջանս առել է: Ախր մինչև երբ պիտի մնայ տանը: Ախ, մի տեղ անենք նրան, հենց կ'իմանամ—սրտիս ծանր քարը վեր ընկաւ:

ՏԻԳ. Ձեռն հասկանում, թէ Ջարօն ինչու ուշացաւ, մի լուր չբերաւ...

Ան. Ի՞նչ կ'ասի, որ չի հաւանի: Ի՞նչ պակաս աղջիկ է Հրանոյշը: Հնա, մատա խուփ, մի քիչ համարձակ է: Բայց հիմիկուայ ժամանակում ճի աղջիկը չի համարձակ:

ՏԻԳ. (Որ առանց մօրը լսելու մտախոհ անց ու պարօ է անում): Մայրիկ համբերութիւնս չի տալիս սպասեմ: Ես գնում եմ Ջարօի մօտ:

Ան. Ինչ կայ, որ... Գնա՛ մի բան խմացիր, որ մենք էլ միամտուենք:

ՏԻԳ. Այո, գնամ, գնամ: (Կամենում է գնալ):

Ան. (Մի բան յիշելով) Հնա, կնոջ, Տիգրան: Բան եմ ասում: Ձեռքիդ փոշ կայ:

ՏԻԳ. Շատ է հարկաւոր: Ինչի համար ես ուզում:

Ան. Աղջկերքը նոր շորեր պիտի կարել տան:

ՏԻԳ. Նճր շորեր... Վն, մի ամիս էլ չկայ, որ երկուսին էլ ոտից մինչև գլուխ նորոգեցինք: Հիմա վարձեալ նո՞ր շորեր... Ուզում են դիւծինը լրացնեն, թէ մօղան է փոխուել...

Ան. Որդիս, վերջին կարածը հասարակ բան էր:

ՏԻԳ. Հիմա շքեղն են կամենում, ուզում շիկ անել, հա՛... Կնա, էլ ի՞նչ դարձ: Դրանք շիկ անեն, մեր ջանը դուրս գայ:

Ան. Ինչ արած, օտարներ չեն, ձեր քոյրերն են: Նրանք վատ հագնուեն, ամօթը մենակ նրանցը չէ, իմն էլ է ու ձերն էլ է:

ՏԻԳ. Մայրիկ, ես ոչինչ չուսիմ դրա դէմ: Թո՛ղ լաւ հագնուեն, թո՛ղ մախմուր ու ապրեշուսի մէջ ֆրֆուան... Բայց դրան էլ հասցնող է պէտք թէ ոչ: Փառք Աստծու. մեր հայրը հազարներ չի թողել բանկում: Ձեզ էլ յայտնի է, որ այս տանը ընդամենը երկու աշխատող ձեռք կայ միայն—եւ եմ ու Սամսոնը:

Ան. էլ ճարներս ինչ, որդիս: Ընկել էք—պիտի տանէք: Էսօր էգուց է դրանցը: Աստծով, երկուսին էլ տեղ կ'անենք, դրանց հոգսիցը կ'ազատուենք ու նրանից յետ՝ Աստուած ուղործած է:

ՏԻԳ. Ուղիղ ես ասում, մայրիկ: Հենց այդ յոյսն է, որ ինձ պահում է: Թէ չէ—այստեղ է հասել է', մայրիկ:

Ան. Թէ փողի մասին է խօսքդ, որդիս, մի՛ տա: Քեզ չեմ զօրուում... Քո բարի կամքն է:

Տիգ. Է՛հ, քո բարի կամքը... Կարծես, իմ խօսքը հիմի-կուայ մասին է: Ա՛ն ինչքան գրպանուծս կայ: Տուել եմ ու կը տամ էլ ու ջանս էլ դուրս կը գայ: Իմ զարդը իմ ապագայի մասին է:

Ան. Դարդ մի՛ անի, որդիս: Ապագագ լաւ կը լինի:

Տիգ. Մօտս հիմա քսան մանէթ կայ: Իհարկէ, դա բաւա-կանութիւն չի անելու, յետոյ էլի կը տամ: Ես գիտեմ, որ մի այգքան էլ և զեռ աւելի գնալու է կարել տալուն, զանազան հաշիւաների, արդ ու զարդի... Դւանց շորը ինձ նստելու է պակասը մի ութսուն բուրլի փող: Աստուած վերջը բարի անի:

(Գնում է: Գնում է: Վարդուշ):

Տ Ե Ս Ի Լ 5.

Աննա, Վարդուշ.

ՎԱՐԴ. Մայրիկ, տու՛ց փողը:

Ան. Տուեց, տուեց:

ՎԱՐԴ. Ի՞նչքան է:

Ան. Քսան մանէթ:

ՎԱՐԴ. Քսան մանէթ... ֆիւ. զնա ու քսան մանէթով բան առ:

Ան. Բաս ի՛նչքան էիր ուզում: Արշինը տասը մանէթա-նոց կտօ՞ր պիտի առնէք:

ՎԱՐԴ. Օ՛հ, ի՛նչ ժլատն է մեր Տիգրանը... զողում է փողի վրայ, զողում է... Սամսոնը էլի լաւ է...

Ան. Աղջի՛, ախպրքդ խալնի՞ վրայ են նստած, որ էդպէս մեծ մեծ խօսում ես: Դու մի հաշիւել ես, թէ տարեկան ինչ-քան փող է գնում հէնց մենակ ձեր երկուսիդ շորերի վրայ:

ՎԱՐԴ. Մեծ բան է մի քանի հարիւր մանէթը:

Ան. Էդ փողը ախպրքդ էսպէս են դատում, է՛: (Յոյց է տալիս, որ քրտինք չ'սրբում): Քեզ համար էդ թշինչ:

ՎԱՐԴ. Էլ ի՛նչ եղբայրներ են, եթէ իրանց բոյրերի հա-մար պիտի խնայեն...

Ան. Վա՛յ քու խելքին, Վարդուշ... Սկի բան չեմ հասկա-նում... Ոնց որ մի միամիտ երեխայ:

ՎԱՐԴ. Շատ լաւ էլ հասկանում եմ:

Ան. Դու կարծում ես, ախպրքդ պարտակմն են, հա՛, որ մինչև վերջը ձեր հոգսը քաշեն:

ՎԱՐԴ. Իհարկէ, պարտական են:

ԱՆ. Դու որ յիմար չլինես, էդ խօսքը կ'ասեմ:

ՎԱՐԴ. Մայրիկ, ի սէր Աստուծոյ, բաւական է: Ձեռ իմանում ինչ է պատահել քեզ: Մի քանի մանէթ փող էր տալիս, մեր քթածակերիցը քիչ է մնում հանէք: Ձեր կամենում, մի տուէք: Խնդրող չկայ:

ԱՆ. Ա՛ռ, ա՛ռ: Խելքիդ աղ անեմ:

ՎԱՐԴ. Սա հերիք չէ: Շատ կը պակսի:

ԱՆ. Էլի է տալու, աղջի: Դեռ դնացէր առաջ կտորներն առէք... Ա՛յ, ես Հրանոյշին էլ կ'ասեմ, միասին դնացէք: (Վտանալով դրանք): Հրանոյշ, էստեղ արի:

(Վտանում է Հրանոյշը):

Տ Ե Ս Ի Լ 6.

Աննա, Հրանոյշ Վարդանուշ:

ԱՆ. Տիգրանը փող տուեց, որ ձեզ համար շորեւ կարել տաք: Պատրաստուեցէք, որ դնար:

ՀՐ. Ես չեմ դնալու: Թող Վարդուշը մենակ դնայ:

ԱՆ. Ինչո՞ւ:

ՀՐ. Այնպէս: Ձեռ կամենում:

ՎԱՐԴ. (Խողովով) Ձեռ կամենում:

ՀՐ. (Խէթ նայում է քրքր):

ԱՆ. Դէհ արի ու հաւատա՛: Աղջկայ ձեռը փող տառ, որ գնա իր համար լաւ շորեր առնի. նա կանգնի, թէ «չեմ կամենում»:

ՎԱՐԴ. Ինձանից էլ շատ է ուզում:

ՀՐ. Ուրիշներին քո արշինով մի չափիր:

ՎԱՐԴ. Քեզ հետ խօսող չկայ:

ԱՆ. Շատ հարկաւոր է, թէ չես առնի: Կարծում է աղանք պիտի անենք:

ՀՐ. Ես այդպիսի բան չեմ կարծում: (Կամենում է հեռանալ):

ԱՆ. (Պահում է նրան) Աղջի, ինչո՞ւ ես էդպէս ծռուել: Ի՞նչ է պատահել, որ երէկուանից դէսը սկսւում ես կնքան, որ հետը խօսել չի լինում:

ՀՐ. Ինձանից էլ լաւ գիտես, թէ ինչ է պատահել:

ԱՆ. Մի լաւ տեղից քեզ ուզող կար, ես էլ տարայ քեզ ցոյց տուի: Սա ի՞նչ մի վատ բան է, որ զլխիս կրակ ես թափում:

ՀՐ. Երեւի, վատ բան է, որ ինձ վայրացնում է:

ԱՆ. Լաւ, ի՞նչդ պակսեց: Ձառդ վիճր եկաւ:

ՀՐ. Ձառս վեր չեկաւ, բայց ես գետինը մտայ ամօթից
այնքան հիւրերի առաջ:

ԱՆ. Ի՞նչ ամաչելու բան կար, որ...

ՀՐ. Դուք ինձ հաւատացնում էք, թէ բարեկամի մօտ հիւր
ենք գնում, այն ինչ խարելով տանում էք ինձ և, ինչպէս ապ-
րանք, ինչպէս մի ծախու ձի, ցոյց էք տալիս, այն էլ ո՛ւմ—
մի տգէտ և ապուշ մարդու:

ԱՆ. Ձէ՛նդ: Ապուշը հէնց դու ես, որ է՛ն պատուական
մարդուն չես հաւանում:

ՀՐ. Պատուական մարդ... Հն-հն-հն... էլ պակասութիւն
չունի... Ո՛րկի է, հսկի...

ԱՆ. Բաս ի՞նչ: Քեզ լայեղ չէ՞:

ՎԱՐԴ. Ես զարմանում եմ... Ի՞նչ պակաս մարդ է որ...

ՀՐ. Այ՛ո: Այդքան հաւանում ես... Ուրեմն ինքդ առ: Ես
քեզ նրան ուրախութեամբ զիջանում եմ:

ՎԱՐԴ. Նա քեզ է ուզում, ոչ թէ ինձ:

ԱՆ. Աւելի լաւ կ'անես, փառք տաս Աստծուն, որ վեր-
ջապէս բախտդ բաց արեց, ոչ թէ...

ՀՐ. Ի՞նչ բախտը... (Ծիծաղելով հեռանում է:)

ՎԱՐԴ. Մայրիկ, Ձաքօն, Ձաքօն եկաւ: (Գնում է: Մտնում
է Ձաքօն:)

Տ Ե Ս Ի Լ Դ.

Աննա, Ձաքօ.

ՁԱՔՕ. Բարո՛ւ, բեռակին:

ԱՆ. Բարով եկար, Ձաքօ: Տիգրանին չտեսա՞ր:

ՁԱՔՕ. Չեմ տեսել:

ԱՆ. Նա քեզ մօտ գնաց:

ՁԱՔՕ. Ես փեսացուի մօտիցն եմ գալիս:

ԱՆ. Փեսացուի՞... Հը՛, ի՞նչ բարի համբաւ:

ՁԱՔՕ. Բարի համբաւ որ շինի, Ձաքօն ի՞նչ է շինում
էստեղ:

ԱՆ. Նստի՛ր, Ձաքօ, համեցէք, բեզարած կը լինես:

ՁԱՔՕ. (Նստում է) Էս ծերութիւնն էլ մի բան չի եղել.
բեռակին: Մարդ շատ շուտ դադրում է:

ԱՆ. Ես էլ հէնց քո օրին եմ, Ձաքօ:

ՁԱՔՕ. Է՛հ, յետոյ, բեռակին, մի ասա տեսնեմ, ինչ էք
խոստանում ինձ, եթէ էս բանը զրատեմ:

Ան. Թող մի գլուխ գայ բանը, Զաքո, ազիզ որդոցս արևը
գիտենայ, քեզ էնպէս լիացնենք, որ...

ԶԱՔՕ. Ինչ մնում է բանը գլուխ դալուն, քեռակին, բա-
նը գլուխ եկած վերջացած համարի:

Ան. Աղջկան հաւանք է:

ԶԱՔՕ. Հաւանել է, թէ խօսք է: Նրա խելքը, նրա վա-
րուեցողութիւնը, նրա ճարտար խօսելը, ճշմարիտ եւ ասում,
քեռակին, փեսացուն հիացրել են: Գիտե՞ս ինչ էր ասում:
«Իմ բոլոր կարողութիւնն, ասում էր, էդ աղջկան հալաւ է»:

Ան. Հէնց Բդպէս էլ ասաց:

ԶԱՔՕ. Իսկ և իսկ նրա խօսքերն եւ կրկնում:

Ան. Փառք Ստեղծողին: Աստուած քեզ բարի տայ, Զաքո,
որդոցդ առաջը բերի:

ԶԱՔՕ. Ձէ, աղջկադ բախտը լաւ բանեց:

Ան. Շնորհակալ եմ: Էս քո հունարն է, Զաքո:

ԶԱՔՕ. Ինձ Զաքո կ'ասեն: Իմ ձեռքով կարգուածը բախ-
տաւոր կը լինի: Սաղ քաղաքն էլ գիտէ, որ Զաքօի ոտը թեթեւ է:

Ան. Ես միայն մի բանից եմ վախենում:

ԶԱՔՕ. Ի՞նչ բանից:

Ան. Զաքօ, յանկարծ չվերկենայ փեսացուն ու փողի ա-
նուն տայ:

ԶԱՔՕ. Մտքովդ էլ չանց կացնես:

Ան. Ասենք, աղջկայ վրայ լաւ բաժինք կը տանք...

ԶԱՔՕ. Էդ էլ ձեր դիտնալու բանն է: Բաժինք կը տաք,
ձեր աղջկան կը տաք, չէք տայ, փեսացուն այնուհետ էլ չի գցէ.
Էդ կողմից միամիտ կացէք: Նա ձեզանից ուրիշ ակնկալութիւն
չունի: Լաւն էն է վճռենք, թէ երբ, ո՞ր օրը փեսացուն դայ
նշանը բերի:

Ան. Որդիքս էլ տանը չեն, առաջ մի խորհուրդ անենք,
յետոյ:

ԶԱՔՕ. Վնաս չունի, խորհուրդ արէք: Միայն մի բան եւ
խնդրում, քեռակին, ինչ որ վճռելու լինէք, ինձ շուտ իմաց ա-
րէք, որ ես էլ փեսացուն յայտնեմ:

Ան. Զենք ուշացնի, Զաքօ: Էսօր և եթ:

ԶԱՔՕ. Շատ բարի: Հիմա ես գնամ: Ծառայութիւն:

Ան. Գնաս բարով: Խէրով լինի ոտդ:

(Զաքօն դնում է: Մտնում է Վարդուշը դրսի զգեստով:)

Տ Ե Ս Ի Լ 8.

Աննա, Վարդուշ:

ՎԱՐԴ. Մայրիկ, ես գնացի:

ԱՆ. Բաս Հրանոյշը:

ՎԱՐԴ. Նա չի գալիս:

ԱՆ. Գլխի վրայ կը գայ: Զի գալիս: Հրանոյշ:

Հրանոյշի ծայնը. (միւս սենեակից): Հրանոյշին հանդիստ թողէք:

ՎԱՐԴ. Տեսնո՞ւ: Դու նրան նո՞ր ես ճանաչում: Նա իր թը-
քածը չի լիզի: Ասաց «չեմ գալու»—վերջացաւ:ԱՆ. Զի գալիս, թող չգայ: Դու էլ վնաս քեզ համար մի
էն տեսակ հիանալի կտոր առ, որ տեսնի—աչքը դուս գայ:

ՎԱՐԴ. Իհարկէ, հէնց այդպէս էլ պիտի անեմ:

(Գնում է: Մտնում է Տիգրանը):

Տ Ե Ս Ի Լ 9.

Տիգրան, Աննա:

ԱՆ. Զուր տեղը գնացիր, Տիգրան: Զաքոն քիչ առաջ էս-
տեղ էր:

ՏԻԳ. Հը, ի՞նչ էր ասում:

ԱՆ. Փեսացուն, ասում է, շատ հաւանել է Հրանոյշին,
խելը գնացել է:

ՏԻԳ. Նշանը մեր է տալիս:

ԱՆ. Էդ մենք պիտի վճռենք:

ՏԻԳ. Ես կարծում եմ, հէնց այսօր կամ վաղն և եթ կա-
րելի էր: Քանի շուտ, այնքան լաւ:ԱՆ. Բաս փեսացուի մասին հաստատ տեղեկութիւններ
չհաւաքե՞նք, յետոյ:

ՏԻԳ. Ի՞նչ տեղեկութիւններ ես ուզում:

ԱՆ. Ով գիտէ, է, հազար ու մի բաներ են ասում:

ՏԻԳ. Օրինակ:

ԱՆ. Լսեցի, որ իբր թէ պարտքեր շատ ունի:

ՏԻԳ. Բայց որ պարտքերի գիմաց հարիւր հազարի կայ-
քեր ունի, այդ չէ՞ս լսել:ԱՆ. Յետոյ, իբր թէ մի ժամանակ կտոր է ընկել ու
բանտումը նստել...

ՏԻՓ. Բան ասաց... Հիմա բանտումը չէ՞. Փառք Աստծու։
ԱՆ. Մէկ էլ թէ մաքուր ճանապարհով չի հարստացել ու
շատ խեղճերի է զրկել...

ՏԻՓ. Դէ հերիք է դա, մայրիկ։ Այնպէս խամ խամ խո-
սում է, կարծես աշխարհից բեխաբար լինի։ Իբր թէ քո որ-
դիքը շատ մաքուր ճանապարհով են մի երկու շահի ձեռքները
զցել։ Բաս ինչ է։ Մեռնեմ ես դրանց մաքուր ջանին... Չորս
կողմից խարէութիւն է, մայրիկ. ի՞նչ ես ասում։

ԱՆ. Ինչպէս կ'ուզես, որդիս։ Ուզում ես, հէնց վաղն ե
եթ ասենք նշանը բերի։

ՏԻՓ. Իհարկէ, էլ ի՞նչի համար ենք յետաձգում։

ԱՆ. Բոլորը եօլա կը գնայ, Հրանոյշն է մի քիչ չեմ ու
չում անում։

ՏԻՓ. Չեմ ու չում անում։ Ապա թող մի համարձակուի...
Հազիւ է բախտը բերել...

ԱՆ. Կանչէ՞մ գայ։

ՏԻՓ. Թող գայ, տեսներ։ (Աննան գնում է։)

Տ Ե Ս Ի Լ 10.

Տիգրան (Մենակ).

Ձէ, պէտք է վերջացնել։ Նրա խելքովն եմ ընկնելու, ի՞նչ
է։ Նա ի՞նչ իրաւունք, ինչ ձայն ունի այս տանը։ Չեմ-չում է
անում։ Ապա թող համարձակուի մի ինձ մօտ էլ չեմ-չում անել...

(Մտնում է Աննան, նրա ետեւից Հրանոյշը լուրջ եւ դժգոհ։)

Տ Ե Ս Ի Լ 11.

Տիգրան, Աննա, Հրանոյշ.

ԱՆ. Արի էստեղ, մեղ մօտ հասի՛ր-

ՀՐ. (Կարծես ականջ էլ չի դնում և շարունակում է խոսել)
րանցից քիչ հեռու։)

ԱՆ. Գիտես ի՞նչ կայ, Հրանոյշ։ Երեկուայ տեսածդ մար-
դը, բանից երեւում է, քեզ շատ հուսանել է. էսօր էլ մարդ է
զրկել մեղ մօտ ու քեզ ուզում է։

ՀՐ. Ուզում է, դուք էլ տուէք։

ԱՆ. Հէնց էդպէս էլ վճռել ենք։

ՀՐ. Այո՞, արդէ՞ն։ Ի՞նչ շուտ։

ԱՆ. Տես, Հրանոյշ, էլ չեմ-չում չանես, հա, թէ չէ, Աս-

ստուած է վկայ, Հստեղ է հասել, բանդ վառ կը լինի: Մեր փեսացուն...

ՀՐ. (Քրքշելով) Մեր փեսացուն... (Դարձեալ քրքշ):

ՏԻԳ. Հրանսյշ, զգոյշ կաց, որ այդ ծիծաղը լացի չփոխուի: Մենք այստեղ լուրջ գործի մասին ենք խօսում, դու բանը ծաղրի՞ս ես պցում: Մեր մտածմունքը, մեր հոգսը քո բախտաւորութիւնն է, իսկ դու կարծում ես հետզ կատակ ենք անում:

ՀՐ. Ես ձեզ վրայ դարմանում եմ:

ՏԻԲ. Ի՞նչ դարմանալու բան կայ այստեղ:

ՀՐ. Ձգիտեմ, ինձ ինչի տեղ էք դնում:

ԱՆ. Ախր ի՞նչ պակասութիւն ունի էն մարդը, որ էդպէս բարձրից ես խօսում: Մի քիչ տարիքով է, Էդ չէ մենակ: Էլ ուրիշ ի՞նչ պակասութիւն ունի, թէ զիտեա, աստ: Շէնք ու շնորհք ասեա, ունի, ինքը բոյ ու բուսածով, կարգին տղա՝ մարդ...

ՏԻԳ. Մայրիկ, ի՞նչ ես դատարկ բաների ետեից ընկել: Գլխաւորն այն է, որ փող կայ ձեռքին, փող, հարստութիւն...

ԱՆ. Ես էլ հէնց դրան էի պալիս: Ի հարկէ, ամենից գլխաւորը փողն է: Փողը որ կայ, ամեն բան կայ:

ՀՐ. Դուք ի՞նչու էք միասին աշխատում ինձ համոզել:

ՏԻԳ. Ի՞նչ է ասում...

ՀՐ. Միթէ չէք տեսնում, որ իմ և նրա մէջ ոչ մի ընդհանուր բան չկայ և չէ կարող լինել: Ե՞ս ով և նա՞ ով: Մենք օտար ենք միմեանց:

ԱՆ. Լսում ես, Տիգրան:

ՏԻԳ. Հ'ըմ... Յետոյ:

ՀՐ. Մի կողմ թողնենք նրա արտաքինը... որ վերին աստիճանի հակալրելի է, եթէ չտեսն' աւելին: Բայց գոնէ մարդու պէս կարողանայ երկու խօսք կապել իրար հետ—անսայգեքան զուրկ է նա մարդկային արժանաւորութիւնից: Նրբ նա սկսում էր խօսել, ես հաղիւ էի կարողանում պահել ծիծաղս:

ՏԻԳ. Յետոյ... էլ ի՞նչ ունիս ասելու:

ՀՐ. Շատ բան: Բայց ի՞նչ հարկաւոր է ասել: Բաւական է և այս, որ ես (չեշտելով) այդ մարդուն ոչ միայն չեմ սիրում, երեսը տեսնել չեմ կարող:

ՏԻԳ. Հա-ա՛:

ՀՐ. Այո, ես նրան արհամարհում եմ:

ՏԻԳ. Հիմա—կարելի է: Բայց յետոյ—կը սիրես:

ՀՐ. Ո՛չ մի ժամանակ:

ՏԻԳ. Իմ արեւը, քո արեւը—կը սիրես:

ՀՐ. Երբէք:

ՏԻԳ. Ես քեզ ասում եմ, կը սիրես, որովհետեւ մէջ-տեղ փող է զընդում, փող...

ԱՆ. Բաս դու չե՞ս լսել, որ ասում են. «Շատ մի սիրիր, ատել կայ, շատ մի ատիր, սիրել կայ»: (Կարճատեւ լուծիւն):

ՏԻԳ. Հապա ի՞նչպէս անենք, մերժե՞նք այն մարդուն: (Կրկին լուծիւն, Տիգրանը սխալմ է յուզուել) Ես քեզ բան եմ հարցնում:

ԱՅ. Աղջի, ինչո՞ւ ես պապանձուել...

ՏԻԳ. (Ձեռքը խփելով սեղանին.) Մի բան ասա, վերջապէս:

ՀՐ. Տէ՛ր-Աստուած, քանի՜ սնկամ ասեմ: Մի՞թէ պարզ չէ: Իհարկէ, մերժել:

ՏԻԳ. Մերժել... Ի՞նչ հեշտ վճռեցիր:

ԱՆ. Էս աղջկան մի հարցնող լինի, թէ դո՞ւ ով ես, դո՞ւ... Էնպէս է խօսում, կարծես շահագէթի թողը լինը: Էն մարդը, ուրիշ բան չէ, գոնէ ձեռին մի կարողութիւն ունի, մարդամէջ մի անուն ունի, բաս դու ի՞նչ ունես, որ էդպէս հպարտացել, հայիլ-մայիլ ես եղել վրադ... Փող ու բաժինքովդ ես պարծենում, տեանենք, թէ մի ուրիշ առաւելութեամբ, որ քիթդ էդքան վեր ես քաշել... Փառք Աստծու, մի հրեշտակի գեղեցկութիւն էլ չունես, որ ասեմ, հա՛, գրանով ես պարծենամ:

ՀՐ. Ես ոչնչով չեմ կամենում պարծենալ:

ՏԻԳ. Ձէ, Հրանդշ, չէ: Դու շատ թեթեւ աչքով ես նայում հարցի վրայ: Խօսքը քո ամբողջ ապագային է վերաբերում: Ձկարծես, որ այնքան էլ հեշտ բան է հիմիկուայ ժամանակում անփող աղջկան մարդու տալը... Եթէ հեշտ լինէր, դու վաղուց կարգուած կը լինէիր: Այն ինչ՝ ժամանակդ բաւական անց է կացել: Այժմ լաւ գէպը է ներկայացել: Հարուստ տեղից քեզ ուզող կայ: Եթէ ձեռքից տաս, իմացիր, որ բանդ պըծաւ: Այնուհետեւ նստիր ու սպասիր, թէ մի ուրիշ ուզող դուրս կը գայ:

ՀՐ. Շատ էլ չեմ ցաւի...

ԱՆ. Սքա ընկերները հիմի բոլորն էլ իրանց գլխի ճարը տեսել են: Ամեն մէկը մի օջախի տէր է դառել, ջուխտ-ջուխտ երեխաների մայրութիւն է անում, տուն ու տեղը կարգին սարքած՝ ինքն էլ մէջտեղ առօր փառօր բաղմել է, ու ոչ ոք նրանց չի ասում, թէ աչքիդ վերեւ յօնք կայ... Վա՛յ ինձ, վա՛յ ինձ. մենակ սա է մնացել էսպէս ձեռքը ծոցումը, հօբանց տանը նստած:

ՀՐ. (մի կողմ) Օ՛հ, միշտ և միշտ նախատի՛նք...

ՏԻԳ. Հրանդշ, դու արի՛ փեշիդ բարը վեր ածա՛ ու մեզ

լսիր: Ինչքան չլինի, մենք քեզանից աւելի շատ ենք ապրած, աշխարհիս Կարն ու բարին քեզանից աւելի լաւ ենք հասկանում: Քո մեծ սխալը նրա մէջ է, որ դու կարծում ես, թէ առանց փողի սէր կը լինի:

ՀՐ. Ա՛խ, Աստուած... Ինձ ոչինչ չէ հարկաւոր, ոչ փող, ոչ սէր. ինձ միայն հանգիստ թողէք, ես ձեզանից միայն հանգիստ եմ ինդրում: Վերջապէս... ես չեմ կամենում մարդու գնալ:

ԱՆ. Ո՞նց թէ չեմ կամենում մարդու գնալ...

ՏԻՓ. Դա էս տեսակ բան է, որ քո կամքին թողնենք:

ԱՆ. Քանի քաղցը կը խօսում հետը, էնքան ոտը առաջ է գնում:

ՏԻՓ. (Յուրամատը խփելով սեղանին) Հրանոյշ, ես ասում եմ, բանը համաձայնութեամբ վերջանայ, թէ չէ...

ՀՐ. Թէ չէ—բռնութեամբ կը վերջանայ:

ՏԻՓ. Ես քեզ խորհուրդ եմ տալիս, որ ընդունես:

ՀՐ. Շնորհակալ եմ խորհրդիդ համար: Բայց... Ձեմ կարող:

ՏԻՓ. Իսկ երբ մենք պահանջում ենք:

ՀՐ. Երբէք:

ԱՆ. Է՛սքան էլ ինքնատած:

ՏԻՓ. Լաւ իմացիր, Հրանոյշ, որ դու այս տան մէջ ոչ ձայն ունիս, ոչ իրաւունք և ոչ սեփական կամք: Ինչպէս կը կարգադրեն մայրդ և եղբայրներդ, այնպէս էլ կ'անես: Դու պարտաւոր ես հնազանդուել մեր կամքին! (Գնում է: Մտնում է Սամսոնը՝ կոկ հաղնուած, երեսը մտքուր ամիլած եւ բխիքը սրած ղ/պի տոտերը:)

Տ Ե Ս Ի Լ 12.

Աննա, Սամսոն, Հրանոյշ:

ՀՐ. Սամսոն, ես քեզ եմ դիմում, ի սէր Աստծոյ, պաշտպանիր ինձ... Սրանք ինձ կամենում են ստիպել, որ ես համաձայնեմ ընդունել... այն... այն... մարդու առաջարկութիւնը...

ԱՆ. Տես կարող ես, արտասուք թափի՛ր... Արտասուքիդ նայող չկայ:

ՍԱՄՍ. Հրանոյշ, մի՞թէ նա այնքան վատ է, որ դու...

ՀՐ. Այո՛, ես նրան երբէք չեմ կարող սիրել:

ՍԱՄՍ. Բայց դու պատճառ չունիս չսիրելու:

ՀՐ. Ես նրանից—խորշում եմ:

ՍԱՄՍ. Հիմք չունիս խորշելու:

ՀՐ. Սամսոն, ես գլուխ եմ նրանից, հասկանում ես դու
այս խօսքը:

ՍԱՄՍ. Իզո՛ւր, իզո՛ւր:

ՀՐ. Ես նրա հետ չեմ կարող մի օր ապրել:

ԱՄՄ. Շատ լաւ էլ կարող ես, փառաւոր կերպով:

ՀՐ. Ախ, Աստուած, սրանց խօսքը մէկ է երևում: Ես բո-
լորովին մենակ եմ և անպաշտպան...

ՍԱՄՍ. Հրանոյշ, դու գուր ես հակառակուում...

ՀՐ. Սամսոն, ուրեմն դժւ էլ սրանց հետ ես... բոլորդ
էլ իմ գէմ...

ՍԱՄՍ. Այո, որովհետեւ մենք բոլորս էլ քո բարին ենք
ցանկանում: (Գնում է):

ԱՆ. Կեանք: Յոյսդ Սամսոնի՞ վրայ էր: Դէ հիմի նստիր
ու խելքդ գլուխդ հաւաքիր: (Գնում է: Հրանոյշը մնում է մենակ):

Տ Ե Ս Ի Լ 13.

Հրանոյշ (մենակ)

Օհ, այս ի՞նչ կրակի մէջ ընկայ ես:—Մինչեւ երբ ես ստի-
պուած պիտի լինեմ մաքաւել սրանց հետ անձնական երջան-
կութեանս համար: Բայց ի՞նչ եմ ասում: Մի՞թէ միայն անձ-
նական երջանկութեան... Ամեն մի քայլիդ, ամեն մի շար-
ժուածքիդ, ամեն մի խօսքիդ համար պատասխան և հաշիւ
պէտք է տաս սրանց... «Դու կամք չունիս», ասում եմ ինձ,
«մեր կամքը օրէնք է քեզ համար: Այսպէս արօ», քանի որ
մենք այսպէս ենք կամենում: Սիրիւր, ում որ մենք կ'ասենք,
մենք այդ պահանջում ենք բեղանից»... Ի՞նչ դատը վիճակ—
մնալ յաւիտեան սրանց ձեռին զերի, ձեռ ու ոտդ կաշկան-
դուած, ասանց իրաւունքի, ասանց հետեւելու սեփական հա-
կումներին... Բարի Աստուած, ցոյց տուր ինձ մի ելք, ցոյց
տուր ինձ իմ փրկութեան ճանապարհը: (Վերջին խօսքերը նա
արտասանում է աղօթող կոյսի գիրքով):

Վ. Ա. Ր. Ա. Գ. Ո. Յ. Ր.

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ

Բեմը ներկայացնում է նոյն տեսարանը, ինչ որ առաջին գործողության մեջ: Ժամանակը—հետեալ օրը, իրիկնագէտ: Վարպետը բարձրանալիս՝ Աննան նոր մոմեր է դնում մոմախալներէ մէջ:

Տ Ե Ս Ի Լ 1.

Աննա (մենակ)

Էն գետինը մտած Ալէքսանն էլ չեկաւ, որ սամավարը սրբէր վերջացնէր: Բողազս պատռուեց, էնքան գոռացի: Առաւօտուանից է ասում եմ անիրաւին, այ տղայ սամավարը սրբելի՛ր, այ տղայ, իրուկունը ժամանակ չես ունենալ... էնքան պահեց սատկածը, որ օրը տուեց մութն առաւ: Հիմի երբ պիտի սրբի, երբ գցի: (Մտնում է Ալէքսանը՝ ձեռին մի գամբիւղ, որ լիքն է մրգեղէնով):

Տ Ե Ս Ի Լ 2.

Աննա. Ալեքսան.

Ան. Այ, տղայ, էս ռւր ես կորեկ, որ տուն չես գալիս: Ոտդ կտորուեկ՝ ճամբի՞ն էիր ֆնացել: Օրը մթնեց, սամավարն էլ երբ պիտի սրբես:

Ալ. Այ խանում...

Ան. Ըհ, ցաւս տամ բեզ...

Ալ. Ի՞նչ անեմ, այ խանում, բոլորդ էլ վազացնում էր: Մարդու գլխին խեղք էք թողնում որ... Մէկը էստեղից է ձէն տալիս, մէկն էստեղից: Սա էս է պահանջում, նա էն: Դանակ-չանգալն էի ուզում սրբել, Սամսոն տղան եկաւ վրես գոռաց, «Տօ, մունդրիկ, լուացարանը դադարիկ է, խի՞ չես ջուր ածում»: Գնացի, որ ջուր բերեմ, աղջիկ պարոնն է բղաւում. «Անպիտան, կոշիկներս երբ պէտք է սրբես»: Մարդ գլուխ կը կորցնի էստեղ: Չես խմանում, որն անես, որը թողնես: Եւ քանի կտոր լինեմ, խանում, ես հազար ձեռք ունիմ:

Ան. Լաւ, լաւ, հասկացանք, բաւական է:

Ալ. Բիչ առաջ էլ գեղն տալ՝ սամավարը սրբեմ,

Տիգրան աղան գլխիս կանգնեց. «Այ տղայ, զամբիւղը վեր առ ըստդ պնանք»: Ասի, աղա, ձեռիս բան կայ, թող վերջացնեմ, յետոյ: Ու նա էլ տարաւ բերաւ. «Հայվան, ինչ որ քեզ հրամայում եմ, էն արա»: Աստուած վկայ, խանութ, էն քան աւանակ, հայվան էր ասել, որ դրուստ հայվան եմ զանել:

Ան. էլի սկսեց ճաճանակի պէս, վերջ չկայ: Գնա, գնա:

Ալ. Սրանք ուր տանեմ, խանութ:

Ան. Տաւրուֆեօր, ես էլ գալիս եմ: Բաս աղան ուր մնաց:

Ալ. Կանդիտերի մօտ մտաւ. գալետ պիտի առնէր:

Ան. Դէ տաւր, տաւր: Ձամբիւղն էզպէս կը դնես բուֆետի մօտ, ձեռ չես տայ: Ես կը գամ կը տեղաւորեմ:

Ալ. (Գնում է դուրը Թափանարելով) Բան-բան-բան... Մարդ եմ ասում, որ սրանց ուշուկներին գիմանայ: (Տեսնելով, որ տիկնոջ երեսն այն կողմն է) Այ, ես էլ կսպէս կ'անեմ: (Ձամբիւղի միջից մի ինչ որ բան է վերցնում պրոնք բերանը եւ ծամելով հեռանում: Գտնում է Արամեանը)

Տ Ե Ս Ի Լ 3.

Աննա. Արամեան.

Ան. (մի կողմ) Ի՞նչ անժամանակ...

ԱՐ. Տիկին, բարե՛ ձեզ: Ես եկայ ձեր պատասխանն իմանալու:

Ան. Ես ձեզ չէի՞ ասում, որ որդիքս...

ԱՐ. Դուք խօսեցի՞ք նրանց հետ:

Ան. Ինչպէս չէ: Բայց երկուսն էլ դէմ են:

ԱՐ. Երկուսն էլ դէմ: Մի՞թէ, ճշմարիտ, բեմը ձեր աչքում այնքան անարգութեամբ է, որ տնայտաւթիւն էք համարում ձեզ համար, որ ձեր աղջիկը ոտ դնի նրա վրայ:

Ան. Բանը էդ չէ, պարոն: Ուրիշ պատճառ կայ:

ԱՐ. Կարելի՞ է արդեօք իմանալ պատճառը, եթէ միայն դա գաղտնիք չէ:

Ան. Մի՞թէ ոչինչ չէր լսել:

ԱՐ. Ո՛չ, ունի մասին:

Ան. Էսօր Հրանդիկ նշանդրէքն է:

ԱՐ. Ի՞նչ էք ասում, տիկին: Ես ոչինչ չեմ իմացել: Թոյլ տուէք ուրեմն ձեր աչքը լուս անել:

Ան. Շնորհակալ եմ:

ԱՐ. Բայց մի՞թէ նշանդրէքը կարող է խանգարել, որ
նա...

ԱՆ. Նշանուած աղջիկը... թատրոնումը խաղայ... դա ոկի
լուումը բան է... Դա հօ անունը գետնով տալ է նշանակում...
էդ էր պակաս... Ձէ, չէ, չէ. բերան չբանաք դրա մասին...

ԱՐ. Ուրեմն ես միանգամայն յոյսս կտրեմ:

ԱՆ. Միանգամայն... Մեր խօսքը խօսք է:—Է՛հ, ինձ նե-
րողութիւն կ'անէք, պատրաստութեան մէջ ենք, գլուխս խառը,
ժաժանակ չկայ... (Գնում է):

ԱՐ. Հրանոյշը նշանուած է... Այ քեզ նորութիւն: Է՛հ,
ուրեմ ես այստեղ աւելորդ եմ: (Կամենում է՝ դնալ: Այդ թուղին
մոնում է Հրանոյշը եւ կանչում նրա ետեւից. «Պարոն Արամեան»: Արա-
մեանը դրան մօտից ետ է դառնում ուրախ):

Տ Ե Ս Ի Լ 4.

Հրանոյշ, Արամեան.

ԱՐ. Ա՛, օրիորդ Հրանոյշը:

ՀՐ. Բարե ձեզ:

ԱՐ. Շնորհաւորում եմ: Դուք արդէն նշանուած էք:

ՀՐ. Ո՛չ, այդպիսի բան չկայ:

ԱՐ. Այս բողբիս ձեր մայրն առաց: Իբր թէ մինչեւ ան-
գամ այս երեկոյ նշանդրէք է... Այնպէս շտապում էր, այնպէս
զլուխը խառն էր, որ ես չկարողացայ մի երկու բերան խօսք
խօսել հետը:

ՀՐ. Այո՛, բայց... թողնենք այս... Ես եկայ իսկապէս նե-
րողութիւն խնդրելու ձեզանից, որ ձեր առաջարկած դերը չեմ
կարող վերցնել:

ԱՐ. Ես շատ ցաւում եմ, օրիորդ: Ինձ թւում է, որ եթէ
ես կին լինէի, ձեզանից աւելի քաջ կը լինէի:

ՀՐ. Այո՛, այդպէս ասում էք, որովհետեւ աղամարդ էք:
Դժբախտաբար, մեզ՝ կանանցս թոյլ չեն տալիս մեր սեփական
կամքն ունենալ: Մենք հնաբաւորութիւն չունինք մեր վիճակը
անօրինելու ըստ մեր ցանկութեան: Մենք հլու հնազանդ ենք
մեր ինսամակալներին, միևնոյն է, թէ ովքեր են այդ ինսամա-
կալները. ծնող, եղբայր, ամուսին թէ սկեսուր... Այո՛, գերինե՛ր
ենք մենք, խեղճ կանայքս, յաւիտենական դերիներ:

ԱՐ. Օրիորդ, թող այդ ասեն նրանք, որոնց միտքը կաշ-
կանդուած է նախապաշարմունքով, որոնց կարծիքով կինը ա-

ռանց տղամարդու մի հատ քայլ անել չէ կարող կեանքում,
բայց դուք—ձեր գիտակցութեամբ հանգերձ...

ՀՐ. Ի՞նչ կարող եմ անել ես իմ գիտակցութեամբ հան-
գերձ, ես՝ մի թոյլ և անօգնական արարածս... Բաւական է մի
չնչին անհնազանդութիւն—և իմ վերջին կապն իմ ընտանիքի
հետ արդէն խզուած է... Իմ դէմ կը զինուեն մայրս, եղբայրս,
աղջականներս և ծանօթներս... Եւ այն ժամանակ արի՛ դուրս
եկ դրանց խօսքի տակից... Ես մեր գնամ այն ժամանակ, ում
պաշտպանութեան դիմեմ...

ԱՐ. Շատ ափսոս, օրիորդ, որ դուք մերժում էք: Ես՝
ճիշտն ասած, մեծ յոյս էի դրել ձեզ վրայ:

ՀՐ. Իսկ ես ի՞նչպէս եմ ափսոսում, եթէ իմանաք... Ա՛խ,
թաւրոն—դա իմ իղէալն է: Երեակայում եմ, թէ ի՞նչ մեծ
հաճոյք է դերասանի համար (աւելի եւ աւելի ողբերգելով) հարիւ-
քաւոր հանդիսականների առաջ երեւալ բեմի վրայ, զգալ, որ
այդ բոպէին ամենքն հիացած նայում են իրան, հետեւում են
ամեն մի շարժուածքին, ամեն մի խօսքին... Ամբողջ թաւրո-
նը՝ կարծես մի հողի և շունչ դարձած՝ համակուած է քո զգաց-
մունքով, զիւթական ուժով կարող ես իշխել ամենքի վրայ—
ծիծաղեցնել, լացացնել և ողբերել...

ԱՐ. Այո, օրիորդ, դերասանի փառքը նախանձելի է, ո-
րովհետեւ նա աղմկալից է և վայլուն, թէև—շատ կարճատե:

ՀՐ. Այդ ճշմարիտ է: (Բոպէական լուռութիւն):

ԱՐ. (Վեր է կենում, ժպտալով) Ուրեմն, օրիորդ, ես հետա-
նամ ձեռնունայն:

ՀՐ. Հազար ներողութիւն եմ խնդրում:

ԱՐ. Պատիւ ունիմ: (Հրաժեշտ տալով գնում է: Հըմնոյ՜ը տը-
խուք է եւ մտածմունքի մէջ. յետոյ սկսում է):

Տ Ե Ս Ի 1. 5.

Հըմնոյ՜2 (մանակ)

Մենք չենք կամենում—և վերջացաւ... Եւ այսպէս կամաց-
կամաց կը խլանայ, կը մեռնի իմ մէջ սէրը, ձգտումը զէպի
բեմ... Գոնէ այս միտիթարութիւնն է մնում ինձ.—կարգալ, ո-
ղբերուել և երազել: (Բաց է անում դիրքը եւ արտասանում).

«Մնաք բարով, լիւններ, սիրո՛ւն արօտներ,

Դուք էլ մնաք բարով, խաղաղ հովիտներ,

Ես էլ չեմ գալու այստեղ ման գալու,

Վերջին բարես եկայ ձեզ տալու:

Իմ ջրած դաշտեր, իմ տնկած ծառեր,
Աճեցէք զուարթ, շատ ու շատ օրեր:
Մնաք բարով, ծմակներ, դուք պաղ աղբիւրներ,
Եւ դու, արձագանք, հովտիս անոյշ ձայն,
Որ միշտ երգերիս պատասխանում էր:
Գնում է Յովհաննան անդարձ յաւիտեան:
(Կամայ կամայ անցնում է միւս սենեակը: Ոտանաւորի կիսումը Վարդուշը՝ կանգնած դրան մէջ՝ լսում էր նրան ծաղրական դէմքով: Երբ Հրա-նոյշը հեռանում է, նստառջ է գալիս):

Տ Ե Ս Ի Լ 6.

Վարդուշ (մենակ)

(Քրքիջով) Սրան նայեցէք: Այս երեկոյ նշանդէքն է. փո-խանակ զուգուելու զարդարուելու, այստեղ դե-րա-սու-նու-թիւն է անում... հն-հն-հն... (մտնում է Աննան):

Տ Ե Ս Ի Լ 7.

Աննա, Վարդուշ,

Ան. Հը՛, ի՞նչ կայ էդպէս քջչում ես... Երանի՛ քեզ. ոչ լսելք ունիս, ոչ դարդ:
ՎԱՐԴ. Ի՞նչ ես ուզում ինձնից, մայրիկ: Վն, ծիծաղե-լըն էլ արգելում է:
Ան. Գնա՛ պատրաստուի՛ր, ժամանակ է:
ՎԱՐԴ. Ի՞նչու ինձ ես ասում, մայրիկ: Հրանոյշը պիտի շտապի, ոչ թէ ես: Հօ ինձ չեն նշանում, այլ նրան:
Ան. Նա ի՛ր համար զլուխը քաշ հագնում է:
ՎԱՐԴ. Ո՞վ ասաց հագնում է: Հէնց այս բոլորից չէ՛ր այստեղ:
Ան. Էստեղ ի՞նչ էր անում:
ՎԱՐԴ. Ի՞նչ պիտի անէր—դերասանութիւն:
Ան. Ի՞նչպէս թէ դերասանութիւն:
ՎԱՐԴ. Այ նայի՛ր. այսպէս կանգնած, գիւրք ձեռի՞ն, բարձր ձայնով կարգում էր ու ինքն ի՛ր վրայ հիանում:
Ան. Հիմի գիւրք կարգալու ժամանակ է:
ՎԱՐԴ. Հէնց բանն էլ այդ է:
Ան. (Չարացած) Ես նրան գիւրք կարգալ ցոյց կը տամ:
(Արտաջ անցնում է միւս սենեակը):
ՎԱՐԴ. Վն, Հրանոյշին... (Յուզուած մտնում է Հրանոյշը՝ գիւրք ձեռին). Հիմա սա ինձ չմեղադրի: (Գնում է):

Տ Ե Ս Ի Լ 7.

Հրամայշ (մենակ)

Ես ռւր փախչեմ, ռւր կորչեմ, որ ազատուեմ այս հոգեհաններիցը... Մի բոպէ գադար չեն տալիս... Մաշեցին ինձ... Այս ի՞նչ դժոխքի մէջ եմ ես...

(Արագ մտում է, Աննան՝ սաստիկ գայրացած եւ խելով դիրքը աղջկայ ձեռքիցը՝ շարտում է օդի մէջ):

Տ Ե Ս Ի Լ 9.

Աննա, Հրամայշ.

Ան. Դէ հիմի գնա՛ ու կարգա՛...

ՀՐ. (Վրդովուած) Մայրիկ...

Ան. Հը՛, ի՞նչ կայ...

ՀՐ. Դու ինձ... յուսահատեցնում ես...

Ան. Դու ես ինձ յուսահատեցնում, դո՛ւ... Հս օյին է որ մեր զուխը բերում ես...

ՀՐ. Մայրիկ, մեծ կին ես, աչքերդ արիւն է լցուել... Ինչի համար ես այդպէս բարկացած... Ես ձեզ քանի անգամ եմ ասել. մի կանչէք այդ մարդուն, մի կանչէք...

Ան. Աղջիկ, ինձ ասա՛ տեսնեմ. ինչո՞ւ ես էդպէս ներհակուել:

ՀՐ. Մայրիկ, ի՞նչ ես ուզում ինձանից:

Ան. Ես ուզում եմ, որ Հս բոպէիս դնաս ու պատրաստուիս փետացուի գալուն:

ՀՐ. Ես նրա առաջ չալիտի դուրս գամ:

Ան. Ուրեմն ժտքումդ դրել ես մեզ խայտառակի՞:

ՀՐ. Ես մեղաւոր չեմ, եթէ...

Ան. Աստուած սիրես, յիմար յիմար դուրս մի՛ տա: Ոչինչ չեմ ուզում լսել: Գնա՛ ու պատրաստուիլ: Դէ, շնուտ արտա (կամենում է ուժով տանել):

ՀՐ. Թո՛ղ ինձ, Թո՛ղ մայրիկ, Թո՛ղ, ասում եմ:

Ան. Հրահայշ, ախպէրդ կը գայ, էլ ձեռիցը չես պրծնի:

ՀՐ. Ի՞նչ պիտի անի: Հօ չի մորթելու:

Ան. Կը մարթի էլ ու հոգիդ էլ կը հանի:

ՀՐ. Տէր Աստուած, զօռճի էլ բան կը լինի: Ես չեմ ուզում այն մարդուն, մայրիկ, չեմ ուզում:

ԱՆ. Աղջի, ասենք թէ էդ մարդը մի քիչ քո սրտովը չէ, լաւ: Բաւ քո խղճմտանքն ո՛ւր մնաց: Էս տանը մենակ դժու ես: Ձեռն իմանում, թէ քանիսի ճանապարհին ես փակած պահել...

ՀՐ. Ե՞ս—ո՛ւմ ճանապարհն եմ փակած պահել:

ԱՆ. Ինձանից էլ լաւ գիտես:

ՀՐ. Մայրիկ, ի սէր Աստուծոյ, պարզ խօսիր: Դու այնպիսի բան ասացիր որ... Ինչպէս թէ ես ճանապարհ եմ փակել... Օրինակ, ո՛ւմ, ո՛ւմ ճանապարհն եմ փակած պահել:

ԱՆ. Հէնց մէկը—ախպօրդ:

ՀՐ. Տիգրանի:

ԱՆ. Հա, հէնց մէկը Տիգրանի: Ձեր հոգսիցը ծերացաւ խեղճ որդիս: Մտղերը սպիտակեցին, էնքան սպասեց ձեզ: Շուտով քառասուն տարեկան կը դառնայ, ու մինչև օրս չկարողացաւ մուրազին հասնի, մի հալալ կողակցի արժանանայ... Բաւ էս խղճմտանք է, քեզ եմ հարցնում:

ՀՐ. (Վիրաւորուած) Բայց ես լ՞ո՛ւն մեղք ունեմ այստեղ: Մի՞թէ Տիգրանը ի՞նչ պատճառով է, որ չէ ամուսնանում: Դա նորութիւն է ինձ համար... Ես չգիտէի, ճշմարիտ... Շատ զարմանալի է...

ԱՆ. Լաւ, էգրան էլ միամիտ չես: Էլի Վարդուշն ասի, կը հաւատամ:

ՀՐ. Բայց ես ինչո՞վ եմ նրան խանգարում: Թո՛ղ ամուսնանայ, երբ կամենում է, ում հետ կամենում է: Ես միայն կ'ուրախանամ...

ԱՆ. Կարծում ես, ախպէրդ խաղնի վրայ է * նստած, որ համ տունը պահի, համ ձեզ ուտացնի, համ կնկայ ու երեխաների զարգը քաշի...

ՀՐ. (Խորը վիրաւորուած) Ահա թէ ինչ... Ուրեմն խօսքը զրո՞ մասին է... (զնալով աւելի եւ աւելի փղձկում է) ուրեմն ինչ որ սնում է, իմ կերած մի կտոր հոնքն է անում... Դրո՞ համար եմ ես ձեր աչքի փուշը դառել... (Արտասուք սրբում է):

ԱՆ. Սամսոնն էլ էնտեղ է դէմ առել մնացել: Նրա էլ կարդուելու ժամանակն է: Է՛հ, ասենք թէ նա մի քիչ ջահէլ է, դեռ էլի կարող է սպասել: Բայց լ՞ո՛ւն պատասխան կը տաս երկնային դատաւորի առաջ, եթէ քո պատճառով պատիկ քոյրդ էլ մնայ տանը ու անջուր ծաղկի պէս թոռմի, չորանայ... Նրա մեղքի տակիցը, աստ, տեսնեմ, կարո՞ղ ես դուրս գալ:

ՀՐ. Մայրիկ, պարտական մնաս, եթէ իմ պատճառով Վարդուշին թողնես տանը և ուզողին մերժես:

ԱՆ. Յետո՞յ, ես կը թողնե՞մ, որ պատիկն իր ոտը մեծիցը առաջ դնի, մեծի սնունը կոտորուի:

ՀԲ. Ի՞նչու պէտք է մեծի անունը կոտորուի: Բոլորովին ոչ:

ԱՆ. Աղջի, չե՞ն ասի, թէ երևի, մեծը մի պակասութիւն է ունեցել, որ կողքո՞վ անցել են, պատիկին առաջ դրել:

ՀԲ. Խելօք ու հասկացող մայրերը երբէք այդպիսի բան չեն անում, փոքրիկին չեն անբախտացնում մեծի պատճառով:

ԱՆ. Հէնց ամենից խելօքներն էր պէս կ'անեն: Ու յետոյ իմանում ես, թէ ի՞նչ կը լինի նրա դրութիւնը... Վայ էն տեսակ աղջկան... Զո՞ւրն ընկնի, լաւ չէ, նրա պէս քանքախտը:

ՀԲ. Մայրիկ, հաւատա՛, ինձ համար հազար անգամ աւելի լաւ է— երբէք չամուսնանալ, ծերանալ հայրենի տանը, միշտ հարազատների շրջանում, նոյն իսկ շունչը փչել եղբայրների ձեռքերի վրայ, այո, այդ հազար անգամ աւելի լաւ է ինձ համար, քան ամբողջ կեանքը կապել մի այնպիսի արարածի հետ, որից խորշում ես, որին երբէք չես կարող սիրել, որի հետ, հատուա՛ս գիտես, մի հատ ուրախ օր չես տեսնելու, այլ դատապարտուած ես միայն կամաց կամաց հալ ու մաշ լինել... հապա ես մէ՞ղբ չեմ, մայրիկ:

ԱՆ. Էլ ի՞նչ դարդ... Է՞դ էր մնացել, որ պառուես ու հորանցդ տանը բայդուշ դառնաս... (մտնում է Տիգրանը՝ ձեռքին երկու թղթի, արկի)

Տ Ե Մ Ի Լ 10

Աննա, Տիգրան, Հրանդ:

ՏԻԳ. (Արկիները տալով մօրը) Մայրիկ, սրանք վերցրու խմորեղէն է: (նկատելով Հրանդին) վա՛հ, Հրանդ՛շ, դու դեռ այդ դրութեան ես: Ի՞նչու ես սե հագել: (նայելով ժամացոյցը եւ ցոյց տալով քրոջը) Տե՛ս, ժամը բանիսն է: Շուտով փեսացուն կը գայ իսկ դու...

ԱՆ. Հը՛, հիմի արարմունքդ յայտնեմ Տիգրանին:

ՀԲ. Յայտնիր: Ծածուկ բան չկայ այստեղ:

ՏԻԳ. Մայրիկ, բան է պատահել:

ԱՆ. Ձէ՛, մի առանձին բան չի պատահել: Հրանդ՛ն է էլի, մի բիշ հակառակութիւն է անում:

ՏԻԳ. Ուրիմի դու դեռ խելքի չե՛ս եկել, Հրանդ՛շ:

ՀԲ. Տիգրան, ես արդէն ասել եմ, հիմա էլ կրկնում եմ: Բանի դեռ ուշ չէ, յայտնեցէք այն մարդուն որ չգայ:

ՏԻԳ. Ձը գայ:

ՀՐ. Այո, թող իզուր նեղութիւն չկրի: Միենայն է, եթէ դայ, ես ոչ նրա առաջը պիտի դուրս գամ և ոչ նրա բերած նշանն ընդունեմ:

ՏԻԳ. Հը՛մ... Շատ լաւ... Այդպէս էլ կ'անենք... Իսկոյն (ցոյց է տալիս թէ կամենում է գնալ):

ԱՆ. Տիգրան, սրա խելքովն ես ընկել:

ՏԻԳ. Բաս ի՞նչ... Թողնենք հիւրերը հաւաքուն, փեսացուն դայ, և յետոյ նրանց առաջ մենք գետինը մտնենք... Ո՛չ, ես այդ չեմ կամենում... Գնա, գնա, ինչ կ'ուզես, արա: Դու ոչ մայր ես ճանաչում, ոչ եղբայր: Գնա, ես էլ քեզ չեմ ճանաչում:

ՀՐ. Դրանով ի՞նչ ես կամենում ասել:

ՏԻԳ. Այն, որ ես էլ Հրանոյշ անունով քոյր չունեմ:

ՀՐ. Ի՞նչպէս թէ չունես... Եթէ ես քո քոյրը չեմ, ուրեմն ես օտար եմ այս տանը, ուրեմն ես իրաւունք էլ չունեմ այստեղ մնալու:

ՏԻԳ. Ինչպէս կ'ուզես, այնպէս հասկացիր:

ՀՐ. Այդ դէպքում աւելի լաւ է պարզ ասես, որ ես աւելորդ եմ այս տանը...

ՏԻԳ. Ես արդէն ասացի, ինչ որ հարկաւոր էր: Եթէ քոյրը չէ խղճում իր եղբորը, ի՞նչու պէտք է եղբայրը խղճայ իր քրոջը:

ՀՐ. Այդ և՛ս եմ այդքան անխիղճ:

ՏԻԳ. Այո, դու... որովհետեւ դու ոչ ոքի չես խղճում, չես մտածում, թէ քո յամառութիւնը ո՞ւր է տանում թէ քեզ թէ մեզ բոլորիս: Ձեռ հասկանում, թէ քո հաճոյքին ծառայելով ի՞նչ անտանելի դրութիւն ես ստեղծել մեզ համար, ի՞նչպէս կապել, կաշկանդել ես մեր ամենքի ձեռ ու ոտը...

ՀՐ. Եթէ ես այդչափ անտանելի եմ, այդչափ հրէշաւոր եմ, էլ ի՞նչի էք սպասում. վերցրէ՛ք և ձեռիցս բռնած՝ ինձ փողոց նետեցէ՛ք:

ՏԻԳ. Վա՛, այս ինչ դրութիւն է, Տէր Աստուած... Ես հօ չեմ կարող, ճշմարիտ, իմ ամբողջ կեանքը վեր գնել ձեզ համար: Տարին տասն երկու ամիս շա՛ն պէս չարչարուի՛ր մի քանի կռակի համար որ վերջն էլ ձեռք ընկածը բեր ամա սրանց համար 14 մանէթանոց նորաձի կռիւկներ առնեն, 25 մանէթանոց գլխարկներ ծածկեն, 50 մանէթանոց դէշրաներ հագնեն, զուգուած փողոցները չափշփեն և աշխարհ՝ զարմացնեն իրանց թանկագին զգեստներով...

ՀՐ. (Մշխտտում է զսպել հիկեկանքը, աչքերը ցուած են արտասունքով):

ՏԻՓ. Մղկտան...

ԱՆ. Է՞ս էիր ուզում լսել, էլի:

ՏԻՓ. Մղկտան այդպէս... Լաւ ես անում... Ես էլ եմ շատ մղկտացել, բայց ծածուկ, և դու չես տեսել իմ արտասուքը... Բայ մեղք չենք մենք, մեզ Աստուած չէ ստեղծել... Ձէ՞ որ ես էլ մարդ եմ, չէ՞ որ ես էլ ունիմ իմ ցանկութիւնները, ես էլ եմ կամենում վերջապէս ապրել իմ ուղածի պէս, կեանքումս մի օր տեսնել... Իմ հասակի մարդիկ հիմա բոլորն էլ վաղուց ամուսնացած՝ որդոց տէր են դարձել, շրջապատուած սիրելիներով՝ նրանցով մխիթարւում են, նրանց շրջանի մէջ հանդիստ են գտնում... Իսկ ես—ի՞նչի եմ հման... Ծերութեան մօտեցած, մազերս սպիտակ, առողջութիւնս վեր գրած՝ դեռ նո՞ր-նոր պիտի սկսեմ ապրել... Ա՛յ, հոգը իմ գլխին... (Ծեծում է իր գլուխը):

ՀՐ. (Վեր է կենում երերալով) Ներքի... ներքի ինձ... (Յուսահատական հեկիկանքով նետում է եղբոր մօտ՝ ծնկադր, կամենում է շարունակել, բայց արտասուքից խեղտունով չէ կարողանում):

ԱՆ. Ա՛խ, որդիքս...

ՏԻՓ. Այս խօսքերը ես քեզ երբէք չէի ասի, բայց ինչ անեմ, ինձ հարկադրեցիր, ինձ ստիպեցիր, որ ասեմ, որովհետեւ... որովհետեւ... այս տեղս... շատ էր լցուած ..

ՀՐ. (Կրկին դառն լացով) Ներքի... ներքի ինձ. ամեն մի կտոր հացի համար, որ ես բերանս եմ դրել, ամեն մի շորի համար, որ հագել եմ, ամեն մի զարդարանքի համար, որ գնել եմ քո աշխատանքով... (Կտրում է վզի յուզունքաւոր մանեակը, որի հատիկները թափում են յատակի վրայ):

ԱՆ. Էդ ի՞նչ ես ասում, Հրանդ՝, քո կերածն էլ քեզ հալալ քո խմածն էլ...:

ՀՐ. Ո՛չ, ասա. հարձ մ լինի քո կերածն էլ: քո խմածն էլ...

ՏԻՓ. Հրանդ՝...

ՀՐ. Այո, դու ճշմարիտ ասացիր: Ես անտանելի դրուժիւն եմ ստեղծել ձեզ համար, կապել, կաշկանդել եմ ձեր ամենքի ձեռ ու ոտը, փակել եմ ձեր ճանապարհը... Ես մի ձրիակէր եմ եղել այս տանը... (Կամենում է գնալ):

ԱՆ. Հրանդ՝, ո՛ւր գնացիր:

ՏԻՓ. Հրանդ՝, մի պատասխան տուր վերջապէս: Ասա, ի՞նչ անենք: (Պառնդա):

ՀՐ. (Դրան մօտից) Ես—խոստանում եմ շատ շուտով բաց անել ձեր բոլորի ճանապարհը:

ՏԻՓ. Արի՛ ու մի բան հասկացիր: (Մտնում է Սամսոնը, սեղ-քին մի շքեղ ծաղկափունջ, իսկ իր կրծքի վրայ կպցրած է մի. թարմ վարդ):

Տ Ե Ե Ս Ի Լ 11.

Աննա, Տիգրան, Սամսոն.

ՍԱՄՍ. (Բարձր բռնելով ծաղկափունջը) Հրանդշի համար...

ԱՆ. Նա արժանի է դրան, որ առել ես:

ՍԱՄՍ. (Չարմսցած) Վա՛...

ՏԻԳ. Չարմանալի մարդ ես, Սամսոն: Այո՞ ռոտեղ ես դու:

ՍԱՄՍ. Աստուած սիրէք, ի՞նչ է պատահել, այդպէս թթուել էք: Մայրիկ:

ԱՆ. Ձի էլ մեռնում ձեր մայրիկը, որ միանգամից ապատուր իր դարդիցը:

ՍԱՄՍ. Տէր, մեղան քեզ, Աստուած.

ՏԻԳ. Տօ, մարդ Աստծոյ, դու երբայր չե՞ս: Քրոջդ նշանդ դէքն է, դու ռոտեղ ես:

ՍԱՄՍ. Բուլվարումը: Մեղք բան է ման դալը:

ՏԻԳ. Այստեղ մեր սրտներիցը արիւն է կաթում, մոլորում անացել ենք ու չենք իմանում, թէ ի՞նչ անենք, որ մեր այն աննամուսին խելքի բերենք, սա քոծերի ետեւիցն է թրև դալիս բուլվարումը...

ՍԱՄՍ. Քոծերի ետեւից... Դա իմ դործն է... Շատ լաւ էլ անում եմ... Մայրիկ, ի սէր Աստուծոյ, առն, ի՞նչ է պատահել:

ԱՆ. Էլ ի՞նչ կը պատահէր... Քրոջդ արարմունքը նոր ես իմանում:

ՍՍՄՍ. Ի՞նչ է արել, որ:

ԱՆ. Փեսացուի առաջ, ասում է չպիտի դուռ դամ:

ՍԱՄՍ. Գլուխը քա՛րը... Ձի ուզում, չգուռ դալ... Շատ հարկաւոր եմ... (Չարացած անցնում է միւս սենեակը):

Տ Ե Ս Ի Լ 12.

Աննա, Տիգրան.

ԱՆ. Տիգրան, բայց ի՞նչ անենք:

ՏԻԳ. Յետաձգենք, մինչև որ տեսնենք, թէ...

ԱՆ. Ախր փեսացուն հիմի կը գայ:

ՏԻԳ. Կ'ասենք, ներողութիւն, ալջիկը հիւանդացաւ: (Չանդր տալիս են):

ԱՆ. Հիշը գլխիս... Եկան: (Շտապ հեռանում է, մտնում է Չարօն):

Տ Ե Ս Ի Լ 13.

Տիգրան, Ջաքո.

ՁԱՔՕ. Բարով, Տիգրան, ջան... Մի ձեռքդ խփիր, է...

ՏԻԳ. Ջաքո, փեսացուն գալիս է...

ՁԱՔՕ. Փեսացուն գալիս է, էն էլ ոնց է գալիս... Մի անտրկա բռնիքների մատանի է բերում, որ...

ՏԻԳ. Է՛հ, մեր դարդը մատանին չէ...

ՁԱՔՕ. Ի՞նչ հրամայեցիր:

ՏԻԳ. Ջաքո, գիտես ինչ, այս բոլեիս, առանց ժամանակ կորցնելու, վաղեվադ պիտի գնաս փեսացուի մօտ...

ՁԱՔՕ. Հը...

ՏԻԳ. Ու կը ասես, որ չգայ...

ՁԱՔՕ. (Ջարմանքից կարծես սարսափած) Վա՛հ...

ՏԻԳ. Էլ դարմանալու ժամանակը չէ...

ՁԱՔՕ. Ախր ի՞նչ պատահեց:

ՏԻԳ. Ոչինչ... այնպէս... չյաջողուեց...

ՁԱՔՕ. Մեղա՞նք, Աստուած:

ՏԻԳ. Եթէ պատճառը հարցնի, կ'ասես աղջիկը յանկարծ հիանդացաւ:

ՁԱՔՕ. Յո՛նկա՞րծ... աստանի անկաջը խուլ, հօ ընկնաւոր չէ՞.

ՏԻԳ. Ի՞նչ ընկնաւոր, ի՞նչ ես խօսում:

ՁԱՔՕ. Ախր յանկարծ էլ բան կը լինի:

ՏԻԳ. Դէ որ եղաւ:

ՁԱՔՕ. Ես հիմի ի՞նչ երեսով նրա աչքին երևում:

ՏԻԳ. Դէ, Աստուած սիրես, Ջաքո, շուտ արա:

ՁԱՔՕ. Էլ ճարս ինչ: Պիտի գնամ էլի:—Լաւ, բայց երբ բերի հշանը:

ՏԻԳ. Ձեմ իմանում, մենք իմաց կ'անենք... Դէ, Ջաքո, քեզ տեսնեմ, թե առ ու թափի:

ՁԱՔՕ. Վա՛, բանը շատ ծուռ է գնում: Աստուած վերջը բարի անի: (Գոռն մօտից վերադառնալով) Տիգրան ջան, հարդ տանեմ, ինձ մի քիչ...

ՏԻԳ. Փճդ ես ուղում: Հը՛, առ, է, ամ...

(Նրան փող է տալիս) Միայն շուտ արա...

ՁԱՔՕ. Շնորհակալ եմ: Ծօտի պէս կը թռչեմ: (Շտապ հեռանում է:)

ՏԻԳ. Օ՛հ, հազիւ ազատուեցի: (Բարկացած անց ու դարձ է
է անուամբ: Մտնում է Աննան):

Տ Ե Ս Ի Լ 14.

Աննա, Տիգրան.

ԱՆ. Զաքոն գնաց:

ՏԻԳ. Պատասխանը տարաւ:

ԱՆ. Հիմի փեսացուն ի՞նչպէս կը նեղանայ:

ՏԻԳ. Սրանից յետո՛ւ Ամեն բան վերջացաւ:

ԱՆ. Ուրեմն էն անզգամը մեզ բոլորիս, յաղթեց, իր ա-
ռածն արաւ:

ՏԻԳ. Բառ չէ՞:

ԱՆ. Ը՛հ, գետի՛նը մտնես, դու, Հրանո՛յշ:

(Մտնում է Վարդուշը):

Տ Ե Ս Ի Լ 15.

Աննա, Տիգրան, Վարդուշ:

ՎԱՐԴ. Մայրիկ, նշանդդէքը խանգարուեց:

ԱՆ. Աղջկայ երեսին որ մեռոն չլինի, նշանդդէքն էլ կը
խանգարուի, ու...

ՎԱՐԴ. Ես էլ յիմարի պէս մի ժամ է հայելու առաջ կանգ-
նած՝ զարդարւում եմ: Հիմա գնանորից շորերդ փոխիր... Թ՛ու...
(Վարդուշը դնում է: Տիգրանը շարունակ անց ու դարձ է անում եւ գնա-
լով աւելի ու աւելի բորբոքւում է):

Տ Ե Ս Ի Լ 16.

Աննա, Տիգրան.

ՏԻԳ. Օ՛հ, ի՞նչպէս կատաղութիւնս բռնել է...

ԱՆ. Հանդարտուիր, որդիս: Ի՞նչ ես արիւնդ պղտորում:

ՏԻԳ. Գլուխ եկած բանը ճնց փչացրեց... Նա էն աղջիկ
տեղովը մեզ բոլորիս յաղթի՛, իր մատների վրայ խաղացնի՛
մեզ... Ը՛հ, ես նրան...

ԱՆ. Աչքներս լուս: Հիմի էլի բաժբասանքը կըսկսուի:

ՏԻԳ. Աստուած վկայ, սիրտս ասում է, գնա՛ ու անզգամի
մազերիցը բռնած՝ առւր պատերին ու ջարդ ու փշուր արա՛...

ԱՆ. Մի անգամ որ աչքին երեսս, էլ չի համարձակուի
մեր խօսքը գետին պցել:

ՏԻԳ. Չէ... մինչև աղուս չթափեմ, ես չեմ հանդստանայ...
(Սատիկ պարացած, վճռաբար եւ արագ անցնում է միւս սենեակը):

ԱՆ. Ի՞նչ պիտի անի, տեսնես: Չգնայ ու ճիշտ որ իր ասածն անի: Տաք բնութիւն է, բարեկանում է, Աստուած աշատի... (Յանկարժ լսում է ապտակի բարձր ձայն եւ կանացի ճիւղ. Մտնում է Տիգրանը՝ աչքերն արիւն կոխած եւ չարութիւնից ծամածռում գէմքով):

ԱՆ. Տիգրան, ձեռքդ հօ դաճուեց խեղճ աղջկայ երեսին...:

ՏԻԳ. Այն գեռ քիչ էր, զեռ քիչ էր նրան...:

(Տիգրանը գագանի պէս մրմռալով՝ անց ու դարձ է անում: Յանկարժ լսում է ատրճանակի պայթիւն: Տիգրանը քարայցած կանգ է առնում: Սարսափած ներս է փազում Վարդուշը, քիչ յետոյ Սամսոնը):

Տ Ե Ս Ի Լ 17.

Աննա, Տիգրան, Վարդուշ, քիչ յետոյ Սամսոն:

ՎԱՐԴ. Շո՛ւտ հասէք... Տիգրանի ատրճանակով... Հրանճյշ-
շը... Հրանճյշը...

ԱՆ. (Գլխին տալով) Վա՛յ, հոգը ի՞մ գլխին... (Շտապ դնում է նոյնպէս Վարդուշը: Վշտահար մտնում է Սամսոնը):

ՍԱՄՍ. Բժիշկ, բժիշկ... (Վազեմազ դուրս է դնում):

ՏԻԳ. Ախ, Հրանճյշ... (Անցնում է միւս սենեակը):

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ

Տեսարանը մնում է անփոփոխ: Երկրորդ գործողութիւնից յետոյ մինչեւ
Դրբորդը անցել է մօտ երկու ամիս ժամանակամիջոց: Ժամանակը կէսօր:

Տ Ե Ս Ի Լ 1

Սամսոն, Վարդուշ. (երկուսն էլ դրսի շորով)

ՍԱՄՍ. Վարդուշ, քիչ առաջ այն լճն էլ նամակ ուղարկեց
Հրանդշը...

ՎԱՐԴ. Նամակ: Ես ոչինչ չեմ իմացել:

ՍԱՄՍ. Հապա: Մի ծրարած նամակ: Տուեց Ալեքսանին,
թէ տնր, բայց ռւժ—չլսեցի:

ՎԱՐԴ. (ժպտալով) Կարելի է, մէկի վրայ սիրահարուել է:

ՍԱՄՍ. Ով գիտէ: Կարող է պատահել: Հիւանդութիւնից
յետոյ այնքան է փոխուել Հրանդշը, որ կարծես մի 16 տարե-
կան ուրախ և աշխոյժ աղջիկ է դառել: Ա՛, լսում ես—երզում
է... Անպիտանի ձայնն էլ լսուցել է:

ՎԱՐԴ. Ես Ալեքսանից պիտի հարցնեմ:

ՍԱՄՍ. Դու պատրաստ ես, չէ: Ուրեմն վնասը կոնցերտի
համար տոմսակներ վերցնենք:

ՎԱՐԴ. Իհարկէ, կառքով:

ՍԱՄՍ. Ո՛չ, հօ թաարօն չենք վնում: Այստեղ մեզ մօտ
խանութում վաճարում են տոմսակները:

ՎԱՐԴ. Քանի հատ պիտի վերցնես:

ՍԱՄՍ. Երեքը, ինձ, քեզ և Հրանդշին:

ՎԱՐԴ. Կարելի է, Հրանդշը չի գալիս:

ՍԱՄՍ. Կը հարցնենք:

ՎԱՐԴ. (դռնից) Հրանդշ, այս երեկոյ դու կոնցերտ չե՞ս
դնալու: (մտնում է Հրանդշը)

ՏԵՍԻԼ 2.

Սամսոն, Հրանդշ, Վարդուշ.

ՀՐ. Ի՞նչ ասացիր, Վարդուշ:

ՍԱՄՍ. Այս երեկոյ լաւ կոնցերտ կայ: Մենք գնում ենք:
Քեզ համար էլ տոմսակ վերցնեմ, չէ՞, Հրանդյշ:

ՀՐ. Ես... չգիտեմ, ճշմարիտ, գամ թէ ոչ:

ՍԱՄՍ. Իհարկէ:

ՎԱՐԴ. Ի՞նչ պիտի շինես տանը:

ՀՐ. Լաւ, վերցրէք:

ՍԱՄՍ. Կ'ուզես, արի՛ միասին գնանք, հա՛:

ՀՐ. Ո՛չ, ես չեմ կարող: Ես սպասում եմ մէկին:

ՍԱՄՍ. Այդ համ էք սպասում, օրիորդ:

ՀՐ. (ժպտալով) Կը գայ, կ'իմանաք:

ՍԱՄՍ. Ա՛խ, դու... ծածուկ, ծածուկ բանի՞ր ես անում...

Զլինի՞, սիրահարուեկ ես:

ՀՐ. Այո, թո՛ւնդ:

ՍԱՄՍ. Ո՞ւժ վրայ, թոյլ տուէ՛ք հարցնել:

ՀՐ. Յետոյ կ'իմանաք:

ՍԱՄՍ. Օ՛յ-օյ-օյ... Այս ի՞նչ գաղտնիքներ են...

ՎԱՐԴ. Դէ գնանք, գնանք, Սամսոն: Տոմսակները կը սպասուէին, մենք կը մնանք առանց տոմսակի:

ՍԱՄՍ. Դիտէ՛ք ինչ, ասում եմ ուղղակի մի օթեակ վերցնեմ:

ՎԱՐԴ. Ի՞նչ լաւ կ'անես... Օթեակում փառաւոր կը բաղմենք ու...

ՀՐ. Ոչ, օթեակը թանկ է:

ՍԱՄՍ. Զանազանութիւնը չնչին է:

ՀՐ. Բայց եւ այնպէս, ի՞նչ հարկաւոր է:

ՎԱՐԴ. Ո՛չ, ինչո՞ւ, ափսոս չէ՞ օթեակը...

ՍԱՄՍ. Իհարկէ: Թղթախաղում տարած փող է—թող գնայ, օթեակ կը վերցնեմ: Գնանք, Վարդահա՛ն:

ՎԱՐԴ. Շի՛կ... (Սամսոնը եւ Վարդուշը գնում են):

ՀՐ. Ա՛խ, Վարդահա՛ն, որքա՛ն միամիտն ես դու... (Մտնում է Ալեքսանը):

Տ Ե Ս Ի Լ. 3.

Հրանդյշ, Ալեքսան.

ՀՐ. Նամակը լանճեցի՞ր Արամեանին:

ԱԼ. Այո:

ՀՐ. Ի՞նչ ասաց:

ԱԼ. Էս բոպէիս կը գայ:

ՀՐ. Շատ լաւ: Դու գնանք բանի՛դ: (Ալեքսանը վնում է):

ՏԵՍԻՒ 4.

Հրամայշը. (մենակ)

Նա կը գայ շուտով իմ վիճակը կ'օրոշուի: Ա'խ, երանի՜ թէ յաջողուի... Որքան երջանիկ կը զգամ ինձ... Ինչո՞ւ այս բախտաւոր միտքը աւելի առաջ չծագեց իմ գլխում... Ես այս բույսիս, ո՞վ գիտէ, մի անուն կ'ունենայի: Ոչ այն զէպըը տեղի կ'ունենար, ոչ ես ընտանիքիս հետ բաժբասանքի առարկայ կը դառնայինք... Ի՜նչ նախապաշարմունք, ի՜նչ յիմար երկիւղ կաշկանդել էին ինձ... Մի՞թէ ծառայելով մի ազնիւ, գեղեցիկ գործի, ես անպատուութիւն կը բերէի իմ հարազատներին... Դա հազար անգամ աւելի լաւ չէ՞ր ինձ համար, քան թէ օրն ի բուն պարապ յօգնել և կեանքը տեսնել միայն ուտել-խմելու և դարգարուելու մէջ... (ցնցուկով) Ոտաճայն... կարծեմ նա է... Սիրտս ինչպէս սկսեց բաբախել... (մոռում է Արամանը):

ՏԵՍԻՒ 5.

Հրամայշ, Արասեան:

ԱՐ. Օրիորդ Հրանսյշ... (Արապ մօտենալով լրկու ձեռքով սեղմում է նորա ձեռքը) Դուք ուրեմն նորից կենդանացաք:

ՀՐ. Այո, ինչպէս տեսնում էք: Ես մահուան դուռը բաղ-խեցի, բայց բաց չարին:

ԱՐ. Դուք վերածնունդիք, օրիորդ, ի մեծ ուրախութիւն ձեր բոլոր ծանօթների:

ՀՐ. Այո: Ես—վերածնունդի:

ԱՐ. Բայց անկողնուն երկար ծառայելուց յետոյ:

ՀՐ. Համարեա երկու ամիս:

ԱՐ. Այդպիսի բան կ'անեն, օրիորդ: Ափսոս չէ՞ ձեր թանկագին կեանքը, որ դուք կամեցաք զոհել: Հաւատացէ՛ք, երբ լուրը տարածուեց քաղաքում, մենք ձեզ ի՜նչպէս խղճա-ցինք, ինչպէս ախ ու վախ բարձրացաւ... Դիտէ՛ք, առաջին օրը խօսում էին, որ դուք արդէն...

ՀՐ. Մեռած եմ:

ԱՐ. Այո: Մի՜նչև անգամ պատրաստուում էինք գալ ձեզ մօտ և մեր ցաւակցութիւնը յայտնել ձեր ընտանիքին:

ՀՐ. Ի՞նչ էք ասում: (Խիծաղում է) Դա նորութիւն է ինձ համար:

ԱՐ. Ճշմարիտ խօսք: (Կարհառել լուռ լինել) Բայց թոյլ տուէք հարցնել, օրի՞օրդ. Ի՞նչու այդ քայլն արիք: Չանձրացել էիք կեանքից:

ՀՐ. Համարեա թէ... Ուրիշ պատճառներ էլ կային...

ԱՐ. Այո... բայց այնուամենայնիւ... Ի՞նչպէս կարելի է... Մարդ ամոսոսում է նոյն իսկ սիրուն վարդը գետին ձգել, հիանում է վրան, կպցնում է կրծքին, ամոսոսում է, երբ թառամում է նա. իսկ դուք ծաղկափթիթ հասակը կամեցաք թառամեցնել, ձեր մտադաշ կեանքը, առանց խնայելու, գնդակի մի հարուածով վերջացնել... Ի՞նչ ասել է ինքնասպանութիւն... Դա հօ մարդկային անմոռութեան գաղաթնակէտն է... Թող ձեզ պահէք զոնէ Համլետի՝ մահուան երկիւղը այն «անյայտ աշխարհի առաջ, որտեղից ոչ մի ճամբորդ չէ վերադարձել»:

ՀՐ. Այո, այժմ ես ձեզ հետ համաձայն եմ, որ դա անմոռութիւն էր: Բայց ես չեմ զղշում դրա համար:

ԱՐ. Ի՞նչպէս:

ՀՐ. Այնպէս: Դա մի անհրաժեշտութիւն էր, որ պիտի հրատարուէր:

ԱՐ. Ես ձեզ չեմ կարող հասկանալ, օրիորդ:

ՀՐ. Ես մինչև անգամ ուրախ եմ, որ...

ԱՐ. Մինչև անգամ ուրախ...

ՀՐ. Այո, որովհետեւ այդ դժբախտ դէպքը յեղաշրջեց իմ հոգին, մի մեծ և օգտակէտ դաս տուեց ինձ, որ ես երբէք չեմ մոռանալ:

ԱՐ. Այդ մտքով էք ասում, որ ուրախ էք:

ՀՐ. Այո: Այն ի՞նչ անտանելի ցաւեր էին, որ կրում էի ես առաջին օրերը... Դողս բռնում է, երբ յիշում եմ... գնդակը նստել էր այստեղ, ձախ ուսիս մէջ: Մինչև որ բժիշկներ կը հանէին, ես տա՛ն անգամ մեռայ և տա՛ն անգամ կենդանացայ... Իսկ յետոյ, երբ գիտակցութիւնս վերականգնեց, Ի՞նչ սիրտ մաշող և սև մտքեր պաշարեցին ինձ... Հէնց միայն այն երկիւղը, որ այս բոլոր տանջանքներին հետեւելու է շուտով ուշնութիւն, խաւար և սառը գերեզման, Ի՞նչպէս էր քանդում, տալէն ու վրայ անում իմ ներսը... Ի՞նչպէս էի ինքս ինձ տնիժում... Բայց հազիւ առողջանալու առաջին յոյսը վառուեց իմ մէջ, զրա հետ միասին զարթնեց և կեանքի տենչը... Ես կարօտ զգացի դարձեալ կապոյտ երկնքի, պայծառ արևի, բռնութեան ներդաշնակ հնչիւնների և այն ամենի, ինչով քաղցր և սիրելի է կեանքը... Ես կամեցայ նորից ապրել... Ինչպէս էլ

լինի, միայն թէ ապրել... Միայն թէ շնչել, տեսնել, զգալ և մտածել...

ԱՐ. Այժմ ես ձեզ լաւ հասկացայ:

ՀՐ. Եթէ ես, կազդուրուելուց յետոյ, մնայի նոյնը, ինչ որ առաջ էի.—մի թոյլ, երեքուն, անվճռական արտարած,—այն ժամանակ աւելի լաւ էր, որ ես խալառ ոչնչանայի... որովհետեւ, իսկապէս ի՞նչ էի դրանից առաջ—մի աւելորդ իր, որ զուր տեղ է բռնում աշխարհում, մի խեղճ էակ, առանց սեփական կամքի, նախապաշարժունքով կաշկանդուած, անընդունակ մի համարձակ քայլ անելու, որը դուրս է առօրեայ կեանքի հասկացողութեանց շրջանակից:

ԱՐ. Ահա ուրեմն ինչի համար էք ուրախ:

ՀՐ. Ես ուրախ եմ մանաւանդ նրա համար, որ այժմ զիտեմ, թէ ինչպէս պէտք է ապրել: Ես գտայ իմ կեանքի ճանապարհը: Ես այժմ կամենում եմ և կարող եմ ապրել մի նոր, զիտակցական և աշխատաւոր կեանքով:

ԱՐ. Այդ շատ և շատ ուրախալի է, օրիորդ: Եւ, իսկապէս, մեծ փոխութիւն եմ նկատում ձեզ վրայ: Դուք այժմ աւելի նիհարել, գունատուել էք, բայց դրա փոխարէն, մի այնպիսի վարժանալի փայլ էն ստացել ձեր աչքերը, որ առաջ չկար... Ձեր հայեացքի մէջ ես այժմ տեսնում եմ մի տեսակ առողջ կենսութիւն, մի ինչ որ առնական վճռականութիւն:

ՀՐ. Այդ ճիշտ է: Այն, ինչ որ առաջ ես չէի համարձակուում մտքովս անգամ անցկացնել, այժմ վճռուած է վերջնականապէս, և հէնց այդ նպատակով էլ ձեզ խնդրեցի ինձ մօտ:

ԱՐ. Բանը ինչո՞ւմն է, օրիորդ:

ՀՐ. Ես ձեզ այս բոպէիս կը բացատրեմ:

ԱՐ. Ուշադրութիւնս լարած՝ լսում եմ, օրիորդ:

ՀՐ. (Գծւարանալով) Գիտէք ինչ, պարոն Արամեան... Ես... մի... առաջարկութիւն... կամ աւելի ճիշտ... մի խնդիրք ունեմ...

ԱՐ. Խնդրե՛ք:

ՀՐ. Այո, մի խնդիրք: Գիտէք .. ես վճռել եմ նուիրուել բեմին...

ԱՐ. (Զարմացած) Նուիրուել բեմին:

ՀՐ. Այո: Ձեզ էլ յայտնի է, պարոն Արամեան, թէ ես ինչպէս եմ սիրում թատրոնը... Թատրոնը ես համարում եմ մի շատ բարձր և վեհ հաստատութիւն... զա հոգուկը թաքնած է, որտեղ իսկապէս որ զտւում, մաքրում են մեր զգացմունքները, և մենք սովորում ենք սիրել գեղեցիկը և առաքինին և ասել

տգեղը և արատը: Ես միշտ երանի եմ տուել նրանց, որոնք ամեն բան ձգել են և նուիրուել այդ պաշտելի հաստատութեան: Ահա ինչու ես վճռեցի նոյնպէս թողնել ամեն ինչ և գնալ իմ աիրաժ աստուածութեան ետեւից:

ԱՐ. Օրիորդ, ես ապշած եմ:

ՀՐ. Խնչու:

ԱՐ. Դուք դժուարանում էիք մասնակցելու մինչև անգամ սիրողների մէջ ներկայացմանը, և այժմ... յանկարծ...

ՀՐ. Ո՛չ, իմ վճիռը յանկարծակի չէ եղած. մինչև այդ ես շատ մտաւտանջուել եմ և ինքս իմ դէմ մաքաւել... (Վայրկենական լուռութիւն) Բայց դուք լուռ էք և ոչինչ չէք ասում:

ԱՐ. Օրիորդ, թոյլ տուէք հարցնել, արդեօք դուք լուռ մտածել էք ձեր անելիք քայլի մասին:

ՀՐ. Այո, մտածել եմ... (կտակածով) Բայց դուք մի տեսակ էք... դուք ինձ խորհուրդ չէք տալիս...

ԱՐ. Այսինքն, ոչ թէ խորհուրդ չեմ տալիս, այլ... այլ...

ՀՐ. (Վշտացած) Պարոն Արամեան, խնդրում եմ անկեղծ եղէք ինձ հետ...

ԱՐ. Ես ձեզ հետ անկեղծ չեմ:

ՀՐ. Ես կամենում եմ ասել, որ պարզ խօսէք ինձ հետ, չքաշուէք ոչ մի բանից, ասացէք այն, ինչ որ մտածում էք: Ես կարծում էի, թէ ձեզ կ'ուրախացնեմ իմ այս վճիռն յայտնելով, այն ինչ դուք... այնպէս սառը վերաբերուեցիք...

ԱՐ. Հաւատացէք, օրիորդ, որ ես...

ՀՐ. Գուցէ դուք ինձ համարում էք անընդունակ, դուրկ բեմական ձիրքից, գուցէ ես մոլորուած եմ միայն... Այն ժամանակ ուրեմն... ներեցէք, եր ես...

ԱՐ. Օրիորդ, ես ինչպէս կարող եմ այդպէս մտածել, երբ ես ինքս ձեր գնահատողներից մէկն եմ և քանիցս անգամ բացարձակ յայտնել եմ իմ կարծիքը ձեր մասին: Ե՞ս չէի, որ ասում էի, թէ բաւական է ձեզ մի քանի տարի փորձուել բեմի վրայ, և դուք կը դառնաք առաջնակարգ դերասանուհի... Ուրեմն այժմ ես ի՞նչպէս կարող եմ ձեզ համարել անընդունակ: Միթէ դուք կարծում էք, որ ես այն ժամանակ միայն շողովորթութիւն էի անում:

ՀՐ. Ո՛չ, ներեցէք, ես այդ չեմ կամենում ասել: Ես միայն դարմանում եմ, որ դուք մի տեսակ անտարբերութեամբ վերաբերուեցիք դէպի իմ դիտաւորութիւնը:

ԱՐ. Օրիորդ, ուղիղն ասած. ես մի կողմից ուրախ եմ ձեր վճիռի համար, միւս կողմից — վարանում եմ ձեզ խորհուրդ տալ:

ՀՐ. Ի՞նչու:

ԱՐ. Ահա թէ ինչու: Մեզանում բեմական ասպարէզը, որքան էլ հրապուրիչ կողմեր ունենայ, քանի որ նա մեզ տալիս է, երկար տարիներից յետոյ, փառք և անուն և նոյն իսկ փոքրիկ ապահովութիւն, այնուամենայնիւ ծածկուած է փուշ ու տատանկով: Արդեօք ձեզ յայտնի է մեր անդրկուլիսեան կեանքը... Ճանաչում էք արդեօք այն միջնորդը, որի օղբ պիպի շնչէք... Գիտէ՞ք դուք, թէ որքան թանկ է նստում մեզ մեր իւրաքանչիւր քայլը դէպի առաջ... Կ'ունենանք արդեօք այնքան ոյժ և կարողութիւն, որ զիմանաք այն բոլոր բանասարկութիւններին, չար նախանձին, չկամութեան, որոնք անպակաս են զեղարուեստի աշխարհում...

ՀՐ. Ի՞մ կարծիքով, զեղարուեստը բարձր է բոլոր բանասարկութիւններից, և չար նախանձից, և մարդկային չկամութիւնից:

ԱՐ. Ենթադրենք մի բոպէ, որ դուք կարողացաք բարձր մնալ այդ բոքորից: Բայց կայ և ուրիշ հանգամանք: Դա ապահովութեան անիծեալ հարցն է: Մենք, դերասաններս, անապահով ենք, մանաւանդ, երբ դեռ ոչ մի անուն չունենք և, այս պէս ասած մեր ոտը դեռ չենք հաստատել բեմի վրայ: Մենք միշտ և միշտ ենթակայ ենք ամեն տեսակ պատահարներին: Զրկանքը, նեղութիւնները մեր սնրածան ուղեկցներն են, որոնք, ուրուականների պէս, հետևում են մեզ ամեն տեղ...

ՀՐ. Բայց դուք հօ տանում էք այդ բոլոր նեղութիւնները, ես էլ կը տանեմ, ես էլ կ'ունենամ այդքան քաջութիւն:

ԱՐ. Օրիորդ, դուք, ճշմարիտ, ինձ զինաթափ էք անում ձեր զարմանալի վճռականութեամբ: Եթէ այդպէս է, համեցէ՛ք — ելէ՛ք ասպարէզ: Ես ձեզ ի բոլոր սրտէ շնորհաւորում եմ ձեր այդ համարձակ քայլի համար:

ՀՐ. Ուրեմն — ինձ ընդունում էք...

ԱՐ. Ամենայն ուրախութեամբ:

ՀՐ. Շնորհակալ եմ, շատ շնորհակալ եմ:

ԱՐ. Ամեն բոպէ, երբ կամենաք: Մենք պատրաստ ենք:

ՀՐ. Կրկին շնորհակալութիւն: Ի՞նչքան ուրախ եմ ես:

ԱՐ. Բայց մի բան պէտք է ասեմ, ձեզ, օրիորդ: Մենք արդէն վերջացրել ենք մեր այստեղի ներկայացումները: Այժմ պիտի գնանք գաւառները: «Աղէ ուրեմն, թափուեալանդ Ագաթէր»...

ՀՐ. Ես էլ կը գամ ձեզ հետ...

ԱՐ. Մենք վաղն և եթ գնում ենք:

ՀՐ. Պատրաստ եմ և ես:

ԱՐ. Հաստատ խօսք:

ՀՐ. Այո:

ԱՐ. Հա, իսկ ձերո՞նք, ձեր տանեցի՞ք...

ՀՐ. Նրանք, իհարկէ, կը հակառակուեն:

ԱՐ. Եւ կարող են—անախորժութիւններ ծագել:

ՀՐ. Թող ծագեն: Զուրն ընկնողը անձրեւից չի վախե-

նայ:

ԱՐ. Սակայն—այդ ձեր գործն է: Արէք, ինչպէս կ'ուղէք: Գալով մեզ, մենք ուրախ կը լինենք, որ մեր խմբի մէջ մի նոր և թարմ ոյժ կ'աւելանայ: Իսկ առ այժմ... (վեր է կենում):

ՀՐ. Մինչև զնախներս մենք կրկի՞ն կը տեսնուենք:

ԱՐ. Այո, այո: Իսկ դուք այդ միջոցին ձերոնց հետ խօսեցէք, նորից ծանր ու բարակ մտածեցէք ձեր անելիք քայլի մասին, որպէս զի յետոյ, ապագայում, չզղջար:

ՀՐ. Երբէք:

ԱՐ. Տայ Աստուած, որ տալի՞թ չունենանք զղջալու: Adio:

ՀՐ. Յ'տեսութիւն:

(Արամեանը կնում է: Հրանդը ուրախ է, բայց միևնույն ժամանակ մտախոհ: Կարծատեւ լուռութեանից յետոյ):

Տ Ե Ս Ի Լ 6.

Հրանդ (մենակ)

Մյն, ինչ որ մի ժամանակ երազ էր թւում ինձ, այժմ դառնում է իրողութիւն: Կարծես, թեւորուել եմ ես, և ինձ մնում է միայն թափ տալ թևերս և բարձրանալ... (Մտախոհ) բայց ախ, ես նախատեսում եմ մի սարսափելի փոթորիկ, որ պիտի բարձրանայ իմ գէմ... դարձեալ սրտնեղութիւն, դարձեալ նախատինք... (Կարծատեւ լուռութեան, յետոյ ողջով) բայց ոչինչ: Վերջին անգամ էլ կը լսեմ ես սրանց նախատինքը, որին այնքան սովոր եմ, և այնուհետև—վերջ իմ տանջանքներին... Այսպէս ուրեմն վաղը մենք կնում ենք... Դէհ, Մինյոն, յառաջ և յառաջ...

«Գիտե՞ս արդեօք այն աշխարհը,

Ուր կ'իտրոնն է ծաղկում,

Կանաչադեղ թաւուտի մէջ

Ոսկի նարինջ վարվում...

(Լսում է բեմի ետեւ Սամսոնի ձայնը):

Սամսոնը... Մի անգամ էլ, մուրացկանի պէս, ձեռքս կը
մեկնեմ եղբորս, և դա կը լինի վերջին անգամ:

(Մտնում են Սամսոնը եւ Վարդուշը: Վարդուշը առանց կանգ առնելու անց-
նում է միւս սենեակը, իսկ Սամսոնը մնում է):

Տ Ե Ս Ի Լ 7.

Հրանոյշ, Սամսոն,

ՍԱՄՍ. Տոմսակն արգէն վերցրինք: Աջակողմեան չոր-
բորդ օթեակ:

ՀՏ. Սամսոն, ես քեզանից մի բան պիտի խնդրեմ:

ՍԱՄՍ. Խնդրիր երկուսը:

ՀՐ. Ինձ... փող է հարկաւոր:

ՍԱՄՍ. Շատ, թէ քիչ:

ՀՐ. (ձայնաւոր) Շատ:

ՍԱՄՍ. Հարկւր:

ՀՐ. Ո՛չ, այդ շատ է:

ՍԱՄՍ. Եօթանասուն, վաթսուին, ինչքան տամ, ես չդիտեմ:

ՀՐ. Եթէ կարողանաս յիսուն բուրլի տալ, ես այնպէս
շնորհակալ կը լինիմ քեզանից... մինչև մահս...

ՍԱՄՍ. Հրանոյշ, եթէ դու միշտ այդպէս պարզ լինես,
այդպէս ուրախ, ես քեզանից, Աստուած է վկայ, ոչինչ, ոչինչ
չեմ խնայի... (Համրելով դրամները) Բարեբախտաբար, մօտս քո
ուզածիցն էլ աւելի է: Կ'ուզես, բոլորը վերցրո՛ւ:

ՀՐ. Ո՛չ, յիսունը լիովին բաւական է:

ՍԱՄՍ. Ահա առիկ: (Տալիս է) Բայց ի՞նչ պիտի անես, կա-
րելի՞ է հարցնել:

ՀՐ. Մի քանի բաներ պիտի առնեմ ինձ համար և մի լաւ
ընծայ բժշկին, որ ինձ կենդանացրեց:

ՍԱՄՍ. Կեցցես, լաւ բան ես մտածել: Բայց քեզ համար
ինչ պիտի առնես, օրինակ: Երեի, նոր գլխօճակ:

ՀՐ. Ա՛յ հիմա կ'առնեմ, կը բերեմ սու՛ն—կը տեսնես:

ՍԱՄՍ. Դարձեալ գաղտնիքնե՞ր... Է՛հ, շատ լաւ, շատ վե-
ղեցիկ: Գնա և սա, ինչ սիրտդ կը տայ:

ՀՐ. Ես իսկոյն կը վերադառնամ: (Գլխարկը ծածկելով, գնում
է: Դրան մօտից ասում է խորհրդաւոր). Շուտով ամեն բան կ'իմանաք:
(Հ'աւանում է):

ՍԱՄՍ. Այս ի՞նչ հանելուկներ են, Տէր Աստուած:

(Մտնում են Աննա եւ Վարդուշ):

Տ Ե Ս Ի Լ 8.

Աննա, Սամսոն, Վարդուշ:

Ան. Սամսոն, ռւր գնաց Հրանոյշը:

ՍԱՄՍ. Խանութ: Բժշկի համար ուզում է մի լաւ ընծայ առնել:

Ան. Իւր թէ նրան քիչ փող ենք տուել...

ՍԱՄՍ. Երկու հարիւր մանէթը շատ է: Նա մահից փրկեց Հրանոյշին:

Ան. Դժու նրան փող տուիր:

ՍԱՄՍ. Այո, յիսուն ըուրլի:

ՎԱՐԴ. Յիսուն ըուրլի... Յիսուն ըուրլիանոց ընծայ...

ՍԱՄՍ. Ասենք, իր համար էլ բաներ պիտ' առնի:

Ան. Որդիս, Էդքան փող կը տան աղջկայ ձեռքը:

ՍԱՄՍ. Գիտես ինչ, Մայրիկ: Այն գէպքից յետոյ ես Հրանոյշին այնպէս եմ խղճում եւ սկսել եմ այնպէս սիրել, որ, եթէ բոլոր ունեցած փողերս էլ ուզի, կը տամ: Աստուած վրկայ, ես նրան չեմ կարող մերժել: Մանաւանդ հիմա այնպէս է, որ առաջուայ Հրանոյշին պէտքար է ճանաչել...

ՎԱՐԴ. Ժիշտ որ, շատ զարմանալի է: Առաջ ինչքան տըխուր էր, չխօսկան, շարունակ մտածումների մէջ, կարծես աշխարհի հոգսը նրան էին տուել—իսկ հիմա ամբողջ օրը բլրելում է, կամ երգում, կամ հանաքներ է անում...

Ան. Ի՞նչպէս կը լինի: Հիմի ինքն էլ է փոշմանել իր ամբողջ: Էն ցաւերը, որ նա քաշեց, Էն վայվոյցը, որ պիշեր ցերեկ չէր կտրւում, նրան չէ, նրանից էլ վատթարին խելքի կը բերէին ու սիրիւ կը տային կեանքը...

ՎԱՐԴ. Ասենք, մայրիկ, պիտէք, հիմա պուք էլ նրա հետ շատ լաւ էք վարւում: Այդ էլ մեծ նշանակութիւն ունի: Առաջ ի՞նչպէս էիք վարւում նրա հետ միևնոյնն էր...

Ան. Դու որ քեզ մէջտեղ չես խառնում...

ՎԱՐԴ. Ի՞նչարկէ: Ես սովա եմ ասում, չէ: Ամեն կողմից կարիճի պէս խայթում էիք—դու մի կողմից, Տիգրանը միւս կողմից...

ՍԱՄՍ. Իսկ Էս...

ՎԱՐԴ. Դու էլ պահաս չես:

ՍԱՄՍ. Իսկ դժու... Մոռացել ես ձեր ամեն օրուայ կռիւները... Այն ի՞նչ բան էր... կատուների պէս քիչ էր մնում իւրար երես ճաղկորէիք... Եւ այն էլ ինչ յիմար, դատարկ պատ-

ճառներից... Բոյրերը այդպէս են լինում, ինչպէս դուք էիք:

ՎԱՐԴ. Իսկ եղբայրները այդպէս են լինում, ինչպէս դուք էք:

ԱՆ. Լաւ, լաւ, տեսնեմ, կարող էք, էլի սկսեցէք:

(Մտնում է Տիգրանը):

Տ Ե Ս Ի Լ 9.

Տիգրան, Աննա, Սամսոն, Վարդուշ.

ՎԱՐԴ. Տիգրան, Հրանոյշին չտեսնիր:

ՏԻԳ. (Անճանդիստ) Հ'ը ի՞նչ է պատահել... Ո՞ւր է գնացել...

ԱՆ. Խեղճ տղին ինչպէս վախեցրեց... Ը՛հ, առ, է՛, Ինչի՞ համար էնպէս վրայ պրծած հարցրիք (ծաղրելով) «Տիգրան, Հրանոյշին չտեսնիր». Հա, տեսաւ, ի՞նչ պիտի անես, ինչի՞ համար հարցրիք:

ՏԻԳ. (Երկմիտ) Տէր Աստուած...

ՎԱՐԴ. Այստեղ ի՞նչ վախենալու բան կար որ...

ՏԻԳ. Ես ի՞նչ իմանամ: Մի անգամ սիրտս ա՛հ է ընկել, կարծեցի, թէ էլի մի բան է պատահել... Հրանոյշը ռ՛ւր է, որ ասում էք. «չտեսնիր»:

ԱՆ. Խանութ է գնացել, խանութ, բան առնելու: Ը՛հ, Տիգրան: Դու էլ որ ամեն դատարկ բանի համար չես վախենում... Աղջիկ է, փող է վերցրել, գնացել բազար...

ՏԻԳ. (Սամսոնին) Դձու տուիր, Սամսոն:

ՍԱՄՍ. Այո, յիսուն մանէթ:

ՏԻԳ. Յիսսուն մանէթ... Ի՞նչ էր անում նա այնքան փող: Յետո՞յ, մենակ գնաց:

ՍԱՄՍ. Այո, բոլորովին մենակ: Ի՞նչ կայ որ...

ՏԻԳ. Մայրիկ, ես քեզ քանի անգամ ասել եմ, որ նրան մենակ չթողնէք դուքս գայ... Այսօր ատրճառակ է բռնում իր վրայ, վաղը իրան ծովը կը ձգի... Նա ամեն բանի ընդունակ է... նա խաթալու աղջիկ է:

ԱՆ. Ձէ, Տիգրան, Հրանոյշը էլ եղպես բան չի անի: Է՛նպէս է փռամանել, որ... Մտքովի էլ չի անցկացնի... Հիմի նա ինձանից ու քեզանից էլ շատ է դողում իր կեանքի վրայ:

ՍԱՄՍ. Իհարկէ, նա խրատուեց, ես հիմա հանգիստ եմ այդ կողմից:

ՎԱՐԴ. Ես էլ շատ հանգիստ եմ:

ՏԻԳ. Այնուամենայնիւ պէտք է զգոյշ լինել և աչքից չտալ... պէտք է հետևել նրան, ինչպէս երեխայի...

ՎԱՐԴ. Երեխայի... Ապա մի իրան էլ հարցրո՛ւ: Նա հիմա ասում է. «Ես տղամարդ եմ, տղամարդ»...

ՏԻԳ. Նա խորամանկն է: Այդպէս է ասում, որ իրան բարձեթող անենք... Թէ նա աղուէս է, հս նրանից աւելի աղուէս եմ... Ձէ, հս անհանդիստ եմ... Պէտք է զնալ նրա ետեւից... (կամենում է ղնալ:)

ՍԱՄՍ. Դէ հերթք է, դու էլ... Ի՞նչ կտակածուսն ես դառել:

ՏԻԳ. Վարդուշ, ես քեզ վրայ զարմանում եմ: Ուրիշ ժամանակ դու գլուխ կը ջարդես խանութ վնալու համար, ի՞նչու նրա հետ դուրս չեկար:

ՎԱՐԴ. Ինձ հմբ բան ասաց: Գլխարկը վերցնելն ու անհետանալը մէկ եղաւ:

ՍԱՄՍ. Դէ լմա, կոխ մի արէք: Ահա հէնց ինքը Հրաւնոյշը:

ՎԱՐԴ. (Վաղելով դրան մօտ) Նա է, նա է:

ԱՆ. (Որ նայնպէս մօտեցել էր) Էս ի՞նչ է քաշ տալիս Ալեքսանը: (Մտնում է Հրանայշը, յետոյ Ալեքսանը, որը չմոզանք ղնելով դրան մօտ յատակի վրայ, հեռանում է: Բոլորն ապշած իրար երեսին են նայում եւ զարմանքից կարծես քորացել են: Վարդինական լուծութիւն:)

Տ Ե Ս Ի Լ 10.

Աննա, Տիգրան, Սամսոն, Հրանոյշ, Վարդուշ:

ՍԱՄՍ. Հրանոյշ, այս ի՞նչ ճանապարհորդական պատրաստութիւններ են:

ՀՐ. Վաղը—ես գնում եմ:

ՍԱՄՍ. Այդ հւր, Աստուած յաջողի:

ՀՐ. Գաւառները:

ՏԻԳ. Բարի ճանապարհ:

ՎԱՐԴ. Մայրիկ, ինչեր է խօսում:

ԱՆ. Ես բան հասկանում եմ, որ քեզ ասեմ:

ՍԱՄՍ. Բայց ի՞նչ նպատակով, հւմ հետ:

ՀՐ. Դերասանական խմբի հետ, ներկայացումներ տալու:

ՏԻԳ. Ա՛...

ՍԱՄՍ. Դերասանական խմբի՞ հետ:

ԱՆ. Աղջիկ, երազ ես տեսել:

ՎԱՐԴ. (Մի կողմ) Խելագարուե՞լ է, ի՞նչ է:

ՍԱՄՍ. Հրանճյշ, բացատիր, խնդրեմ, ինչո՞ւմն է բանը: Մենք ոչինչ չենք հասկանում քո խօսքերից: Ի՞նչպէս թէ «վաղը գնում ենք... գերասանական խմբի հետ... ներկայացումներ տալու»... Ձլինի՞ գերասանուհի ես կամենում դառնալ:

ՀՐ. Այո, արդէն վճռուած է:

ՏԻԳ. Հ'ըմ...

ԱՆ. Պակասը դրսուում է... էլ ի՞նչ դարդ...

ՎԱՐԴ. Տեսնես, յանկարծ ի՞նչ փչեց խելքին:

ՍԱՄՍ. Է՛հ, յետո՛յ: Հիմա դու կատա՞կ չես անում:

ՀՐ. Ամենահին:

ՏԻԳ. Բայց ինչո՞ւ, ասա, խնդրեմ, դու ցանկանում ես մեղանից հեռանալ: Մենք քեզ քաղցած ու ծարաւ ենք թողնում:

ՀՐ. Ընդհակառակը, մինչև կեանքիս վերջը ես չեմ մոռանայ ձեր երախտիքը, դուք ինձ կերակրել էք:

ՏԻԳ. Գուցէ քեզ շորերի՞ց ենք զուրկ պահել:

ՀՐ. Բոլորովին: Երբ մտածում եմ, թէ որքան վողկեր էք ծախսել իմ հանդերձեղէնի վրայ, ես ինքս ինձնից ամաչում եմ:

ՏԻԳ. Ուրեմն... էլ ի՞նչ պատճառ ունիս դժգոհ լինելու մեղանից:

ՀՐ. Ես դժգոհ չեմ ձեզանից: Ես կամենում եմ միայն— բարոյապէս անկախ լինել ձեզանից:

ՏԻԳ. (հեպնալ) Բարոյապէս... անկախ...

ՀՐ. Ես կամենում եմ նոյնպէս բաց անել ձեր բախտի ճանապարհը, որ փակուած է իմ շնորհիւ:

ՍԱՄՍ. Դու հանելուկներով ես խօսում, Հրանճյշ: Աստուած սիրես, պարզ խօսիր:

ՏԻԳ. Հասկանում ես մայրիկ, թէ ո՞ւմ կտուրն է բար պցում:

ԱՆ. Ինձ բան մի հարցնէք... Ես պուխս կորցրել եմ:

ՀՐ. Դուք ցանկանում էք ապրել ձեր ուղածի պէս, իսկ ես խանդարում եմ: Ես կը հեռանամ, դուք կ'ազատուէք մի ծանրութիւնից և այն ժամանակ կ'ապրէք ձեր ուղածի պէս:

ՍԱՄՍ. Գլուխս մեռնի, թէ բան հասկանամ սրանցից... Ո՞վ ասաց, որ դու ծանրութիւն ես մեզ համար... Ո՞վ ասաց, որ դու փակել ես մեր բախտի ճանապարհը... Սա ինչէ՞ր է խօսում... Ինչէ՞ր է երևակայում... Դու օտմբ ես, ի՞նչ է, այս տանը... դու խորթ ես... դու մեր հարազատ քոյրը չե՞ս...

ԱՆ. Այ թէ որտեղ է ասուած. օձի կծածը կը սաղանայ, լեզուի կծածը չի սաղանայ: Մեր բարկացած ժամանակ մի

բան ենք ասել, հիմի էլ չի ուղում մոռանալ, ճար չկայ:

ՀՐ. Տէր Աստուած, ես հօ ձեզ չեմ մեղադրում: Ինչ որ ասել էք, դուք իրաւունք ունէիք ասելու: Ինչո՞ւ դուք պէտք է չարչարուէք, քրտինք թափէք, իսկ ես պարապ նստեմ, մատ մատի չտամ և վայելեմ ձեր աշխատանքի պտուղները... Ո՞ւր է է այստեղ արդարութիւնը... Ես հօ չեմ կարող, ճշմարիտ, մինչև վերջ, երեխայի պէս, մնալ ձեր խնամակալութեան տակ և ձրիակերի դեր կատարել: Ես չեմ կարող մինչև վերջ, ամեն մի դատարկ բանի համար, ձեռքս մեկնել ձեր առաջ և... ողորմութիւն խնդրել:

ՏԻԳ. Դա—ողորմութիւն չէ:

ՍՍՄՍ. Դա մեր եղբայրական պարտականութիւնն է:

ՀՐ. Ո՛չ, արդէն բաւական է: Ես արդէն վաղուց է չափափոս աղջիկ եմ: Իմ ինքնասիրութիւնը, իմ արժանապատուութեան զգացմունքը և, վերջապէս, իմ խիղճը բողբոջում են զրա դէմ: Ժամանակ է, որ ես էլ իմ պատիւը ճանաչեմ և փոքր ինչ յարգեմ իմ անձը:

ՏԻԳ. Հրանոյշ, դու, երևի, մեզ փորձել ես ուղում:

ՀՐ. Աստուած չմնի: Ի՞նչի համար:

ՏԻԳ. Իսկ եթէ դա լուրջ բան է, ուրեմն դու այդ միտքը գլխիցդ կը հանես:

ՍՍՄՍ. Ես ոչ մի կերպ չեմ կարող թոյլ տալ, որ իմ քոյրը գնայ և գերասանների հետ զաւառներումը թրե՛լ գայ. . Դա ամենաին պատիւ չի բերի մեր ընտանիքին:

ՏԻԳ. Ի՞նչ պատիւ... Մեզ նման եղբայրների երեսին կը թքեն... Մենք կը խայտառակուենք բոլոր ընտանիքով... ծաղր ու ծանակ կը շինեն մեր անունը... Իմ քոյրը—և թափառական գերասանուհի... .

ԱՆ. Լսում ես, Հրանոյշ...

ՀՐ. Տիգրան, դու մոռացել ես, ես քեզ կը յիշեցնեմ: Ձէ որ դու ինքդ ասացիր ինձ, որ դու էլ մարդ ես, ունիս քո սեփական ցանկութիւնները և կամենում ես ապրել քո ուզածի պէս: Այժմ թոյլ տուր և ինձ ապրել իմ ուզածի պէս, որովհետեւ ես էլ քեզ նման Աստծու ստեղծած մի արարած եմ և ունիմ իմ սեփական ցանկութիւնները...

ՏԻԳ. Բայց մի մոռանար, որ դու կին ես, իսկ ես—տղամարդ: Զանազանութիւնը մեր մէջ, կարծեմ, շատ մեծ է:

ՀՐ. Տէր Աստուած, ախր այն ո՞վ է անիծել կնոջը, որնա չունենայ իր սեփական ցանկութիւնները, իր սեփական աշխատանքը և իր կեանքը անցկացնի միայն զուարճութիւնների և դատարկութեան մէջ... Ո՛չ, հազար անգամ ոչ... Աշխատանքը օրհնութիւն է նաև կնոջ համար:

ՏԻԳ. Գիտե՞ս ինչ կայ, Հրանդյ՜, Լաւ լսիր ինձ: Երբ աղջիկը բոլորովին որբ և անտէր է, հա, այն ժամանակ ոչինչ չունի՞մ դրա դէմ. նա գնում է ուրիշների համար կար էանում, լուացք է անում, քոծութիւն է անում, մինչև անգամ իր ոտը վատ ճանապարհի վրայ է դնում—ի՛նչ արած—ապրել է պէտք: Բայց երբ ծնողները կենդանի են կամ ջուխտ ջուխտ եղբայր-ները կողքին կանգնած, այն ժամանակ աղջկան էլ ի՛նչ կը վայելի գնալ իրր թէ աշխատանքի ետևից... Դա ոչ թէ կանանց, այլ սղամարդկանց գործն է: Աղջիկը երբ հասաւ, պէտք է մտածէ իր մարդու գնալու մասին, իսկ երբ մարդու դնաց՝ իր տունը. պիտի կառավարի և իր երեխաներին մայրութիւն անի: Սրանք են կնոջ բոլոր պարտականութիւնները: Ուրիշ ոչինչ ես չեմ ընդունում:

ՍՍՄՍ. Իհարկէ, իհարկէ: Կինը իր ամուսնու, տան պահապանն է, օջախի պահապանը—և ուրիշ ոչինչ:

ՀՐ. Ես բոլոր էութեամբս դրա դէմ եմ... Ամուսին, ամուսին... Սիրող, լաւ ամուսիններ—այո՛, ես այդ հասկանում եմ... Բայց վատ, կուտարար, անբարոյական ամուսիններ—ահա ի՛նչն է զգուելի... Ես իմ մաքուր աշխատանքով ձեռք բերած մի կտոր հացը չեմ փոխի այդ տեսակ վատ ամուսնութեան բոլոր զուարճութիւնների հետ... (Պառուկա):

ՏԻԳ. Ուրեմն... Թողնե՛ք, որ գնաս... Ուրեմն—մենք չը կանք քեզ համար... Դու մեզ ոչ մի բանի տեղ չե՞ս դնում:

ՀՐ. Ի՞նչի համար ես այդ ասում... Աւելի լաւ չէ՞, որ մենք սիրով և հաշտութեամբ բաժանուենք... Եւ վերջապէս ես հօ ձեզանից ընդմիշտ չեմ հրաժարւում... Որտեղ էլ լինեմ, ուր որ էլ գնամ, ես միշտ ձեր կարօտը պիտի քաշեմ... Միշտ նամակներով կը խօսեմ ձեզ հետ, տեղեկութիւններ կը տամ իմ մասին... Ո՛նգրում, աղաչում եմ, դուք էլ ինձ չմոռանաք... (Զգացում, համարեա լալապիս) Որքան էլ վշտացրած լինեմ ձեզ, ես... այնուամենայնիւ... ձերն եմ... ձեր հարազատը...

ԱՆ. Ա՛խ, Աստուած ջան, ո՞ր մեղքերիս համար ես ինձ պատժում:

ՍՍՄՍ. Ա՛խ, Հրանդյ՜, դու այս ինչեր ես անում...

ՏԻԳ. Է՛հ, յետոյ... Իսկ ի՞նչ կը լինի դրա վերջը, դու այդ մտածելո՞ւ ես:

ՀՐ. Վերջը, Աստծով, շատ լաւ կը լինի: Ես անուն և գիրք կը վաստակեմ...

ՏԻԳ. Կարելի է: Բայց գիտե՞ս, թէ ի՛նչ գնով կը վաստակես անուն և գիրք... Գիտե՞ս, թէ ինչ տեսակ ցեխի մէջ կա-

րող ես ընկնելի դու... Հասկան՞ում ես արդեօք, թէ ո՞ւր կը տանի քեզ այն ճանապարհը, որ դու ընտրել ես...

ՀՐ. Իմ ընտրած ճանապարհը կը տանի ինձ դէպի փառք և Երջանկութիւն:

ՏԻԳ. (քնկեկով) Ո՛չ, այդ ճանապարհը քեզ կը տանի... դէպի խայտառակութիւն... և անկե՛մ...

ՀՐ. (Յուզուած) Բաւական է... պատիւը ճանաչիր... Ես... քո ասած կանանցից չեմ... Ես գնում եմ ազնիւ և մաքուր աշխատանքի... և ոչ թէ...

ՏԻԳ. (Խաղբիլով) Ազնիւ աշխատանքի...

ՍԱՄՍ. Տիգրան, հանդարտուիր:—Քոյրս, դու էլ:

ԱՆ. Հրանճյշ, առաջ մօրդ թաղիր, յետոյ էդ բանն արան (Լալիս է):

ՀՐ. Ախ, զուր էք խօսում: Արդէն վճռուած է:

ՎԱՐԴ. Հրանճյշ, մի՞թէ մայրիկին հետ խնայում... մի՛ սպանիր նրան...

ՏԻԳ. Եթէ դու այդ բանն անես, Հրանճյշ, ես քեզ կը համարեմ մեզ համար բոլորովին կորած: Գնան, եթէ կ'ուզես, կարող ես... համեցէք... (բաց է անում դուռը) Ահա—դուռը լայն բաց է քո առաջ... բայց լաւ իմացիր, որ այնուհետեւ դու այլ ևս չպիտի համարձակուիս ոտդ դնել այս գրան շէմքին և մեր աչքին երևալ... Գնան, ես քեզ այլ ևս չեմ խղճում: Գնան, թէ՛ կուզ ջուրն ընկիր:

ՀՐ. Ներողութիւն: Այդպիսի յիմարութիւն ևս այլ ևս չեմ կրկնի երբէք, որովհետեւ ևս այսուհետեւ կարող եմ ապրել իմ սեփական աշխատանքով: (Արալ անցնում է միւս սենեակը: Ամենքը վշտանար արձանացել են մոտտանջ գիւրքերի մէջ):

ԷԼԵԳԻԱ

Մեռնում է օրը... իշաւ թափանցիկ
Պատանքը մութի գաշտերի վերայ.
Ինչքան անչար է ինչպէս զեղեցիկ
Անաղմուկ նիրհը մահացող օրուայ...
Պարզ ջրի վերայ եղեգը հանդարդ,
Անդողոց կանգնած էլ չի շնչում
Լուռ մտածում են երկինք. գետ ու արտ.
Եւ ոչ մի շարժում և ոչ մի հնչիւն...
Ես կանգնած եմ լուռ. անչար է հոգիս
Թախիծս խաղաղ իրիկուայ նման.—
Ոչ անիծում եմ ցաւերը կեանքիս
Եւ ոչ տրանջում բախտիցս ունայն...

Վահ. Տ.—Գր.

ՃԵՄԱՐԱՆՑՈՒ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ*)

(1896—1902թ.)

Զատիկից յետոյ դասերի կարգը փոխուում է, 1896-ից մինչև 1900-ը օրական երկու դաս էր լինում, ամեն մի դասը երկու ժամ տևողութեամբ (մի ժամից յետոյ, ի հարկէ, դասամիջոց լինում էր): 1900-ից այդ կարգը փոխուեց, այնուհետև սկսեցին օրական 4 դաս, ամեն մի դասը մի ժամ տևողութեամբ: Առաջին տեսակը, այսինքն երկու դաս երկու ժամ տևողութեամբ, տղաների համար շատ ձեռնտու էր. նրանք միայն երկու դաս ունէին սովորելու. շատ անգամ պատահում էր, որ պէտք էր մէկ առարկան պատրաստել և կամ ոչինչ չպատրաստել: Իսկ եթէ չորս դաս է, այն ժամանակ կամ չորսն էլ պէտք է պատրաստել և կամ առնուազն ասին օր երկու առարկայ պէտք է պատրաստել, մի բան որ շատ դժուար է էջմիածնի շոգերին:

Դասերը ճեմարանում տևում են մինչև մայիսի վերջը, երբ քննութիւններ չկան, և մինչև մայիսի սկզբները, եթէ քննութիւններ կան:

Բանի պ. Ս. Մանդինեանը ճեմարանումն էր դասարանացոյց համար, բացի VІ-ից, քննութիւններ չկային, բայց հէնց որ յարգելի ժանկավարժը 1900-ի ժարտին հեռացաւ ճեմարանից, մայիսին արդէն միւս դասարանացոյց էլ քննութիւններ նշանակեցին այդ տարուայ աւարտական առարկաներից:

Դասերը վերջացնելուց յետոյ տղաները սկսում են քննութեան պատրաստուել: Այդ մի ամիսը տղաները կենդանի մեքենաներ են դառնում:

Թէ քննութիւնները աւելորդ են այդ գիտէ ասին մի ժարդ, ով դժբաղտութիւն է ունեցել, իր աշակերտական կեանքում մի

*) ՏԵՍ «Մուրճ» № 6.
Յունիս, 1906.

քանի անգամ «կտրմիր սեղանի» անաջ կանգնելու: Ճիշտ է աշակերտական կեանքում քննութիւններ տալը իրանց դասնութեանց հետ ունին և իրանց բաղդրութիւնները... միայն ապագայի յիշողութիւնների համար: Բայց այդ բաղդր յիշողութիւնները, շատ թանկ են նստում իրանց աշակերտների վրայ: Գոնէ քննութիւնից ազատէին տարուայ ընթացքում լաւ սովորողներին, ինչպէս որ այդ վերջերումս պետական դպրոցներում են սնում: Բայց ճեմարանում կարծէք ամեն բան թարս է գնում. այսպէս, երբ պետական դպրոցներից յունարէն լեզուն վերացնում էին, ճեմարանում, ուր անաջ չկար այդ լեզուն, 1897-ից սկսած յունարէն էլ մոցրին ճեմարանի պարտադիր առարկաների շարքում:

Մայիս ամսում եղանակը արդէն շոգ է էջմիածնում: Ճեմարանի Զ-ցիք և Գ. խարանցիք այդ շոգին ուղղակի նահատակում են: Ահագին թուով առարկաներից նրանք քննութիւն են տալու: Ամբողջ տարիների անցածը պէտք է մի քանի օրում պատրաստեն և քննութիւն տան:

Ճեմարանում հրապարակական քննութիւնը հանդիսարանում է լինում: Քննութեան բացի ուսուցիչներից ներկայ են լինում վանքի միաբանութիւնից շատերը:

Վերջապէս անցնում են քննութիւնները և ճեմարանցիք արձակւում են երեք ամիս ժամանակով: Պէտք է ասել, որ հէնց արձակուրդի մօտ լինելն է, որ հոգի է տալիս աշակերտներին և նրանք էջմիածնայ շոգերին կարողանում են պատրաստուել քննութիւնների համար:

Մայիսի 31-ին բոլոր ճեմարանցիք ազատւում եմ թէ դասերից և թէ քննութիւններից: Պէտք է տեսնել թէ ի՞նչ ուրախութիւն, ի՞նչ ցնծութիւն է տիրում դասարաններում վերջին դասից կամ վերջին քննութիւնից յետոյ: Նրանք յիշեցնում են այն ազատասէր թռչուններին, որոնք երկար ժամանակ փակուած են եղել վանդակների մէջ: Գալիս է գարունը, օրերը տաքանում են, դաշտերը զարգարւում են գոյնզգոյն ծաղիկներով: Թռչուններն այժմ աւելի ուժգնութեամբ են թևահարում և աշխատում դուրս թռչել վանդակի պատերից հեռու: Բայց իզուր, վանդակի ճաղերը շատ նեղ են, և մէկը չկայ որ օգնէ նրանց թռչելու, հեռանալու այդ բանդից, ազատ օդ շնչելու: Վերջապէս յայտնւում է այդ երանելի մարդը, նա բաց է անում վանդակի դռները և թռչունները թռչում են հեռու, հեռու, առանց յետ նայելու: Այսպէս անո ճեմարանցիք վանդակից ազատւած թռչունների նման, այս ու այն կողմ էին թռչում, որպէսզի որքան կարելի է շուտով հեռանան ճեմարանից:

Հայրենիք գնացողները հանդիստ, զադար չունեն, նրանք մէկ անգուկանոց են վաղում, մէկ հանգերձապահի մօտ, մէկ քարտուղարի, մէկ գրադարանապետի մօտ, այսպէս այդ երկու օրը մեղուինման այս ու այն կողմ են թռչկոտում, մինչև վերջապէս պատրաստուում են հայրենիք գնալու: Նա ստանում է և ճեմարանի վերակայուից ճանապարհի վկայականը, և եթէ վերաքննութիւններ էլ չունի (ճեմարանում մնացողներ շատ քիչ են պատահում, վերաքննութիւն շատերն են ստանում), ուրախ, զուարթ սպասում են կառքի գալուն, որ նստեն և հեռանան ճեմարանից:

Ուրախ են հայրենիք գնացողները. հեշտ է ասել, նրանք իննը ամիս շարունակ տնից, տեղից հեռու են մնացել, փափկուած մնացել են միևնոյն շինութեան մէջ, սովորել ու սովորել են: Բայց այժմ գէթ որոշ ժամանակով ազատուում են այդ արգելարանից: Նրանք այժմ հայրենիքում շուտ շուտ եկեղեցի չեն գնալու, պառ չեն պահելու, առաւօտները 5-ին կամ 6-ին չեն զարթնելու... Բայց երբ նայում են շուրջը և տեսնում են տաճկահայ ընկերներին և կամ նրանց, որոնք հնարաւորութիւն չունեն հայրենիք գնալու, նրանց ուրախութիւնը տրտմութեան է փոխում: Զէ՞ որ նրանք ևս հաւասար չափով չարչարուել, տանջուել են ճեմարանի չորս պատերի մէջ, չէ՞ որ նրանք ևս ծնողների և բարեկամների կարօտն են քաշում, չէ՞ որ նրանց հանգստութիւն է հարկաւոր, պէտք է պատրաստուել սեպտեմբերից նորից նոյն կեանքը սկսելու: Բայց այսօր նրանք ստիպուած են սովորուած կրեք ամիսների մեծ մասը էջմիածնի շոգերին տապալուելու: Ո՞վ պէտք է նրանց մասին մտածէ...

Այժմ վերջացնենք մեր յիշողութիւնները:

Ճեմարանոց առաջին և՛ մեծ պակասութիւնը, որ տարիների ընթացքում արմատանում է նրանց մէջ, դա է անատարբերութիւնը: Անտարբեր է ճեմարանցին ճեմարանում, անտարբեր է հայրենիքում, անհետաքրքիր է ճանապարհորդութեանց ժամանակ, մի խօսքով ամեն բանի մէջ կրեւում է ճեմարանցու առաջին յատկանիշը՝ անտարբերութիւնը: Անտարբերութիւնը ճեմարանցու մէջ ծնեցնում է ինքը ճեմարանը, որին շատ նպաստում է ներկայ վարչութիւնը: Եղել է ժամանակ, որ ճեմարանում ևս եռուն կեանք է տիրել, եղել են լսարանցիք, որոնցից պատկառել են թէ ուսուցիչները և թէ վերակայունները, եղել են կուսակցութիւններ, մտքերի շփումն, ընկերական կեանք և այլն: Բայց մասուանդ 1894 թուից սկսած, ճեմարանից արտաքսուել են լուրոր այն «ըմբոստները», որոնց շնորհիւ և կեանք է եղել ճեմարանում: Մեր ժամանակներում արտաք-

սուեցան նրանց մնացորդները, թուով 6 հոգի, այնպէս որ 1897-ից յետոյ շատ քչերը կային, որոնք կարող էին «վտանգ» սպառնալ ճեմարանի ընդհանուր «խաղաղութեանը»:

Եւ ճեմարանի վարչութիւնը ինքը մի այն տեսակ կեանք է ստեղծել ճեմարանում, որ «ըմբոստները» իրանք թողնում ու փախչում են: Գեմարանում մնում են «անճարները» և ճեմարանի վարչութեան «հըռ հարադատ զաւակները»:

Ի՞նչ կարելի է սպասել այն միջնադարեան վարդապետներից, որոնք առանց քաջութիւն գալիս են լսարան և յայտնում են որ «ճեմարանի վարչութեան նպատակն է վերջի վերջոյ լսարանները դարձնել աստուածաբանական Ֆակուլտետ» և այս խօսքերը ոչ թէ մի, այլ մի քանի անգամ են լսել ճեմարանի լսարաններում: Բացի դրանից հանդիսաւորապէս յայտարարուել է, թէ ով հակառակ է այս բանին, այդպիսիների առաջ ճեմարանի դռները բաց են: Զարմանալի չէ որ ճեմարանի դռները իսկոյն բացուում են «հերետիկոսների» առաջ, զարմանալիս այն է, որ հարիւրաւոր աղաների բախտը յանձնուած է մի քանի վեղաւորների ձեռք, որոնք հայոց ազգի հոգու փրկութեան ցաւով են բռնուած: Սիրոյ վարդապետի յաջորդները միշտ սրով ու հրով են յառաջ ընթացել միշտ յառնուն այդ սիրոյ վարդապետի: Հազարաւոր մարդիկ խարոյկ են բարձրացել մարդկանց չը «խմորելու» համար: Իսկ այսօր նոյն այդ Սիրոյ վարդապետի յաջորդները հարիւրաւոր երիտասարդների համար «աստուածաբանական Ֆակուլտետ» են ուզում ստեղծել, որպէսզի հայոց մոլորեալ ազգին կարողանան ուղիղ ճանապարհի վերայ բերել: Այս է ահա ճեմարանի վարիչների բուն նպատակը, նրանց իգէալը, նրանց տենչանքները. եթէ հայ ժողովուրդ, դու չես հաւանում այդ տենչանքներին—անտարբեր մի մնա, օգնիր թէ միջամտութեամբ և թէ բարի խորհուրդներով, որպէսզի գործը աւելի արդիւնաւէտ լինի...

Ճեմարանցին շնորհիւ այն պայմանների, որոնց մէջ ապրում է նա, ինչպէս ասացինք, դաւնում է անտարբեր. նա փակուած է ոչ միայն ճեմարանի «չինական» պարիսպների մէջ, այլ նա փակուած է ինքը իր մէջ: Կան տղաներ, որոնք փոքր դասարաններից արդէն սկսում են լրջանալ, քաջուել ընկերներից. մենակ, մտախոհ ման գալ. հասնում է լսարանները՝ մտալու թիւնը այլևս չի հեռանում գէմքից: Այսպիսիները զըլ խաւարապէս նրանք են, որոնք ամառ ձմեռ ստիպուած են ճեմարանում մնալու: Իսկ այն տղաները, որոնք ամառը հայրենիք են գնում, նրանք քիչ թէ շատ ազդուում են զրօր կեանքից: Եւ ճեմարան գալով աշխատում են ընկերական շրջաններ կազմել:

Քայց պէտք է նկատել, որ այն աշակերտները, որոնք տղաներից շատերի հետ մտերմական յարաբերութեան մէջ են, մանաւանդ, եւր ընկերները ոչ մի տեղացի են և ոչ էլ միեւնոյն դասարանցի, այն ժամանակ այգպիսիները աւելի շուտ կասկածի տակ են ընկնում թէ տղաների և թէ վարչութեան կողմից: Այնուհետև տղաները սկսում են իրար ականջի «փսփսալ»: Ահա այդ անիրաւ «փսփսոցն» է, որից շատերը վախենում են, և աշխատում են կամ դասարանցիների և կամ հայրենակիցների հետ ընկերակցութիւն ունենալ: Հետեապէս, տղաներից շատերը ստիպուած են խուսափելու ընկերական շրջաններ կազմելուց, մտքերի շփումն ունենալուց: Բացի այն որ ճեմարանցին փակուած է ճեմարանի պարխապների մէջ, բացի այն, որ նա զըրկուած մարդիկ տեսնելու հնարաւորութիւնից, նա նոյնիսկ չի վստահանում ցանկացած տղաների հետ մտերիմ յարաբերութեան մէջ լինել, մանաւանդ եթէ այդ տղան ոչ իր հայրենակիցն է և ոչ էլ դասակիցը: Շատ քչերն են, որ այնքան քաջութիւն ունին, որ կարող են բանի տեղ չը դնել զանազան ասէկոսէսեր կամ «փսփսոցներ»: Ճեմարանցու մխիթարութիւնը միայն անկեղծ ընկերական յարաբերութիւնների մէջ է կայանում, բայց տեսէք, որ նա զբանից զրկուած է, զանազան խօսակցութիւնների տեղիք չտալու համար...

Սակաւ բացառութեամբ ճեմարանցին անտարբեր է նաև հայրենիքում: Ճեմարանցին իր հետ արմատացած անտարբերութիւնը տանում է իր հետ հայրենիք: Նա աշխատում է այն պահանջներին բաւականութիւն տալ, որոնցից ինքը զուրկ է եղել: Այսպէս նա ճեմարանում շարունակ եկեղեցի է գնացել: Ճեմարանցին, եթէ ստիպուած չէ, ամբողջ ամառուայ ընթացքում մի կամ երկու անգամ է եկեղեցի դնում: Ճեմարանում ճեմարանցին պաս էր պահում, հայրենիքում այլևս պասի երես չի տեսնում: Ճեմարանցին ճեմարանում շուտ էր վեր կենում, այժմ հայրենիքում 8-ին կամ 9-ին հազիւ է վեր կենում: Ճեմարանցին ճեմարանում մարդու երես չէր տեսնում, զժրպիտաբար, ճեմարանցին հայրենիքում ևս չի ուզում մարդկանց հետ զործ ունենալ. շատ զարմանալի է, բայց սա զառն ճշմարտութիւն է ճեմարանցոց մեծամասնութեան համար: Ճեմարանցին սիրում է տանը նստել, դուրս չգալ: Քաջում է հառարակութեան մէջ երկալուց. խոյսէ տալիս ընկերութիւններից և այլն: Սրա պատճառը, բացի անտարբերութիւնից, կարող է լինել և այն, որ ճեմարանցու նոյն իսկ շորերը այն տեսակ է կարւում, որ այնպիսի շորերով և անման ճեմարանական ֆէսով զժուար է հասարակութեան մէջ երևալ: Շորե-

րի կարճութիւնը (ըլիւզիների) անհամեստութիւն է համարուած, դրա համար այնքան երկար են անում, որ քիչ է մնում մինչեւ ծնկները հասնի: Ինչքան երկար, այնքան հազնոզը համեփտ կը լինի... Ինչ հոգ թէ երկար շորերն էլ միայն ծիծաղ են յարուցանում:

Ուրեմն ճեմարանցիներն էլ պէտք է միղային հետեւն— գուցէ զարմացմամբ և վշտացած կը հարցնէ ճեմարանի վարչութիւնը: Ոչ! պարզ, յարմար և վայելուչ հագուստ: Թէ ինչ տարազով, թէ ինչ շորերով են շրջում մանաւանդ ամառը ճեմարանցիները շատ անգամ քաղաքներում, գուցէ ընթերցողներից շատերը առիթ են ունեցել տեսնելու, մենք աւելորդ ենք համարում այստեղ կրկնելու: Նոր մահդէ շորեր էլ չեն տալիս որ ճեմարանցին ամառը հայրենիք տանէ. այդ շորերը մնում են ճեմարանում, յաճախ դառնում ցեցերի կերակուր...

Սրանք գուցէ չնչին բաներ են, որոնց մասին չարժէ խօսել անգամ. բայց իզուր էք այդպէս կարծում. լաւ հազնուել, մարութիւն հազնուել, ճաշակով հազնուել բոլորի պարտականութիւնն է, նա մանաւանդ ճեմարանի աշակերտներին, որոնց վրայ ամեն տեղ աւելի հետաքրքրութեամբ են նայում: Ոչ մի ժամանակ չի կարելի թոյլ տալ, որ քիչ թէ շատ կրթուած մարդը թոյլ տայ իրան անմարութիւն հազնուելու և այն էլ այն ձևով որ ուրիշներին ծիծաղը յարուցանէ: Բայց ճեմարանցիք իրանք հարուստ չեն որ կարողանան սեփական շորեր կարել տալ երեք ամսուայ համար, իսկ ճեմարանի տուածներն էլ գոհացիցին չեն: Ճեմարանցիներին շատերը չեն կարողանում սիպհական գլխարկ տանել, երեսի ճեմարանական ֆէսից աղատուելու համար...

Ճեմարանցւոց շատերի համար ապարդիւն է անցնում ամառը. ճեմարանցին մի քանի շաբաթից յետոյ սկսում է հայրենիքում ձանձրանալ և օրեր է համարում, որ ճեմարան գնայ այն ճեմարանը, որտեղ կեանքը այնքան ծանր է անցնում իրան ճեմարանցու համար... Բայց խօսմ պարապութիւնից լաւ է:

Ճեմարանում ամառը մնացող աշակերտները խումբ-խումբ գնում են ճանապարհորդելու: Երկու անգամ եղել է նաև մեծ խմբերով կարգին կազմակերպուած ճանապարհորդութիւններ: Ճեմարանցիք գնում են գլխաւորապէս հին վանքերը: Այսպէս էջմիածնից դուրս են գալիս գընում են, Երևան, այգտեղից— Գեղարդայ, Այրի վանք, այստեղից էլ Նոր Վիրապ: Նոր Վիրապից Դաւալուով կամ Նոյն ճանապարհով դառնում են Էջմիածին: Սա մի շրջան: Բ. շրջան. Երևանից Սևան, Սևանից Դիլիջան, Հաղարծին, Գոշ. Մխիթարայ վանք, Մարց, ապա Հաղբատ, Սանահին, Ղարաբիլիսո-Աղեքսանդրապոլ-Կարա-Բէշ

Քելլիսէ, Անի, Հառիճ: Մի քանի տարի առաջ Հառիճը ամառանոց է եղել ճեմարանի աշակերտներու համար: Այնպէս որ Հառիճը կարելի էր նրանց վերջին կայարանը համարել: Երկու մեծ խմբեր Կ. վ.-ի և Գ. վ.-ի առաջնորդութեամբ գնացել են Դարալագեազ և Շուշի ու Գանձակ քաղաքները: 1902-ին մի քանի աշակերտներ Տաթև էլ գնացին: Ճեմարանի աշակերտներէն ամառը եղել են նաև Ն. Նալճևանի ս. Խաչ վանքում: Երկար ժամանակով մնացել են աշակերտներէն Սեւանում, Սանահնում, Բէշ-Բիլիսէյում, Գեղարդում և Տաթևում:

Ինչպէս տեսնու՞մ էք, ճեմարանցիները հազդին շրջաններ են կատարում. միջին Ռուսահայաստանը մեծ մասով ոտի տակ են տալիս, տեսնենք ինչ արին այն երկու մեծ խմբերը, որոնք գնացել էին Դարալագեազ իսկ Բ. խումբը Կ. վ.-ի առաջնորդութեամբ անցել էր նաև Շուշի և Գանձակ քաղաքները:

Այդ երկու խմբերից շատ բան ունենք պահանջելու, որովհետև բոլորն էլ լսարանցիներ են եղել, ուրեմն բոլորն էլ քիչ-շատ հասկացող մարդիկ: Այդ խմբերը ամեն յարմարութիւն ունեցած պէտք է լինեն, քանի որ վարդապետ առաջնորդներով էին գնացել: Ի՞նչ արին, ի՞նչ չարին—այդ մասին հաստատ ու չինչ չենք կարող ասել: Միայն մի երեկոյթ եղաւ ճեմարանու ֆ, այնտեղ հանգէս էին բերուած հին դրամներ, ձեռագիրներ, որոնք բերուած էին ճանապարհորդութիւնից, խօսուեցան նաև ճանապարհորդական տպաւորութիւններէն: Սրանից աւելի ու չինչ: Մենք սպասում էինք որ «Արարտում» կամ մի ուրիշ հանգէսի մէջ լոյս կը տեսնէին աւելի ընդարձակ ճանապարհորդական նկատողութիւններ: Իդեալ:

Այդ ճանապարհորդութիւնները ոչ թէ պատահական պէտք է լինէին, այլ պարբերական: Եւ որ գլխաւորն է ճանապարհորդները պէտք է ունենան մի որոշ նպատակ, որոշ ծրագիր: Ճեմարանը դրա համար որոշ գումար պէտք է ունենայ:

Թէ ո՞ր աստիճան ճեմարանցին անտարբեր է նաև ճանապարհորդութեան ժամանակ՝ այդ երևում է հետևեալ փաստից:

1899-ին երբ Սանահնից եկանք Հաղբատ, այնտեղ պատահեցինք նաև մի քանի լսարանցիներ (նրանցից երկուսը Լոռեցի էին): Հետևեալ օրը Հաղբատից դուրս եկանք և Սանահնի հոշակաւոր կամուրջին հասանք, այնտեղ պատահեցինք մի հայ աստիճանաւորի: Սովորական բարեկից յետոյ, երբ խմացաւ, որ Հաղբատից ենք դալիս, աստիճանաւորը հարցրեց. «Ասէք տեսնեմ, ինչ տեսաք Հաղբատումը»: Երբ մեր լսարանցի ընկերներից մէկը պատասխանեց. «Վանք էր էլի, ուրիշ ինչ պիտի տես-

նէինք», պաշտօնեան ասաց. «Ես էլ գիտեմ որ վաճառ է, չէ որ դուք ճեմարանի աշակերտներ էք, կարդացող մարդիկ, ասէք, ինչ նոր բան տեսաք, մեզ էլ ասէք»: Մենք ստիպուած էինք կարմրելու պաշտօնեայի առաջ, այն պաշտօնեայի, որ մեր կարծիքով ամենեւին չպէտք է հետաքրքրուէր Հաղբատով կամ Սանահնով: Բայց իրականութիւնն այն էր, որ նա, այդ պաշտօնեան, աւելի էր հետաքրքրուում Հողբատ-Սանահնով, քան մենք ճեմարանցիներս...

Ճեմարանը իբրև մի գիշերօթիկ հաստատութիւն իր սաների մեծամասնութեան մէջ, մանաւանդ այն սաների, որոնք ամբողջ տարին ճեմարանումն են մնում, զարգացնում է հասարակութեան, փառասիրութեան զգացումները, տարիների ընթացքում չոր սեղանների և ճնշող բեժիմի տակ ապրելով նա իր զգացմունքները աւելի կոպտացնում է, բնաւորութիւնը աւելի կոշտանում է:

Ճեմարանցին զուրկ լինելով ընտանեկան կեանքից, զուրկ է նաև ընտանեկան զուարճութիւնից, մօր փայփայանքից, որոնք ազնուացնում, տաշում են մարդկանց: Կոմիտասի քաղցր երգեցողութիւնը կարող է որոշ բարեբար ազդեցութիւն ունենալ զուրկ միայն երգեցողների վրայ: Միւսներն էլ զուրկ ազդում են, բայց շատ չնչին պէտք է լինի գեղարուեստական այդ ազդեցութիւնը:

Ճեմարանցին զուրկ է և կանանց շրջանից, ահա պատճառը նրա կոպիտ զգացումների: Դժբախտաբար շատերը ճեմարանցիներից նոյն իսկ ամառը փախչում են կանանց հասարակութիւնից:

Կանանց ազնուացնող, մեղմացնող ազդեցութիւնը ամենագեղեցիկ կերպով որոշում է ամենամեծ բանաստեղծներից՝ Շիրերը իր «կանանց արժանիքը» ոտանաւորի մէջ: Մեր նոր գրականութեան նահապետ Խ. Արովեանը, որ այնքան ջնքմ սիրով սիրում էր իր հայրենի երկիրն, ու ժողովուրդը, Դորպատում մեծ մասամբ օրիորդի ազդեցութեան տակ է եղել: Նրա բարեբար Պարբօտ պրօֆէսորը, շատ լաւ իմանալով որ Խ. Արովեանը ինչ դաստիարակութիւն կարող էր ստանալ վանքի պատերի մէջ, յանձնում է նրան կանանց հսկողութեան: «Իրօք սա միակ միջոցն էր, որ եթէ մէկը կամենում է մեղմացնել իր բարքը, որքան ծանօթութեամբ և բարեկամութեամբ մօտենայ կանացի սեռին, այնքան կը կրթուի, կ'ազնուանայ նրա բարքը»: Այսպէս և ուսւմ մեծ փիլասոսն և փիլիսոփայ Տալստոյ իր «Война и миръ» վէպի մէջ ասում է. «Ոչ մի բան այնքան հարկաւոր չէ երիտասարդ մարդուն, որքան գեղեցիկ, զարգացած

կանանց դասակարգը»։ Եւ սրանք այնպիսի պարզ ճշմարտութիւններ են, որ բացատրութիւնների կարօտ չեն։

Կանանց զօրութիւնը աւելի շօշափելի կերպով յայտնի պէտք է լինի իրանց ճեմարանցոց համար։ Ճեմարանից քիչ հեռու միևնոյն վանքի շրջապարտւած, ապրում է մի դասակարգ, որ նոյնպէս զուրկ է կանանց հասարակութիւնից։ Թի 'իսկ է այդ «անկնիկ հասարակութիւնը» մենք աւելորդ ենք համարում դրանց մասին խօսելու. ընթերցողներից շատերը շատ անգամ լսել ու կարդացել են այդ մարդկանց մասին...

Ճեմարանցին ապրելով ընկերների նեղ, սահմանափակ շրջանում, իսկ շատ անգամ այդ ընկերական շրջանից էլ դուրկ չինելով, դառնում է բիրտ, հաստէր, ինքնահաւան «սեմենարիստ», որ ամեն բանից վեր է դասում իր անզուսպ եսը, և եթէ մէկը համարձակուի նրա ետին մի քիչ կպչել, նա ամեն միջոց յանձն կ'առնի վրէժ առնելու իր ետին կպչողից։ Պատահել են դէպքեր, երբ մի ամենաչնչին խնդրի համար ահազին վէճեր են բացուել և պատճառ դարձել տասնեակ տղաների արձակման վճիռ արձակելուն...

Վերջացնում ենք մեր խօսքը դիմելով հասարակութեան. ափսոս է ճեմարանը, պէտք է նրան դարձնել իսկական պայծառ ջահ մեր խաւար, թշուառ ժողովրդի համար. հեռու նրանից կղերականների անշնորհ խնամակալութիւնը, հեռու նրանից և թայֆայական ոտնձգութիւնները։ Խաղաղ, կանոնաւոր, լուսաւոր, թարմ կեանքի մէջ միայն կը դաստիարակուեն խոհուն, սուաջագէտ, ժողովրդասէր սերունդներ այդ տաճարից։

Արդոս

ՄԵՂՄԱՅՈՒՅԻՉ ՊԱՐԸԳԱՆՆԵՐ

Պատմուածք.

Մարիս Լըվէլի

Տիկին Ֆրանսուազ իր գաւկին ձերբակալութիւնը լրացրէն իմացաւ:

Լուրը իրեն այնքան հրէշային թուեցաւ, որ չուզեց հաւատալ: Գո՛ղ, ոճրագո՛րծ իր գաւակը, իր սիրասուն, քաղաքավարի, ամաշկոտ գաւակը, որ ամիս մը առաջ իր մօտ եկած էր՝ Զատիւան արձակուրդը անցնելու...: Կը պատկերացնէր անոր բարի գէմքը հետեակ զինուորի համազգեստին մէջ: Դեռ կը զգար խորշոմած այտերուն վրայ անոր հրածեշտի ջերմ համբոյրին գգուանքը, ու մտքին մէջ այս անուշ և հանդարտ յիշողութիւնները յուզելով՝ ցնցեց ուտերը և ըսաւ.

—Ձէ, սխալած եմ. գաւակս չէ յանցաւորը:

Բայց և այնպէս թերթին մէջ խոշոր գրելով իր գաւակին անունն ու ազգանունը արձանագրուած էր «Ոճրագործ Զինուոր մը» վերնագրին տակ, ու զէպքը տեղի ունեցած էր անոր դատուած գործնոցին մէջ:

Անշարժ, ահաբեկ, ակնոցը ճակտին վրայ բարձրացուցած, ձեռքերը ծալած, բերանը դողդողջուն, ինքն իրենը խօսելով, կեցած էր խոհանոցի գաղջ լուսթեանը մէջ: Կը նայէր՝ առանց տեսնելու՝ բաց գոտն մօտ ընդարձացած ձեր շանը և պատի ժամացոյցին, որ իր պահարանին մէջ ծանր ու յաջորդական թիքթաքով ժամանակը կը կտրէր:

Մէկը ներս մտաւ: Տիկին Ֆրանսուազ տեղէն ցատկելով հարցուց.

—Ո՞վ է:

Իր զրացուհին էր: Որպէսզի այդ կինը իր յուզումը չգուշակէ, ըսաւ.

—Կը քնանայի. ինչքան տաք կ'ընէ:

Նւ ինք, որ ընդհանրապէս սակաւախօս ու քաշուող էր, հիմա անընդհատ կը խօսէր, հարցումներ կ'ուզէր և պատասխանը ինք կուտար, ժամանակ չձգելով որ կինը զինքը հար-

ցափորձէ. ու այս անկապակից խօսքեր ըսած ատենը՝ ինք իրեն կը հարցնէր. «Արդեօք գիտէ:»

Այլևս խօսելու նիւթ չգտնելուն՝ լռեց:

Դրացունին նշանակելից ձեռով հարցուց.

— Ո՞րքան ատեն է որ ձեր զաւկէն լուր չունիք:

— Այս տուտօս նամակ առի:

Ձայանից թէ ինչ լուր ստացած էր: Յանկարծ մեծ պէտք մը զգաց միտթարուելու, ապահովուելու, լսելու իր ձայնէն տարբեր ձայն մը, որ զայրանայ, յայտարարէ. «Սխալ է. ոճրագործը ան չէ:»

Ու թերթը կնոջը ցոյց տուաւ և կատակելու ճիգով մը ըսաւ.

— Կարգացի՞ք այստեղ գրուածը. զարմանալի է, չէ՞:

Արտևանունը արցունքով լիցուն և յուզումնահղձ աւելցուց.

— Ի՞նչ ապուշ եմ հղեր...: Առաջին անգամ կարգալուս գող ելայ...: Ի՞նչ ապուշ եմ հղեր:

Դրացունին միշտ լուս կը մնար: Միւսը կը կրկնէր.

— Չարմանալի է, զարմանալի:

— Այո, զարմանալի է որ նոյն անունով երկու զինուոր գտնուին միեւնոյն զօրագունդին մէջ:

Մեծ շունչ մը առնելով, պառաւը ազադակեց.

— Ես ալ մտածեցի այդպէս...: Երկու հոգի կան նոյն անունով...: Ոճրագործը գուակս չէ:

Չկոտեմ, ըսաւ կինը: Երեւի...: Դուր էր թէ ձեր զաւակը չըլլար, որովհետեւ կ'ենթադրուի որ ինքն է...: Արդէն կը խօսին որ տակտուագործին 300 ֆրանգն ալ ան գողցած է, երբ արձակուրդով այստեղ եկած էր:

Մայրը տմզոյն, բուռնցքը սեղմած՝ ոտքի ելաւ.

— Ի՞նչպէս կարելի է այդպիսի ամբաստանութիւններ ընել...: Ոճրագործը ան չէ, ոչ, ան չէ...: Ձեք ամչնար...: Ձեղ թի՛նչ ըրինք, որ այդպէս մեր ետեէն ինկած էք...: Խեղճ զաւակս...: Շուտով յայտնի կ'ըլլայ թէ յանցաւորը ո՞վ է...:

Եւ առանց դուռը փակելու, առանց նոյնիսկ ոտնամանները հագնելու՝ վաղեց մինչև կայարան:

Ժամը եօթին մօտ քաղաք հասաւ: Ուղևորութեան ժամանակ իր սարսափը աւելի մեծցած էր: Այլևս չէր ըսեր. «Անկարելի է», այլ «Մի գուցէ ճիշտ ըլլայ»: Ճանապարհը իրեն անվերջանալի թուեցաւ: Իր աչքին առջևէն կ'անցնէին գիւղեր, գաղտեր, հեռագրական ցիցեր և թիւեր, որոնք կը

բարձրանային ու կ'իջնէին գլխի պտոյտ տուող տատանումներով:

Երբ գնացքը կանգ առաւ, սկսաւ դողալ, մտածելով որ շատ շուտ մօտիկացած էր այն վայրկեանը, ուր իրողութիւնը պիտի պարզուէր: Աղօթքներ կը մրմնջէր, և աղօթքներուն պահատանքներ կը կցէր, որոնք անզգալաբար իր շրթունքին վրայ կուգային:

—Ո՛վ Սուրբ Կոյս, անշուշտ դուն չուզեցիր որ այս բանը պատահի...: Գիշ ետքը ի՜նչ աղօթքներ պիտի ընեմ քեզ:

Վանդակապատին ետև՝ զօրանոցին սպիտակ բակը իր քառակուսի շէնքերով կը տարածուէր: Դռան սեմին վրայ զինուորներն նստած կը ծիծաղէին, կը խօսէին իրիկուան խաղաղութեան մէջ: Իր զաւկէն սորված էր զանազանել զինուորական աստիճանները: Յաջգալիւր՝ կանգ առաւ:

—Ներդուրթիւն, պարոն սպայ. բան մը կ'ուզեմ հարցնել ձեզ...:

Վարանեցաւ, չհամարձակելով յայտնել իսկոյն ինչ որ իրեն այնքան մտահոգութիւն կը պատճառէր:

—Ձաւկիս ժիւլ Միշօնի մասի կ'ուզեմ խօսիլ, որ Յարգօրաբաժնին մէջ կը ծառայէ...: Կը փափաքէի իմանալ թէ կարելի՞ է արդեօք զինքը տեսնել...:

Փորձեց ժպտիլ:

—Ես իր մայրն եմ... իր սիրելի մայրիկը...: Ի՜նչ, կարելի չէ... Ծեր է... հիւսնու է...: Ի՞նչ... այո, գիտեմ...: Բայց, բան մը չեմ գիտեր... Պատժուած է, ոտիկանատուտն է. կ'ըսէք...: Ո՛չ... բանտը...: Զինուորական դատարանին առջև պիտի ներկայանայ...:

Գլուխը ծածկեց ձեռքերուն մէջ:

—Սուրբ Աստուածածին, ուրեմն իրաւ է, Սուրբ Կոյս:

Դողող Քայլերով հեռացաւ և զինուորական բանտը գիւմեց: Հոն իրեն ըսին որ արգիլուած է հետը խօսիլ, և այս արգիլքի հրամանը շուելի մեծցուց իր սարսափը: Պատկերացուց իր որդին՝ բանտարկուած, մինակ, յաւիտենապէս աշխարհէն կտրուած: Իրեն խորհուրդ տուին երթալ փաստաբանին հետ տեսակցիլ: Նոյն դեպքուն քայլերով զնաց փաստաբանին մօտ, և անկէ իմացաւ ամբողջ ճշմարտութիւնը: Անկարելի էր այլևս տարակուսել: Ձաւակը մարդ սպաննած էր զողութեան նպատակով: 300 ֆրանքի չափ զրամ գտած էին իր յարդէ անկողնին մէջ, ու մանաւանդ որ խոտտոփանած էր թէ ինքն է ոճրագործը:

Երբ տեսաւ որ զուր տեղն է լալն ու պաղատիլը, չպի-

տի կրնայ զաւակը տեսնելու, յուսահատ՝ գիւղ վերադարձաւ։ Եղելութիւնը ամենքին ծանօթ էր հիմա։ Խօսակցութիւններէ ու նայածքներէ խուսափելու համար՝ դիշերանց տուն մտաւ։ Խղճուկ անասունի մը պէս որ հարուածներէ պաշտպանուելու համար կը պահւերտի, փեղկերը փակած՝ տունէն դուրս չէր ելլեր։ Ամէն առաւօտ, դողահար, կը վերցնէր դռան տակ քշուած լրագիրը, որու միջոցով հետզհետէ տեղեկացաւ ոճիրին բոլոր մանրամասնութիւնները և զաւակին վրայ ծանրացող բոլոր ամբաստանութիւնները։ Իբրեւ վկայ դատաւորին ներկայացող անձերը ամենքն ալ միաձայն հաստատեցին որ տակառագործը կողոպտողը Միշօնն էր։ Չէ՛ այդ անկարելի էր. երդում կարող էր ընել որ այդպէս չէ։ Սակայն յետոյ այդ գողութեան մասին ալ սկսաւ իր զաւակին վրայ կասկածիլ։

Ամիս մը հտքը նորէն փաստաբանին մօտ գնաց. այս անգամ այլևս չինչքեց իր որդին տեսնել, ոչ թէ անոր համր որ այլևս չէր սիրեր, չէ... այլ ամհնայուն...։

Ինչ պիտի ըլլայ զաւակիս վիճակը, պարոն։ Թոյլ չպիտի որ տաք ձեռքէս խլեն։

— Խեղճ կ'ին, կը վախնաս որ բան մը չկրնամ ընել... Երանի՛ թէ կարողանայի մեղմացուցիչ պարագայ մը գտնել։

— Ինչ ըսիր։ Մեղմացուցի՞չ... Ինչ կը նշանակէ աս։

— Կը նշանակէ պարագայ մը, որ դատաւորներու աչքին յանցանքին ծանրութիւնը կը նուազեցնէ։ Օրինակի համար, երբ մէկը գողնայ և կարելի ըլլայ հաստատել, որ գողութեան շարժառիթը ազբառութիւնն է եղած, ինչպէս նաև ստուգուի որ գողցած է իր զաւակներուն հաց տալու համար, անառայտեղ մեղմացուցիչ պարագայ կայ։ Մինչդեռ ձեր զաւակը տոածին անգամ չէ որ կ'ամբաստանուի թէ և գողութիւնը կ'ուրանայ, բայց...։ Վերջապէս պիտի փորձմ ինչ որ մարդկայնօրէն հնարաւոր է փորձել։

Տիկին Ֆրանսուազ տուն դարձաւ՝ ալ աւելի յոգնած և աւելի ցաւատանջ։ Միտքը կը չարչարէր «Մեղմացուցիչ պարագայ» բառերով։ Ո՛րքան կը փափաքէր գտնել արդարացում մը որու շնորհիւ կարողանար սպասել քիչ մը ներդաժնութիւն...։ Բայց ոչինչ չէր գտներ։ Միայն ոճիրը ու հրէշային բացայայտ էր, և ոչ մէկ բան կը զօրէր անոր սարսափը պզտիկցնելու...։

Երբ դատաւարութեան օրը հասաւ, տունէն մեկնեցաւ՝ բարձրանալու համար իր դողգոթան։ Գնացքին մէջ կ'աղօթէր, բոլոր սուրբերը օգնութեան կը կանչէր. ու իր դատարկ գլխին մէջ՝ այնքան յաճախ կրկնուած «Մեղմացուցիչ պարագաներ» բառերը կը ննչէին, ինչպէս թակաղը զանգուկին մէջ։

Սպասեց ախուր սենեակի մը մէջ, ուր վկայութեան կոչուած

քանի մը անձեր իր ներկայութեանը ցած ձայնով կը խօսէին: Երբ կարգը իրան եկաւ, անվստահ քայլով մտաւ սրահը, արտեանունքները խփիւմելով բարձր պատուհանէն եկող ալիւտակ լոյսէն, և իսկոյն իր նայուածքով փնտսեց զաւակը, որ, գլուխը կախ, մեծ կապոյտ թաշկինակ մը ձեռքին մէջ, կ'արտասուէր՝ պզտիկ հեծկլտանքներով:... Դատաւորներուն զիմաց իր ուժերը հաւաքեց:

Ուզած էր դատարան ներկայանալ: Հիմա կը հարցնէր ինքնիրեն թէ ինչո՞ւ ուզած էր... Ի՞նչ էր ըսելիքը..., ոչինչ ոչինչ չէր գիտեր խեղճ կիներ, ըսելիք ոչինչ չունէր... Ո՞վ էր ինք այնտեղ...: Ոչինչ, տղուն մայրը: Ծնած, զգուած, մեծցուցած էր ան, այո՛ւ... այդ տղան իրն էր... Բայց ո՛չ, այսօր այլևս իրը չէր:

Բոլոր հարցումներուն նշաններով և կամ անհասկանալի բառերով կը պատասխանէր: Սրահին վրայ խոր լուծիւն մը կը ճնշէր: Անսահման կարեկցութեան առարկայ էր այս սգաւոր, կրած ցաւէն պզտիկցած պառաւը:

—Աս ձեր միակ զաւակն է, հարցուց նախագահը:

—Այո, պարոն:

—Տունը եղած ժամանակ՝ որեւէ դժգոհութիւն պատճառած է ձեզ:

—Ոչ, պարոն, ո՛հ, ոչ:

—Կը կարծէ՞ք որ վատահամբաւ մարդոց հետ յարաբերութիւններ ունենայ:

—Ձէ, չունի: Ո՛չ իր հայրը, որ ամենքէն սիրուած և յարգուած էր, և ո՛չ հս թոյլ պիտի տայինք որ այդ տեսակ յարաբերութիւններ ունենայ...: Ամենքը մեզ կը յարգէին, ապահով եղիք:

—Գիտենք, գիտենք...:

Ու խօսքը ամբաստանուածին ուղղելով ըսաւ.

—Դուք ալ գիտէիք այդ բանը, և ատոր համար է որ ձեր մօր մօտ գտնելէն օգտուեցար՝ գողնալու համար, ինքզինքնիդ ապահով զգալով ձեր ծնողքի պատուաւորութեան հովանիին տակ...: Ի՞նչպէս կարելի է կասկածիլ այսպիսի պարկեշտ անձերու զաւակին վրայ...: Ձէք կրնար ըսել՝ թէ կիսով չափ միայն պատասխանատու էք ձեր յանցանքին, թէ աչքերնուդ դէմ գէշ օրինակներ ունեցած էք, որ ձեր կորուստին պատճառ դարձան: Բայց ո՛չ, դուք այդ արդարացումն ալ չունիք:

Այն տտեն պառաւը կարծես զօրեղ ճիւղ մը ըրաւ ինք իր վրայ: Իր մանը աչքերուն մէջ, ուր արցունքները մաշեցուցած էին թարթիչները, տարօրինակ ցոլք մը անցաւ, և ճակատը

կախ, առանց շարժումի, տկար ձայնով մը, որ դրեթէ այլևս չէր դողդղար, խօսեցաւ.

—Ներեցէք, պարոն: Պէտք է որ ձեզ յայտնեմ ճշմարտութիւնը: Զաւակս յանցաւոր է, մեծ յանցաւոր. ճիշտ է... Բայց մեղաւորը մինակ ինք չէ... Բիչ առաջ ձեզ ըսի որ խղճի զէմ որն է բան չունիմ պործած... Ստեցի: Տակառապործին երեք հարիւր ֆրանկը հս զողցայ, ես... Երբ արձակուրդով տղաս բովս եկաւ, իրեն խոստովանեցայ եղելութիւնը... Ան վախցաւ մտածելով որ իր մօրը պատին ու բարի տնունը պիտի արատաւորուին... և այդ դրամը վերագարձնելու ու գանգատի տեղի չլնողելու համար՝ ինքն ալ գողութիւն ըրաւ... մոլորութեցաւ... յանկարծակիի եկաւ... և դժբախտ զէպքը տեղի ունեցաւ:

Ծնշուած, վայրկեան մը լռեց, յետոյ աւելի մեղմ ձայնով շարունակեց.

—Ստեցի... Անպիտան կին մըն է... Ես ինքս եմ որ գէշ օրինակ եղայ դաւկիս... Զերբակալեցէք իս... Մեղմացուցիչ պարագայ մըն է անոր համար. այնպէս չէ՞. ներեցէք, պարոն...:

Ալ աւելի կըրեցաւ, և ուտելը ցած ու զլուխը կախ՝ շատ, շատ պզտիկցած կ'երևնար...:

...Զաւակը տաժմանակիր աշխատանքի միայն դատապարտուեցաւ: Բիչ ժամանակ հտօը պառսւր մեռաւ, արհամարուած ամբողջ գիւղէն: Հաղճեպով յուղարկաւորական պատարագ մը ըրին, և թաղեցին գերեզմանատան մէկ հեռաւոր անկիւնը, ուր ամենէն գեղեցիկ օրն ալ՝ եկեղեցին և իր դանգապատունը իրենց շուքն իսկ չէին երկարեր:

Այս պատմութիւնը ինծի պատմեցին իր գերեզմանին մօտ, որ իբրեւ միակ զարդարանք ունէր ժամանակէն աւերած սև տախտակէ խաչ մը և ժանգոտած, ծածուկած, կոտրած մարգարիտներէ պսակ մը, որուն վրայ սակայն կարողացայ կարգաւ սա բառերը.

Փրանսուզ Միշօնին՝

Իր Որդու դատաւորներուն կողմէ:

ՖԻՆԼԱՆԴԻԱ ^{*)}

Մեր այս տեսութիւնը չափազանց կ'երկարէր, եթէ մենք նոյն մանրամասնութեամբ ծանօթացնէինք մեր ընթերցողներին Ֆինլ րոյր գեղարուեստական գրողների հետ: Մինչև այժմ ծանօթացրածներից էլ ոչ ոք է թէ թնչ ինքնուրոյնութիւն և զարգացման ինչ մեծ յոյսեր է խոստանում այդ աշխատասէր, խաղաղ, տոկուն և կուլտուրապէս բարձր ժողովրդի գրականութիւնը: Բաւականանա՞նք այստեղ յիշել այնպիսի նշանաւոր գրողների անուններ, որպիսիք են. Հելլինէ Վեստերմակ, Միննա Կանտ, Պայվարինտա, Յովնան Ախօ, Թէոփո Պակկալ, Արվերտ Երնեֆելդ և այլն:

Գանք այժմ Ֆինական մամուլին:

18-րդ դարու երկրորդ կիսին Ֆինլանդիայում ևս սկսւում է ժողովածուների ու հանդէսների հրատարակութիւնը: Այդ հրատարակութիւնները բոլորն էլ շվեդերէն էին:

1771 թ. հրատարակւում է առաջին թերթը շաբաթը երկու անգամ Գ. Պորդանի խմբագրութեամբ: Այս թերթը հրատարակւում էր «Aurora» ընկերութեան ջանքերով, որ կազմուած էր ժամանակի ուսումնագէտ մարդկանցից: Այդ թերթը բոլորովին տարբեր էր միւս երկրների թերթերից: Այդտեղ զետեղւում էին այնպիսի գրութեանքներ, որոնք վերաբերում էին Ֆինական լեզուին ու գրականութեանը, կային նաև բանաստեղծութիւններ: Թերթի մօտաւոր նպատակն էր մտերմութիւն ստեղծել համալսարանական շրջաններում: Այս թերթը հրատարակուեցաւ մինչև 1777 թ. և դադարեց ամբողջ 5 տարի: 1782 թ. կրկին սկսւում է հրատարակուիլ մինչև 1785 թ., որից յետոյ մինչև 1789 թ. երկրում ոչ մի թերթ չէ լոյս տեսնում:

1789 թ. հրատարակւում է «Աբօյի նոր թերթ»-ը, դարձեալ Պորդանի խմբագրութեամբ, որին հետևում են Թենդըս-

*) Տե՛ս «Մուրճ» № 6.

տրեմիա, Լենդերէկ և բանաստեղծ Մ. Ֆրանցէն: Այդ թերթը մի այլ անուամբ շարունակուեց մինչև 1809 թ.

1803 թ. Պորդանը սկսում է հրատարակել «Ընդհանուր գրականական թերթ»-ը, որը միայն մի տարի է գոյութիւն ունենում:

1810. թ. «Արօյի թերթ»-ը դառնում է կառավարութեան պաշտոնական օրգան, որով երկիրը 9 տարի մնում է առանց որևէ թերթի:

Այս թերթերը բոլորն էլ շվեդերէն էին. սակայն գիտնականները շուտով ազգայնական ոգով լցուած սկսում են միջոցներ ձեռք առնել ֆիններէն թերթ հրատարակելու, որը 1776 թ. իրագործուեց:

Առաջին ֆիններէն թերթը «Suomenkieliset Tietosanomat» (ֆիններէն լուրեր), որը լոյս տեսաւ 1776 թ., ամիսը 2 անգամ: Առաջին խմբագիրն էր Անթի Լիսելիուս: Թերթը լուր ժողովրդական բնակչութիւն էր կրում և տալիս էր հոգաւոր-ծութեան, անասնապահութեան և բժշկութեան վերաբերեալ յօդուածներ: Պատահում էին և աշխարհագրական գրուածքներ: Այդ թերթերի հրատարակութիւնը տևեց 1 տարի:

1819 թ. համալսարանում սկսում է հրատարակուել «Mnemosina» թերթը, որի ծրագրի մէջ մտնում էին ժամանակին յատուկ թէ՛ գրական և թէ՛ հասարակական հարցեր: 1821 թ. հրատարակուեց «Åbo Morgenbladet», որն իրան նպատակ էր դրել գրգռել ազգային ինքնագիտակցութիւնը: Այս ուղղութիւնը բնականաբար չէր կարող դուր գալ կառավարութեանը, այդ պատճառով դեռ մի տարի չանցած փակուեց թերթը, իսկ խմբագիրը երկու տարի չանցած ստիպուեց լինում թողնել Ֆինլանդեան: Հէնց այս ժամանակ դադարում է «Մնեմոսինա»-ն:

Այսպիսով մնում է 1820 թ. հիմնուած «Ֆինլանդական Լրատու» և «Արօյի Լուրեր» հիմնուած 1824 թ., որոնք գոյութիւն ունեն և մինչև այսօր:

«Mnemosina»-ի ազդեցութեամբ Ռ. Բէկկէր հրատարակում է «Turun Wiikkosanomat» (Արօյի շաբաթական լրագիր), որը ներկայումս առաջնակարգ ֆինն թերթն է: Չնայած, որ թերթը տարածուած էր գլխաւորապէս հասարակ ժողովրդի մէջ, բայց այնուամենայնիւ տալիս էր հարուստ ու բազմակողմանի նիւթեր: Պէտք է նկատել, որ այս թերթը աւելի մաքուր լեզուով էր հրատարակուում և այդ նրան շատ նպաստեց յառաջանալու:

1829 թ. Ուլիարթորգում հիմնուում է մի ֆիններէն օր-
Յուլիս, 1906.

զան, որը նշանակուած էր արեւելեան Ֆինլանդիայի համար:

Այդ ժամանակ աչքի ընկնող ազդեցութիւն է ձեռք բերում ֆիններէն «Մեղու» (Mehiläinen) հանդէսը, որի խմբագիրն էր Kalevala-ի ժողովող Է. Լիօնսրոտ:

Մինչև այժմ յիշուած բոլոր թերթերը զրկուած էին քաղաքական բաժնից:

1827 թ. Աբոյի հրդեհը ստիպում է մայրաքաղաքը փոխել Հելսինգֆորս, որտեղ շուտով թերթի կարիք է զգացւում: Այստեղ միաժամանակ լոյս են տեսնում «Helsingfors Morgonbladet» (Հելսինգֆորսեան առաւօտեան թերթիկ) բանաստեղծ Յ. Ռուններէրգի և Helsingfors Tidningar» (Հելսինգֆորսեան լուրեր) բանաստեղծ և պատմաբան Չաք. Թոփէլլիուսի խմբագրութեամբ: Այս թերթերը շարունակուում են մինչև 1844 թ. և որովհետև խիստ ցենզուրայի էին ենթարկուած, համարեա միշտ զուրկ էին քաղաքական բաժնից: Այդ պատճառով խմբագիրները ստիպուած էին վէպերով և պատմական ուսումնասիրութիւններով լցնել:

1844 թ. սկսւում մի նոր շրջան, երբ լրագրները և ընդհանրապէս մամուլը թողնում է իր առանձնացած կեանքը, միակողմանի ուղղութիւնը և բռնում մի այլ ուղղութիւն:

Այդ նոր ուղղութեան հիմն է դրւում 1844 թ. Ղվեդերէն «Saima» երկշարաթաթերթով և ֆիններէն «Երկրագործի բարեկամ»-ով (Maamiehenystävä) զարձեալ երկշարաթաթերթ: Այդ երկուսն էլ լոյս էին տեսնում Մնեկմանի ղեկավարութեամբ Կուսպիօ քաղաքում:

«Saima»-ն թէև 1846 թ. փակուում է, բայց այնուամենայնիւ նրա արածը մեծ է ապագայ կեանքի վերաբերմամբ: «Սայմա»-ն իր երկու տարուայ գործունէութեամբ, եթէ կարելի է ասել, զրգուում է ժողովրդի ինքնագիտակցութիւնը: Նա իր բազմակողմանի բովանդակութեամբ շօշափում էր համալսարանը, մամուլի վիճակը, վաճառականութիւնը, արհեստագիտութիւնը, երկրագործութիւնը, անտառային խնամքը, բռնակշիւթեան դրութիւնը, նրա տնտեսական և քաղաքական վիճակը: «Սայման» աւելի շատ ցրւում էր երիտասարդութեան մէջ: Թերթի ղեկավար Մնեկմանը աչքի է ընկնում իր կրահոտ գրչով զէպի ազգային հարցը:

«Saima»-ի զաղարկով Մնեկմանը սկսում է հրատարակել «Գրական հանդէս հասարակութեան զարգացման համար» (Litteraturblad för allmän medborgerig bildning) ամսագիրը: Այս հանդիսի մէջ Մնեկմանի եռանդուն գործունէութիւնը օրինակ է դառնում և միւս թերթերին: Այս հանգամանքը աւելի է

դառնում մրցման, որով թերթերը մէկը քան միւսը բովանդակւոյց են դառնում:

1855 թ. փակում է «Maamiehenystävä», և մի քանի նոր թերթեր են հրապարակ գալիս ֆիններէն լեզուով: Նրանցից է «Ջրանցը» (Kánava) որ հրատարակում էր Վըբորգում միանգամայն հաւատարիմ «Սայմա»-ի ուղղութեանը:

1847 թ. Արչէն «Ֆինլանդացի» (Suomalainen) և «Ֆինլանդուհի» (Suometar) և «Լուրեր Աբօից» (Sanomia Turusta) 1851 թ. հրատարակում էին դարձեալ նոյն ուղղութեամբ, բայց սորա բոլորն էլ ենթարկուեցան «Saima»-ի վիճակին:

Բանն այնտեղ հասաւ որ 1850 թ. կառավարութիւնը մի կանոնադրութեամբ արգելեց ֆիններէն որևէ բան տպագրել, բայց դարձեալ մէկ մէկու յետեից լոյս տեսան մի քանի լրագրներ: Այդպիսի արգելքը երկար չէր կարող տևել, որովհետև ֆինն ժողովուրդը զգում էր ծարաւ իր մայրենի լեզուով կարդալու: Ֆինլանդական կառավարութիւնը 1851 թ. հիմնեց ֆիններէն լեզուով մի լրագիր՝ միւսներին հետ մրցելու համար, բայց այդ չյաջողուեց, որովհետև ժողովուրդը շատ լաւ էր իմանում թէ ինչ է հարկաւոր իրան:

«Suometar» թէև աւելի է ենթարկում կառավարութեան բռնութիւնը և 1850 թ. փակում, բայց շուտով հետևեալ տարին կրկին լոյս է տեսնում, որով և մեծ ազդեցութիւն է ձեռք բերում: 1850 թ. սկսում է կառավարութեան ընդհանուր հալածանքը ֆիններէնի դէմ, որով դադարում են լրագրները, որոնց մէջ և «Helsingfors Mordenbladet» 1855 թ. իսկ դորա տեղ Վըբորգում յառաջադիմական «Viborg» թերթը, որը միակն էր, որ լոյս է տեսնում շաբաթը 3 անգամ:

Շուտով ֆինլանդական մամուլը նոր կեանքի մէջ է մտնում, ոգևորուած կեանքի ու ազատութեան ոգով, մանաւանդ որ շուտով մամուլի ազատութիւն է շնորհւում:

1862 թ. Հելսինգֆորսում հիմնւում է առաջին օրաթերթը «Helsingfors Dagblad»: Սա ֆինլանդական միակ թերթն էր, որ իր ժամանակին բաւարարութիւն էր տալիս քաղաքակրթութեան պահանջներին: Այս թերթի առաջնորդողների շնորհիւ կարճ ժամանակում թերթը ընդհանրանում է ժողովրդական բոլոր խաւերում: Նոյնիսկ խմբագրական կազմի մէջ են մտնում մի քանի անձնաւորութիւններ, որոնք Սէյմի անդամներ էին:

Շվեդական «Helsingfors Tidningar» չկարողանալով մրցել «Տազբլատի» հետ դադարում է 1866 թ., իսկապէս 1864 թ. սրան փոխարինած է լինում «Մայրաքաղաքի թերթ»-ը (Hufvuds-

tadsbladet), որը բազմաթիւ յայտարարութիւնների շնորհիւ շուտով ընդհանրանում է, մանաւանդ մայրաքաղաքում, և շուտով դառնում է քաղաքական ամենամեծ լրագրներից մէկը:

Tagblad-ին շուտով այլ հակառակորդներ են դուրս գալիս: Ֆիննոմանեան կուսակցութիւնը 1871 թ. սկսում է հրատարակել շվեդերէն «Morgonbladet» (առաւօտեան թերթ) որը դադարում է 1884 թ. և ապա նորից հրատարակում է Finland անունով և տեւում է մինչև 1892 թ.: Այդ ժամանակ խմբագիր էր նշանակուած նշանաւոր ազգային գործիչ Ա. Մէօրմանը:

1882 թ. մեռնում է «Տագբլաթի» խմբագիր Լագերբօրգը՝ որով և կանգ է առնում թերթի յաջողութիւնը: Տագբլատը լինելով լիբերալ կուսակցութեան ներկայացուցիչ շուտով իր դէմ է յարուցանում Վիկինեան կուսակցութեանը, որը 1883 թ. հիմնել էր մի յատուկ • շգան «Nya Pressen» օրաթերթը, որին յաջողում է իր շուրջը ժողովել Tagblad-ի ընթերցողներին, որով վերջինս դադարում է 1889 թ.:

1869 թ. կրկին ամենօրեայ «Suometar»-ը լոյս է տեսնում «Vusi Suometar» (Նոր ֆինլանդուհի) անունով, կողմնակից լինելով հին ֆիննոմանեան կուսակցութեանը, որով մեծ դեր է խաղում ազգայնական կրթութեան և ազգային շահերի պաշտպանութեան մէջ:

1890 թ. նրան ընկերանում է մի այլ օրաթերթ Päivälehti (Ամենօրեայ թերթ) անունով է. էրկկօի խմբագրութեամբ: Բացի ազգայնական հարցերից սա աւելի ևս յառաջադէմ և դեմոկրատ ընաւորութիւն է կրում: Կարճ ժամանակում սրա շուրջն են ժողովւում երիտասարդ ոյժեր:

Ներկայումս Հելսինգֆորսում բացի երկու (ֆիններէն և շվեդերէն) պաշտօնական թերթերից լոյս են տեսնում չորս ամենօրեայ թերթ՝ շվեդերէն՝ «Hufvudstadsbladet» «Nya Pressen» և ֆիններէն՝ «Vusi Suometar» և «Päivälehti»: Միայն 1898 թ. Հելսինգֆորսում լոյս էին տեսնում 83 պարբերական հրատարակութիւններ: Վերջին տարիներս աւելի ևս շատացել են այդ պարբերական հրատարակութիւնները մանաւանդ ֆիններէն լեզուով:

Աւելի ևս աճում է նկատուում գաւառներում: Ֆինլանդիայի 35 քաղաքներից միայն 5-ում լրագիր չէ հրատարակւում:

Աբօյում, որտեղ մօտ 35,000 բնակիչ կայ, հրատարակւում է երեք ֆիններէն և երեք շվեդերէն օրգաններ, որոնցից ամենօրեայ են երկ-երկու հատ:

Վերջորոգում կայ չորս ամենօրիայ լրագիր, երկ-երկու իւրաքանչիւր լեզուով:

Թամսերֆորսում երեք ֆիններէն և մի հատ շվեդերէն:

Վազայում երեք շվեդերէն և երկու ֆիններէն:

Քանի գնում աւելի ևս բաղմանում են, մանաւանդ որ իրաւունք խնդրելու դժուարութիւններ չկան:

1898 թ. Ֆինլանդիայում կար 186 պարբերական հրատարակութիւն, այսինքն իւրաքանչիւր 13,000 բնակչին մի հատ: Դրանցից 20-ը օրագիր է, 21 շաբաթական երեք անգամ, 32-ը երկու անգամ և 32 մի անգամ:

Լրագրների հետ աճում է և ընթերցողների թիւը:

Հելսինգֆորսում լրագրներից երկուսը լոյս են տեսնում 12,000 օրինակ. միւսները 7000—8000 օրինակ. իսկ գաւառական թերթերի նեծ մասը 5000—7000 օրինակ:

Թերթերի գներն են.

Հելսինգֆորսի թերթերից իւրաքանչիւրի գինը տարեկան=24—15 մարկ (9 ռ.—5 ռ. 70 կ.): Գաւառական լրագրների՝ 13—11 մարկ (5 ռ. 4 ռ. 20 կ.): Իսկ շաբաթը երկու, երեք անգամ լոյս տեսնողը արժէ 3—4—5 մարկ:

Ամենաստորին հաւերին անգամ անծանօթ չեն հրատարակուող թերթերը: Ահա այդ է պատճառը, որ 1898 թ. սէյմի անդամ էին ընտրւում Հելսինգֆորսում հրատարակուող լրագրների խմբագրները:

Բ. Գեղարուեստ

Ֆինլանդական գեղարուեստի մասին գծրադպարար շատ քիչ բան պիտի ասենք: Մենք միայն կը վերցնենք գեղարուեստի մի ճիւղը՝ նկարչութիւնը:

Նկարչութիւնը մեծ յառաջադիմութիւն է գործել Ֆինլանդիայում ոչ միայն ազգայնական տեսակէտից, այլ և միջազգային կամ համաշխարային նկարչութեան տեսակէտից: Ֆինլանդիան տուել է յայտնի նկարիչներ, որոնց գլուխ է կանգնած Ալբերդ Էդելֆիլդը:

Ներկայումս նրան են հետևում ֆինլանդացի շատ նկարիչներ, ինչպէս օրինակ Աքսել, Հալէն, Էրօ Էրնէֆելդ, Մագնուս Էնկել և շատ շատերը, որոնք իրանց ամբողջ տաղանդով պարտական են Ալբերդին:

Ալբերդ Էդելֆիլդը ծնուել է 1854 թ., նա իր սկզբնական նկարչական ուսումն ստացել է Անտվերպէնում, որտե-

ղից փոխադրուել է Փարիզ և սկսել է արտադրել իր նշանա-
ւոր նկարները:

Ալբերդի բազմաթիւ նկարների շարքում աչքի է ընկնում
«Լուացարարները»: Այդ պատկերին նայելով մարդ իսկոյն նը-
կատում է մի զաղափար արտայայտուած կտաւի վրայ: Աշ-
խատաւոր կինը յոգնած ու վաստակած կանգ է առնում և հա-
զիւ է կարողանում մի քանի խօսք ասել իր ընկերուհուն: Այս
նկարը գետեղուած է Պետերբուրգի Ալէքսանդր III-ի մուգէ-
ում և զրուած է ի տեսութեան:

Այդ նկարը մեծ հիացմունք է առաջացրել Եւրոպայի գեղ-
արուեստական աշխարհում: Այդ նկարը 1893 թ. Միւնխէնի
ցուցահանդիսում էր զրուած և կազմում է այդ ցուցահանգէսի
առաջնակարգ նկարներից մէկը:

Մուտերը իր «Գեղարուեստի պատմութեան» գրքում խօ-
սելով այդ նկարի մասին ասում է. «գեղին և սպիտակ տոնե-
րի մի երաշժտական ակկորդ»:

Բացի դրանից նկարիչն ունի այլ բազմաթիւ նկարներ.
ինչպէս օրինակ «Ծովում», «Ձկնորսներ» և այլն: Միւս նկար-
ների շարքում կայ մի մեծ նկար, որ պատկերացնում է պը-
րունեքերով մահճում: Նրա մօտ կանգնած է բժիշկը գործիքը
ձախ ձեռքին, իսկ աջով բռնած հիւանդի զարկերակը: Հիւանդն
արդէն հոգեվարքի մէջ է...

Նկարչի նկարների վերաբերեալ պիտի ասել, որ նա
միւսների նման չի ճգնում ողորմածութիւն կամ այլ խղճու-
թիւն գուրս բերելու: Նրա նկարները ընդհակառակը ուրախ
են: Նա ինքը սիրում է մարդկանց և հարկադրում է սիրել:

Նա թողնում է բոլոր անցողականը և նկարում է յաւի-
տնական գեղեցկութիւնը, անգործն ու ճւրախը:

Ալբերդը ըրալիստ է բառիս բուն նշանակութեամբ:

Տաղանդաւոր նկարիչը մեռաւ յիսուն տարեկան լրացրած
1905 թ. օգոստոսին:

Դ. Գրական եւ քարեզործական ընկերութիւններ,

Ֆինլանդիայում գոյութիւն ունին բազմաթիւ գրական և
քարեզործական ընկերութիւններ, որոնց մասին արժէր մի քա-
նի խօսք ասել:

Այդ ընկերութիւնները նման չեն եւրոպական բազմա-
դում ընկերութիւններին, որոնք կազմուել են շատ երկար տա-
րիների և նոյնիսկ դարերի ընթացքում, այնինչ ֆինլանդական

ընկերութիւնները տասնեակ տարիների արդիւնք են և առաջացել են որոշ գործունէութեան համար:

Ընդհանրապէս աչքի է ընկնում մի երևոյթ, որ նկատելի է համարեա ամեն տեղ: Ճնշուած մանր ազգերը շատ շուտ են ձգտում քաղաքակրթութեան: Նոքա չեն չափում իրանց ոյժերը: Այդ պուցէ նրանից է, որ ժամանակի բուռն հոսանքը բնական ճանապարհով ստիպում է նրանց անել այն ինչ միւսները ձեռք են բերել վաղուց:

Ֆինլանդական ընկերութիւնների մէջ առանձին ուշադրութեան արժանի է «Turistföreningen» (ճանապարհորդների ընկերութիւն): Այդ ընկերութեան գլխաւոր նպատակն է նպաստել բոլոր թէ՛ երկրացի և թէ՛ արտասահմանից եկած ճանապարհորդներին — անվնաս ճանապարհորդել երկրի ներսը: Այդ ընկերութիւնները յատուկ մասնաձիւղեր և մասնախմբեր ունին երկրի ամեն անկիւնում, որոնք ընկերութեան պաշտօնական վկայական ունեցող ճանապարհորդներին ամեն մի կերպ օգնում և օժանդակութիւն են ցոյց տալիս: Ընկերութիւնն ընդ ունի սեպհական հիւրանոցներ, ճաշարաններ և այլ նման հաստատութիւններ, որտեղ ճանապարհորդները էժան դնով միջոցներ են գտնում ապրելու: Այդպիսի ճանապարհորդներէից է դր. Ռումզաու*):

Ֆինլանդեան իր մատենդարաններով ևս արժանի է ուշադրութիւն:

Ամենանշանաւոր մատենդարանը գտնւում է Հելսինգֆորւում: Պահոււմ է քաղաքի ծախքով, 1898 թ. ունէր 17,132 գիրք, իսկ կարդալու վարձ էր տրւում 1 մարկ:

Գրքերը տրւում են միայն մի ամսով, ստանալուց ի հարկէ որոշ երաշխաւորութիւն է պահանջոււմ:

Ֆիններէն ու շվեդերէն գրքերը պահւում են առանձին դահլիճում: Մատենդարանին կից կան ընթերցանութեան համար երկու դահլիճներ, որոնք բաց են ամեն օր առաւօտեան ժամի 10-ից մինչև երեկոյեան 9-ը:

Այդտեղ կարելի է գտնել Ֆինլանդիայում լոյս տեսնող բոլոր լրագրները: Գրադարան-ընթերցարան են մտնում ամեն դասի ընթերցողներ: Միայն 1895 թ. ընթերցարան են յաճախել 89,610 հոգի, օրեկան միջին թուով 248 հոգի:

1896 թ. մատենդարանը բաց է եղել 304 օր, որի ժա-

*) Ունի բազմաթիւ ուսումնասիրութիւններ, որոնց մէջ նշանաւոր է «Finland or the Land of a Thousand Lakes by Dr Ramsay» (հազար լճերի երկիր Ֆինլանդիա. հեղ. դր. Ռումզաու):

մանակ տրուած է 78,338 գիրք, որ կը լինի օրեկան 258 գիրք: Այդ գրքերի 65⁰/₀-ը շվեդերէն է, 34⁰/₀, ֆիններէն:

Մատենդարանի գրքերն ըստ բովանդակութեան բաժանուած են. 55⁰/₀ վէպեր, 30⁰/₀ մանկական գրքեր, 14⁰/₀ պատմական, ճանապարհորդական, քնադիտական և 10⁰/₀ կրօնական:

Բացի գրանից մատենդարանն ունի և մի դահլիճ որտեղ յաճախուած են երեխաները: Այդ մասը հարուստ է մանկական ամեն տեսակ գրուածքներով: Դահլիճուած խմբուած են մօտ 100 երեխայ: Այդտեղ են յաճախուած թէ 15 տարեկանները և թէ 3 տարեկանները: Վերջիններիս բերուած են մեծերը, պատկերներ են ցոյց տալիս, հանելուկներ ու հեքիաթներ են կարդուած:

1895 թ. այդ բաժինն ունեցել է 77,933 յաճախորդ (pacien), միջին թուով օրեկան 216 հոգի:

Բացի գրանից քաղաքի զանազան մասերում կան բազմաթիւ մանր մօնր գրադարան ընթերցարաններ: Այսպէս օրինակ հիւսիս արեւելեան մասում, որտեղ բացառապէս բանուորներ են ապրում, կայ մի միջակ գրադարան-ընթերցարան Qöörnäs: Բացի այդ 1890 թ. վարժուհի Alli Trygg-ի նախաձեռնութեամբ շինուած է մի շինութիւն, որտեղ նոյնպէս ընթերցարան կայ: Այդ շինութիւնը կոչուած է «falkets hem» (ժողովրդական տուն):

Մատենադարանն ունի 2,253 հատոր գիրք: 1896 թ. մատենադարանը բաց էր 268 օր և տրուած է 6965 գիրք:

Գրական ընկերութիւններից նշանաւոր է 1872 թ. Իւվէս-կիւլէում հիմնուած «Ֆինեան ժողովրդական լուսաւորութեան ընկերութիւնը», որը մատենադարաններ ու գրադարաններ է հիմնում և միջոցներ է ձեռք առնում մանաւանդ բաղձալիզմանի գրքեր լոյս ընծայելու: Ընկերութիւնը մինչև 1897 թ. հրատարակել է 150 գիրք, իսկ բացի գրանից 20 տարի շարունակ լոյս է ընծայում բաղձալիզմանի ու լիուլի տեղեկութիւններով մի օրացոյց՝ «Kansanvalistusseurakalenteri»: Ընկերութեանը մասնակցում են մօտ 6000 անդամ, իսկ անդամավճարն է 3 մարկ, որ կը լինի մօտ 1 ր. 4 կ.:

Ուշադրութեան արժանի է վերջին տասնամեակում հրապարակ եկած «Երիտասարդների ընկերութիւնը», որ աճում է զարմանալի արագութեամբ: Նրա մասնաճիւղերը տարածուած են ամեն կողմ և դեռ 1898 թ. ընկերութիւնն ունէր 10,000 անդամ: Մասնակցում են ամեն տեսակ անդամներ. ուսանող, բանուորներ և այլն: Բացի գրանից ընկերութիւնը իր յաճախակի ժողովներում շօշափում է զանազան հրատապ հարցեր,

որոնք կապ ունին երկրի կրթութեան ու լուսաւորութեան հետ: Այս ընկերութիւնը միակն է, որ ունի պաշտօնական թերթ, որի անունն է «Pyrkijä», իսկ մնացած ընկերութիւններից մի քանիսն ունեն ձեռագիր—խմորատիպ թերթեր, որոնք բոլորն արծարծում են մադենադարանական ընկերութիւնների կարիքը:

Սրանք են զրական ընկերութիւնները:

Կան բազմաթիւ գիւղատնտեսական, բժշկական, սպառողական և այլ ընկերութիւններ:

Կանայք ևս ունին յատուկ ընկերութիւններ: Այդպէս է օրինակ «Syföreningar» (կարելու ընկերութիւնը):

Վերջին ժամանակներս հրապարակ են եկել ընկերութիւններ, որոնց նպատակն է պաշտպան հանդիսանալ կանանց հարցին, չնայած որ Ֆինլանդիայում կինը մեծ ազատութիւն է վայելում: Այնտեղ կինը որևէ պաշտօն ստանալուց բաւական է որ, ինչպէս մի գիտնական է ասում, *despens frön sitt kön*՝ իր սեռից ազատութիւն ստանայ: Այդտեղ կինն ընդունում է բոլոր ծառայութիւններում, բայց աւելի նսեմացած կերպով: Չնայած որ կինը նոյնն է անում և նոյն վարձն է ստանում, բայց այնուամենայնիւ առաջնակարգ տեղը տղամարդունն է:

Կանանց հարցը եռանդուն կերպով պաշտպանում են երկու ընկերութիւններ. մէկը հիմնուած 1884 թ., որը կազմուած է բացառապէս կանանցից:

Միւս ընկերութիւնը «Ynionem» (Ընկերութիւն) հիմնուած է 1892 թ., այդտեղ մասնակցում են և տղամարդիկ, որոնք նոյնպէս ձգտում են բարուրեւել կնոջ վիճակը:

1885 թ. կին բժիշկ տիկ. Հէյկելի նախաձեռնութեամբ հիմնած է «Konkordie» (զաշնադրութիւն), որի նպատակն է նպաստել աղքատ ուսանողուհիներին ապրել համալսարանում: Ընկերութիւնն ունի 100,000 մարկ զբաժանուելիս, որի տոկոսը գործադրւում է որոշած նպատակին:

Դ.-Ազգային և քանութրական շարժում:

Ռուսական բիւրօկրատիան իր միապետական անսահման ձգտումներին զոհ է դարձրել և ծայրագաւառ Ֆինլանդիան: Բիւրօկրատիային շատ յաճախ նպաստել է և «ռուս հայրենասէր» մամուլը, որը միշտ և միշտ մի «վտանգ» է տեսնում օտարազգիների վերաբերմամբ:

Այդ պատմական ֆազերը մի կողմ թողնելով, միայն կա-

զենք, որ բերուկրատիայի այդ ձգտումները բնական ճանապարհով ոտի են կանգնեցրել ֆինլանդցիներին: Ընթերցողները կարծում ենք չեն ժողացել ֆինլանդական բանաստեղծի կոչը. «Եթէ մէկը կը համարձակուի խախտել քո օրէնքը, զէնք առ ֆինլանդիայի քաղաքացի»: Եւ այդ է եղել ֆինլանդացու նշանաբանը մինչև այսօր և կը լինի վաղն էլ:

Եւ ժամանակի ընթացքում հրապարակ է եկել ազգային շարժումը, որի հետ սերտ կերպով միացել է բանուորական շարժումը: Այս երկրում հայրենասէր ֆինլանդացին չէ կարողանում միմեանցից բաժանել իսկական հայրենասիրութիւնը բանուորական շարժումից:

Ընթերցողները տեսան արդէն թէ գործարանական կեանքը որքան արագ է աճում, որի հետ աճում է և բանուորների թիւը, բայց չնայած դրան բանուորական շարժումը դեռ իր սաղմի մէջ է:

Բանուորների թիւը աճում է տարէց տարի: Այսպէս օրինակ 1887 թ. գործարանային բանուորներ եղել են 43,000 իսկ 1898 թ.-ին այդ թիւը կրկնապատկուել է և նոյնիսկ 91,000-ի հասել, իսկ ներկայումս բացի լաստակառոյցներից (плотовщикъ) և օրավարձ բանուորներից հասնում է 100000-ի:

Ժամանակի հետ աճում է և արդիւնքը: Այսպէս օրինակ անցեալ տարի հասնում էր 300 միլիօն մարկի: 1887 թ. միջին թուով մի ձեռնարկողին ընկնում էր 7,7 բանուոր, իսկ 1898 թ. այդ թիւը հասնում էր 11,7. 1887 թ. արդիւնաբերութեան գինը մի ձեռնարկութեանն (предприятие) ընկնում էր միջին թուով 20,000 մարկ: Իսկ 1898 թ. 36,000, դրա հետ աճել է և բանուորի արգասաւորութիւնը (продуктивность) 2500—3000 մարկի:

Կապիտալիզի այդ արագ զարգացումը նպաստել է բանուորութեան բազմանալուն: Բնակչութեան համարեա $\frac{1}{3}$ մասը տընտեսական և սոցեալական տեսակէտից ամենայն ճշտութեամբ կարելի է բանուոր համար: Այդ ահագին բանակը ցրուած է ֆինլանդիայի զանազան մասերում և չաւնի ոչ տուն, ոչ շրջան, և միշտ էլ տեղից տեղ է թափառում՝ իր համար գործ գտնելու հազար: Նա ապրում է պատահական աշխատանքով:

Կապիտալիզմը աճում է և գիւղական մթնոլորտում: Այդտեղ զանազան աննպաստ պայմանների շնորհիւ մասն հողատէրերը զրկւում են իրանց հողերից, որով հողերը կենդրոնանում են եղակի մարդկանց ձեռքը և այգալիսով թափառական բանուորների թիւը աւելի ևս աճում է:

Օրինակ 1887—1897 100 հեկտար *) հողից աւելի հողատէրերի թիւը հասնում էր 1,250—2700. իսկ միջին հողատէրերի՝ (100—25 հեկտ.) աճել 11,500—22,000.

Իսկ այդ միջոցին գիւղական հողատիրութիւնը (25—5 հեկտար) հասել է մօտ 50/0՝ 57,600—6100. իսկ 5 հեկտար հողատէրերի թիւը իջել է 390/0 43,000—32000.

Ֆինլանդիայում ոչ մի դասակարգ այնպէս չէ աճում, որքան պրուստարիատը:

1880—1890 ազգաբնակչութեան դասերը աճել են.

Կալուածատէրերն ու նրանց ընտանիքը — 13¹/₂0/0:

Պետական ծառայողները և այլ ազատ արհեստ. 40/0.

Վաճառականներն ու արհեստավարները.. 20¹/₂0/0.

Անհող շինական (ՍՈՑԻԱԼԻՅԵ) 42¹/₃0/0.

Զհաշուած այն բանուորները, որոնք զբաղուած են գիւղերում:

Մեծ արհեստավարական կենտրոններում բանուորն օրեկան ստանում է 2¹/₂—3 մարկ (95 կ.—1 ռ. 13.), իսկ մի քանի արհեստավարներ (մետաղագործ, ծխախոտագործ) հասնում է 4 և սակաւ անգամ 5—6 մարկ: Հասարակ բանուորները՝ 1¹/₂—2 մարկ: Բանուորը օրեկան բանում է 11-12 և երբեմն էլ 14-15 ժամ: Իսկ արհեստանոցներում նոյնիսկ 16 ժամ: Գիշերային աշխատանքը ոչ թէ վերջանում է, այլ աւելի ևս բաղադրական իրաւունք է ստանում: Այժմ կանոնադրութեան մէջ մի քանի բարելաւումներ կան, ինչպէս օրինակ 12 տարեկանից ցած չընդունել, 12-15 տարեկանները պիտի գործեն օրեկան 4 ժամ, իսկ արհեստանոցներում 8 ժամ. 15—18 տ. 14 ժամ: Կանանց և մեծ բանուորների ժամը չէ որոշուած: 1896 թ. կանոնադրութեամբ ապահովուած է բանուորի կեանքը, իսկ 1879, 1889 թ. թ. կանոնադրութիւններով բարուրւում և ապահովում է բանուորների առողջապահութիւնը:

Որքան վատանում է բանուորների վիճակը, այնքան աւելի է ամրանում և ուժեղանում տասակարգային կռիւը: Տարեց տարի աճում են բանուորական ընկերութիւնները: Այսպէս օրինակ 10-13 տարի առաջ սկսուեցան ընկերութիւններ կազմակերպուել, որոնց թիւը 1901 թ. հասնում էր 15-ի:

Ֆինլանդական կապիտալիստ-բուրժուազիան չըմբռնելով ապագայ կռուի անխուսափելութիւնը շարունակում է աւելի ևս ճնշել բանուորներին և նոյնիսկ միջոցներ ձեռք առնել,

*) Մի հեկտարը հաւասար է մօտ մի դեսետինի՝ 0,915.

արգելելու բանուորական թերթիկների հրատարակութիւնը:

Պրոլետարիատի մէծ հակառակորդները, նոյնիսկ շատ յաճախ դիմել են ուսական բիւրօկրատիային՝ ճնշել բանուոր-
ներին: Եւ բանուորական այդ հուժկու մասսան ցարդ անդօր է
մնացել իր դադափարները առաջ տանելու, որովհետեւ նրան
նոյնիսկ զրկել են ձայնատուութիւնից:

Այնտեղ կարող են ձայն տալ քաղաքացիներից 400—800
մարկ եկամուտ ունեցողները և գիւղացիներից 200—600
մարկ՝ ունեցողները: Այդպիսով ֆիննական ժողովրդի 100/0-ը
զրկուած է ձայնատուութիւնից. Այդպէս օրինակ.

1890 թ. 1000 չափահաս տղամարդուն ընկնում էր

Ձայնատ. իրաւ. ունեց. ձայն. իրաւ. չունեց.

Քաղաքներում 333 767.

Գիւղերում 293 707.

Միջակ քաղաքն. 296 704.

Այս պատճառով 1899 թ. Աբօյի բանուորական կոնգրե-
սում պահանջ տրուեցաւ հաւասար իրաւունք ձեռք բերելու:
Իսկ 1901 թ. Վըբօրգի կոնգրեսում միայն վճռուեց միջոցներ
ձեռք առնել այդ իրաւունքներն շուտափոյթ ստանալու համար:

Բանուորական շարժումը Ֆինլանդիայում սկսուած է վա-
ղուց և 1899 թ. Աբօյի կոնգրեսում ընդունում է սոցիալ-
գեմոկրատիական գերմանական ծրագիրը:

Կենդրոնական վարչութիւնը գտնւում է Ամբոյում և ան-
ընդհատ եռանդուն պրոպականդա է մղում բրոշիւրների,
թերթերի և օրացոյցների միջոցով:

Այդպիսի թերթեր են—«Työmies», «Lansi—Fuomen—Ty-
omies», «Lansan-Lehti» և «Arbetaren».

Ռուսաստանի մեծ յեղափոխութիւնից յետոյ անշուշտ ազատ
Ֆինլանդիան աւելի ևս մեծ թափով պէտք է դարգացնի իր
մէջ այն բարձր կուլտուրական սաղմերը, որ մենք տեսանք նրա
մէջ: Ահա մի ժողովուրդ որ մեծ ապագայ ունի:

Ս Ե Ր Ո Ւ Ն Դ Ն Ե Ր

Եւ այսպէս ահա անցնում է ձեր դար,
Ձեր դարը քրնի և անշարժութեան.
Օ՛ խրդճճեկ սերունդ, դու սերունդ թըշուառ:
Արդէն զիմում ես գէպի քո վախճան:

Գալիս են նոր կեանք, նոր բարք, նոր օրեր,
Եւ ահա մօտ է ձեր անփառ անկում.
Պիտի ջախջախուեն ձեր սուր ու սուսեր
Նոր սերնդի գէմ մըղած գոռ մարտում:

Եւ յաղթահարուած տիտանների պէս,
Պարտութեան դըրոշմ ձեր ճակատներին,
Դուք պիտի թողնէք զործի ասպարէզ
Եւ տեղի տաք նոր և թարմ սերնդին:

Եւ այդ սերունդը, առողջ և ուժեղ
Շինարար ոգով, ստեղծագործութեամբ,
Ահա գալիս է ուղիղ և անշեղ
Յաղթական երգի նըլազածութեամբ:

Նա գալիս է ձեր աւերի վըրան
Կառուցանելու հոյակապ տաճար,
Տաճար ճշմարիտ լուսաւորութեան —
Կէցցէ՛ նոր սերունդ և նոր գաղափար:

Հետն Մանուէլեան

ՊԵՐՃԱԽՕՍ ԹՈՒԵՐ ԵՒ ՈՒՇԱԳՐԱԻ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ:

Աւելորդ չենք համարում «Մուրճի» ընթերցողներին հաղորդելու մի քանի վիճակագրական շահագրգիռ տեղեկութիւններ, որոնք վերաբերում են՝ ներկայումս հասարակութիւնը այնքան յուզող՝ Ռուսաստանի հողային և մի քանի ուրիշ կարևոր հարցերին. այդ տեղեկութիւնները քաղուած են ռուս հրատարակութիւններից:

Թէև Կովկասի վերաբերմամբ տեղեկութիւնները ընդհանրապէս պակասում են, բայց և այնպէս այս վիճակագրական տեղեկութիւնները պակաս նպատակայարմար և օգտաւէտ չեն նաև հայ ընթերցողի համար, ժանաւանդ ներկայումս:

I. Մի քանի տեղեկութիւններ Նոյի քանակութեան եւ քաշիման մասին ընդհանրապէս:

Ներուպական Ռուսաստանի 49 նահանգներում՝ չհաշուած Դոնի շրջանը (14,909,223 դես.)՝—ներքին գործերի մինիստրութեան կենտրոնական վիճակագրական կօմիտէի՝ 1877—78 թ—ի տեղեկութիւնների համաձայն՝—ընդամենը հաշուած է 391,100,000 դեսիաւտին, որից պետական զանձարանին պատկանում է 150,400,000, կայսերական տանը—7,400,000, զանազան հիմնարկութիւնների, գլխաւորապէս վանքերին և եկեղեցիներին—8,500,000, գիւղական համայնքներին—131,400,000, և մասնաւոր մարդկանց—93,400,000 դեսիաւտին:

Սիրիքը երեք անգամ մեծ է Ներուպական Ռուսաստանից և պարունակում է իր մէջ մի միլիարդ երկու հարիւր միլիօն դեսիաւտին, որից մի միլիարդ 150 միլիօնը պետական է, 42.500,000 պատկանում է կայսրին (41,600,000 դ. Ալտայի շրջանում, իսկ 900,000 դ. Ներչինսկի շրջանում), իսկ 524,437 դ.—մասնաւոր սեփականութիւն է:

II. Մասնաւոր Նողատիրութիւնը Նետեւեալ կերպով է դատաւորուած.

Ինչպէս ասացինք, մասնաւոր անձերին պատկանում է 93,400,000 դ.: Դրանից 1 միլ. 800 հա. պատկանում է ընկերու-

Թիւններին, իսկ 91 միլլ. 600 հազ.—մասնաւոր անհատներին:

Հողատէրերի թիւը հասնում է 481,058-ի, իսկ հողի քանակութիւնը, ճիշտ թուով որոշած, 91,606,115 դեսիատին է, որ մեծ ու փոքր կալուածատէրերի մէջ դասաւորուած է հետեւալ կերպով.

Կալուած. տարած. Հողատէրերի թիւը Ընդամ. քան. դես.

Մինչև 10 դես.	244,376	959,450
10-ից մինչև 100	160,505	5,321,218
100—500	47,482	11,325,987
500—1000	13,169	9,331,877
1000—5000	13,458	27,559,544
5000—10,000	1,144	9,876,915
10,000-ից աւելի	924	27,231,124
Ընդամենը	481,059	91,606,115

III. Հողատէրերը պատկանում են հետեւեալ դասաւորւելին:

1, Ազնուականներ	114,700	23,80%
2, Վաճառականներ	12,600	2,6»
3, Մեշչաներ	58,000	12,1»
4, Գիւղացիներ	273,000	57,7»
5, Մնացած դասա.	22,900	4,8»

Ամեն մի դասակարգի հողի քանակութիւնը ջոկ-ջոկ.

Ազնուական. պատ. է	73,2 միլլ. դես.	79,80%
Վաճառականներին	9,8 «	» 10,7»
Մեշչաններին	1,9 «	» 2,1»
Գիւղացիներին	5,0 «	» 5,5»
Մնա. դասակարգին	1,7 «	» 1,9»

Այսպէս ուրեմն ազնուականները հողատէրերի ընդհանուր թուի մի քառորդից էլ պակաս են, սակայն նրանց պատկանող հողի կազմում է մասնաւոր հողատէրերին պատկանող ընդհանուր տարածութեան չորս հինգերրորդական մասը:

IV. Կայսերական տոհմի կալուածքները եւ միջոցները.

1, Կայսերական տան եւ արքունիքի մինիստրութեան հաւար այս 1906 թուին պետական գանձարանից նշանակուած է —16,359,595 ռուբլի:

2, Բացի դրանից՝ կայսերական տան օգտին ստացուած է

նաև ուղէլի կալուածքների արդիւնքը: Այդ կալուածքների ընդհանուր տարածութիւնը հիմա հասնում է 7,900,000 դես-իատին (1878-ից յետոյ ձեռք է բերուած 500,000 դես. նոր կալուածք:) 1897 թուին այդ կալուածքներից ստացուել է 20 միլլիօն բուրլի. իսկ այս տարուայ լրագրերը յայտարարեցին, որ ուղէլի կալուածքների ընդհանուր եկամուտը հասնում է նոյն իսկ 50 միլլիօն բուրլու: Կապալով տրւում է մօտ 2 միլլ. դես.: Ուղէլին են պատկանում խաղողի ամենամեծ այգիները Ռուսաստանում—մօտ 700 դեսիատին. գինու ամենամեծ առևտուրը նրա ձեռքին է. 1897 թ. մօտ 2 միլլ. շիշ գինի է ծախուել (սեւ «Ուղէլների հարկւրամեակը», 1797—8897 թ. թ.):

3, Բացի հողից և արդիւնաբերական ձեռնարկութիւնների արդիւնքներից՝ օրէնքով (120 յօդ. հատ.) մաս 1, օրէնքների ժող.) որոշուած է նաև առանձին դրամագլուխ: Այդ դրամագլխին է աւելացրուած ս.յն 48,659,000., որը զանձարանը վճարել է ուղէլի վարչութեանը սրա ճորտերի ազատութեան համար:

4, Այսպէս անուանուած կաբինէտային հողերը, որոնք նոյնպէս պատկանում են կայսրին, Սիբիրում հասնում են մօտ 41, 600,000 դես. (Ալտայի շրջան), չը հաշուելով առանձին կալուածքները, օրինակ Լիվադիան (Ղրիմում), յախճապակեայ և այլ գործարանները և այլն:

5, Կալուածքների դնումը հիմա էչ շարունակուում է: Հէնց մեր օրերում իշխ. Ճավճավաձէից Կախեթում ձեռք բերին 14¹/₂ հազար դես.:

6, Կայսերական տոհմի պահպանութեան մասին գրուած է օրէնքների ժողովածուի 1 հատ. 1 մասում: Այդտեղ 124 յօդ. ասում է. կայսեր երեխաների համար, ծննդեան օրից մինչև չափահաս դառնալը, տարեկան բաց է թողնում 33 հազար բուրլի. իսկ չափահաս դառնալուց յետոյ՝ պալատ շինելու համար՝ ամեն մի որդուն բաց է թողնում մի միլլիօն բուրլի (129 յօդ.):

V. Առանձնապէս ազնուականների համար ձեռնտու ի՞նչ օրէնքներ կան:

1, 1901 թ. յուլիսի 20 ին մի օրէնք հարատարակուեց՝ ազնուականներին արտօնեալ պայմաններով Սիբիրում հող տալու մասին: Առաջներում էլ այդպիսի հողեր տրուել են նրանց. 1871 թ. յուլիսի 4-ի օրէնքով Ուֆայի նահանգում ազնուականներին և աստիճանաւորներին 54,000 դես. հող բաժանուեց,

որպէսզի նրանք օրինակելի տնտեսութիւն սկսեն այդ հողերի վրայ: Գանձարանը այդ հողերի համար վերցրեց միայն 63,426 ռուբլի: Ազնուականներն ու աստիճանաւորները տնտեսութիւնների հիմք չդրին և հողը վաճառեցին գիւղացիներին 577,697 ռուբլիով (տես Труды сельско-хозяйств. комитетовъ):

2, Հողը կապալով տալու մասին էլ գոյութիւն ունի առանձին արտօնեալ օրէնք: Կապալաւարձը օրէնքով սահմանափակուած չէ և նրան կարելի է բարձրացնել անսահման կերպով. այն ինչ՝ հողն էլ նոյն գրամագրութիւն է, իսկ օրէնքով չի կարելի փոքր պարտք տալ՝ 120/0-ից աւելի վերցնելով. դրանից աւելի մեծ տոկոս վերցնելու պատճառով՝ կարելի է բանտարկուել երկու ամսից մինչև մի տարի և չորս ամիս ժամանակով (Հաշտ. դատաւոր. պատժագրքի 1802 յօդ., 1895 թ. օրէնքների ժողովածուի XV հատ.):

3, Գիւղական հասարակական տուրքեր չեն վերցնուած ազնուականներից և այլ գասակարգերից. միայն գիւղացիներից են վերցնուած այդպիսի տուրքեր, թէև Գիւղական պաշտօնեաները ծառայում են անխտիր բոլոր գասակարգերին. սակայն օրինակ, դեռ 1869 թուին գիւղական համայնական տուրքերը հասել են 46,100,000 ռ. մեծ գումարին:

4, 1886 թ. յունիսի 12-ին օրէնք հրատարակուեց գիւղական վարձու աշխատաւորներին (ծառսնների, բանուորների) մասին: Այդ օրէնքով բանուորները քաղաքացիական դրժումների համար պատասխանատու են քրէական կարգով: Գործի տէրը իր սեփական իշխանութեամբ կարող է վտրձից յետ դնել և ոչ միայն վատ աշխատելու համար, այլև տիրոջ կամ նրա ազգականների ու տան անձնաւորութիւնների հետ կոպիտ վարուելու համար:

5, 1899 թ. մայիսի 24-ին օրէնք հրատարակուեց ազնուականների պանսիօն-ապաստարանների մասին: Դպրոցներին կից տոհմական ազնուականների երեխաների համար բացուած են առանձին հանրակացարաններ, որպէսզի նրանք չապրեն միւս գասակարգերի երեխաների հետ: Գանձարանից փող է տրուած այդ հիմնարկութիւնների շինութիւնների և սկզբնական այլ ծախսերի համար: Բացի դրանից՝ տարեկան ծախսի կէսը նոյնպէս գանձարանից է տրուած և միայն միւս կէսը տալիս են իրանք ազնուականները:

6, Մի առանձին օրէնք էլ գոյութիւն ունի՝ ազնուականների փնխադարձ օգնութեան գրամարկների (կասսաների) մասին: Այդ կասսաների նպատակն է օգնել ազնուականներին՝ գրաւուած կայքերը ազատելու: Կասսայի վճարի մի մասը ից Յուլիս, 1906.

րանք ազնուականներն են տալիս, իսկ զանձարանը իր կողմից մի քանի միլիոն աւելացնում է այդ կասսաների վրայ: Այդպիսով զանձարանը ազնուականներին փող է տալիս, որ նրանք վճարեն հէնց իրա զանձարանի պարտքը:

VІ. Ո՞ր պետութեան մէջ է ժողորուրդը աւելի կուշտ:

1, Բոլոր տեսակի հացահատիկների միջին բերքը մի դե-սետինից Բելգիայում հասնում է 129 պուգի, Անգլիայում—123 պ., Միացեալ Նահանգներում—83 պ., Ֆրանսիայում—81 պ., Գերմանիայում—78 պ., Աւստրիայում—69 պ., իսկ Ռուսաս-տանում—39 պուգի:

2, 100 դեկտարին հողի վրայ ընտանի կենդանիներ գա-լիս է—Գերմանիայում—132 գլուխ, Ֆրանսիայում—102, իսկ Ռուսաստանում—41:

3, 1870-ից մինչև 1879 թ. և 1896—1900 թ. հաճարի տարեկան միջին բերքը Ռուսաստանում $856\frac{1}{2}$ հազար պուգից բարձրացել է 1,008,000 պուգի, այսինքն աւելացել է 20% , իսկ ազգաբնակչութիւնը այդ նոյն ժամանակամիջոցում աւե-լացել է 40% -ով, և բնականաբար այդ պատճառով մնունըը քչացել է (տես Труды Комиссии по оскудѣнію центра).

4) Զինուորական ատեանների հաշիւների համաձայն՝ 1874—1878 թ. թ. նորակոչներից անպէտք են համարուել $6,1\%$, իսկ 1896—1901 թ. թ.— $13,8\%$:

VІІ. Ո՞ր տէրութեան մէջ ժողովուրդը աւելի ուժեղ ուստող է:

Հազար մարդուց Շվեդիայում մեռնում են 16,9 Ան-գլիայում—19,1, Ֆրանսիայում—22, Գերմանիայում—25,1, իսկ Ռուսաստանում—35:

VІІІ. Ռուսաստանի Բիւջէն (մուտքն ու ելքը) հանում է երկու միլիարդ ռուբլու, որից պետական պարտքի տոկոս վճարուել է 1884 թ.—264,493449 ռ.: Տասը տարի յետոյ, 1895 թուի համար, նշանակուած էր 284,207,900 ռ.: Իսկ ներ-կայումս, մանաւանդ վաշխառուական հիմունքներով և պայման-ներով արած՝ վերջին փոխառութիւնից յետոյ՝ համարեա երկու անգամ աւելի պիտի հաշուել: Ռուսաստանի բնակիչների ընդհանուր թիւը, ըստ 1897-ի ընդհանուր մարդահամարի, հա-ւասար էր մօտ 130 միլիոնի: Ուրեմն ամեն մի բնակիչն՝ հա-շուելով և երեխաներին՝ պետական պարտքի տոկոս գալիս էր այն ժամանակ 2 ռուբլուց աւելի, իսկ ներկայումս անշուշտ կը գայ մօտ 4 ռուբլի:

IX. Բանտային վարչութեան հաշիւների համաձայն՝ Սիբիր և Սախալին ուղարկուած է իւրաքանչիւր տարի մօտ 100,000 մարդ: 1885 թուին Սախալին ուղարկուել է 7000 մարդ, իսկ 1897 թուին—25,500 մարդ. ընդամենը 1885-ից մինչև 1887 թ., II տարուայ ընթացքում՝ 200,000 մարդ:

X. Բանտերի պահպանութեան համար իւրաքանչիւր տարի ծախսուած է 14 միլիօն ռուբլի. իսկ պահակների (Стражники) վրայ այն նահանգներում, որտեղ նրանք մտցրուած էին սկզբից, իւրաքանչիւր տարի ծախսուած է 6 միլիօն ռուբլի:

XI. Անգրագէտների տոկոսը: 100 հոգու վրայ Գերմանիայում հազիւ ընկնում է 2 անգրագետ, Միացեալ Նահանգներում—8, Անգլիայում—10, Ֆրանսիայում—15, Աւստրիայում—48, իսկ Ռուսաստանում—84: Ճապոնիայում տարրական դպրոցներում 100,000 հոգի աւելի են սովորում՝ քան Ռուսաստանում, չնայած որ Ռուսաստանի ազգաբնակչութիւնը 85 միլիօնով աւելի է Ճապոնիայից:

XII Կողմակի կամ անուղղակի հարկերի մօտին: Օգու աղցիդը սկզբից որոշած էր գրադուսին 4 կոպ., 1900 թուից բարձրացաւ 11 կոպ., իսկ հիմա $11\frac{1}{2}$ կոպ., այնպէս որ մի վեդբօ 40 աստիճանի (գրադուսի) օգու համար գանձարանին տրւում է 4 ռ. 60 կոպ.:

Մախօրկա հասարակ ծխախոտի համար 1878 թ. նշանակուած էր ֆունտին 4 կոպ. աւցիւղ. 1900-ն—9 կոպ.: Մի պուղ շաքարի պատրաստիլը նստում է մօտաւորապէս 1 ռ. 60 կոպ. —2 ռ. (ֆունտը 4—5 կոպ.) իսկ աւցիւղ մի պուղ շաքարի վրայ 1893-ին նշանակուած էր 1 ռ. 75 կոպ.: Մի պուղ նաւթի աւցիւղը 60 կոպէկ է:

Այս 1906 թուի ուղղակի հարկեր նախատեսնուած է 148,318,203 ռ., իսկ անուղղակի հարկեր—424,922,700 ռ., որ պիտւորապէս ընկնում է սպառող աղքատիկ ժողովրդական մասսաների վրայ:

Սալլիւման,

Եթէ յոգնեցիր կեանքի կըռուի մէջ,
 Եւ հոգիդ կարօտ է լուռ հանգըստեան,
 Ջրգիր առօրեայ հոգսերդ անվերջ
 Եւ թըռիւր դէպի գիրկը բընութեան:
 Որպիսի՜ հեշտանք—խաղաղ անկիւնում
 Թափառել կանաչ ծառուղիներում,
 Շընչել անտառի կենսարար օդը
 Եւ դադար առնել ախորժ ըստուերում,
 Ուր թաւշի նըման քընքոյշ է խոտը.
 Կամ խոր ձորի մէջ, գետակի ափին,
 Ուր կորագըլուխ նիրհում է ուռին,
 Քարերի վըրայ նըստած երազել
 Եւ ջըրի ձայնին ունկընդիր լինել:
 Ի՞նչ երանութիւն—լեռների գըլխից
 Հիանալ շրքեղ տեսարաններով
 Եւ հեռու երկրի տառապանքներից՝
 Ուրախ և ազատ երգել անխըռով,
 Մոռանալ տանջող վըշտերըն անթիւ
 Եւ բիւր հոգսերից մի պահ՝ աղատուած՝
 Մի վայրկեան ըզգալ իրան վեհ արծիւ՝
 Կօրովի թափով ամբերին հասած:

Լևոն Մանուէլեան

Մ Օ Տ Ի Կ Ա Ն Ց Ե Ա Լ Ի Ց

III

Բունանտիկ մտածողութեան յատուկ է՝ աւելի ղեկավարուել սրտի և երեակայութեան թելադրութեամբ, քան բանականութեամբ, առողջ դատողութեամբ: Երևոյթների, փաստերի օբեկտիւ վերլուծումը, րազմակողմանի ուսումնասիրութիւնը, քննական վերաբերմունքը անմատչելի են կոյր հաւատով, ցնորքներով տոգորուած գլուխներին: Եւ դրա ամենացաւալի ապացոյցն ներկայացնում է «Արծրունու շկոյայի» բռնած ընթացքը հայկական աղատագրութեան սկզբնաւորութեան ժամանակ: Հայ ժողովրդի, հայկական գաւառների մասին ոչ մի դրական գաղափար չունեցող Արծրունին ուսասիրական քարոզներ էր կարգում, անգիտակցաբար գործիք դառնալով Լոբանով-Ռոստովսկիների ձեռքում, որոնց շահը թելադրում էր այդ ժամանակ գրաւել թիւրքահայերի համակրութիւնը, դժուարութիւններ յարուցանել հակառակորդ թիւրք կառավարութեան առջև, միաժամանակ ոչ մի երաշխիք չտալով հայերին նրանց հակաթրքական քաղաքականութեան հետևանքների համար: Պատահական ցնորքի ետեւից ընկած Արծրունին «մտրակում էր» Անգլիայի եսասիրութիւնը, նենգամտութիւնը, և այլն կարծելով թէ քաղաքական աշխարհում որևէ նշանակութիւն կարող է ունենալ իդէալիստի այդ ասեղիծակոցները: Գերմանական բոմանտիզմի այդ հայկական ներկայացուցիչը նոյն իսկ ազգայնական միասիրանիզմ էլ էր քարոզում, հաւատացած լինելով որ հայը միակ կուլտուրական տարրն է թիւրքիայում և իրաւունք ունի կուլ տալու միւս անկուլտուրական ազգութիւնները այնտեղ... Հայկական տառանջաններն էլ պէտք է փոխարինէին արաբականները... Եւ զարմանալի աջողութեամբ Արծրունին գտնում էր հետևողներ մեր կեանքում. «ձըկնորսներ», ինչպէս նա պարծանքով անուանում էր այն թերուսներին, որոնք կուրօքէն ընդունում էին նրա պատգամները և դառնում աշխատակիցներ. իսկ բոլոր այն մարդկանց, որոնք քննադատաբար էին վերաբերում նրա յայտնած մտքերին, ինքնուրոյնութիւն էին ցոյց տալիս՝ սպասում էր հայհոյեանք, նը-

շաւակում, ծաղր ու ծանակ, կարճ ասած խօսքի ահաբեկում:

Սակայն տեսնենք հէնց այն ժամանակ, երբ Արծրունու շիօլան քարոզում էր Թիւրքահայերի ապստամբութիւնը, դեկավարութիւնը սլաւօնական ազգերի շարժման անալոգիայով, ինչ կարող էր տալ աւելի դրական, օրեկտիւ մտածողութիւնը, քաղաքական հասուն միտքը:

Ճիշտ է, Չերնոգորիան, Սերբիան, Յունաստանը, Բոսնա-Հերցոգովինան և Բուլղարիան էլ Թրքական լուծի տակ էին և ազատութեան ապստամբութիւնով: Բայց մակերեսային անալոգիայից բացի պէտք է ինկատի ունենալ շատ խոշոր, հիմնական տարբերութիւններն ևս: Թուենք այստեղ մի քանիսը. 1) այդ սլաւօնական և յունական երկիրները իրանց աշխարհագրական դիրքով անջատուած են Ասիական Թիւրքիայից, ուր ապրում է տիրող թուրք տարրի մասսան. 2) այդ սլաւօնական և յունական երկրներում աղղաբնակութիւնը կազմուած է միատարր, նոյն ազգութեան պատկանող բնիկներից, իսկ թուրք տարրը ներկայացրուած է այնտեղ միայն յանձին պաշտօնեաների և զինուորական պահակախմբերի. խառն մահմեդական ստուար ազգաբնակութիւն գոյութիւն չունէր Թիւրքիայի այդ մասում. 3) այդ նուաճած երկրներում մինչև վերջը իրանց ֆէօդալական իշխանութիւնը պահպանում էին տեղական ազնուականները, իշխանները, որոնցից միայն մի մասը կրօնափոխ լինելով, այնուամենայնիւ ցեղական կապ էր պահպանում գիւղացիական ազգաբնակութեան հետ: Այդ ֆէօդալները ունէին ձեռքի տակ զինուած խմբեր: Չերնոգորիան մինչև վերջն էլ ինքնօրէն կիսանկախ իշխանութիւն էր, իր յատուկ զօրքով: 4) Իրար կողք կողքի տուած այդ սլաւօնական երկրները միշտ պատրաստ էին իրար օգնութեան հասնել, հեռու շրանց մէջքին զօրավիգ էր կանգնած արիւնակից և հաւատակից Ռուսաստանը: 5) Յոյների փառաւոր անցեալը, նրանց կրօնակցութիւնը Ռուսաստանի հետ, նրանց երկրի աշխարհագրական դիրքը, նրանց ստուարաթիւ առևտրական նաւատորմիղը այնպիսի ֆակտորներ էին, որոնց նշոյլը չկար հայկական կեանքում. յոյներին փողով, մարդկանցով, զէնքով, զօրքով, ռազմանաւերով օգնում էր ամբողջ քաղաքակիրթ աշխարհը, մինչդեռ հայերին խղճում էին, ձեռք կարկառում միմիայն նրանց որբերին խնամելու ժամանակ... Երբ Բայրոններ էին զոհուած Էլլադայի ազատութեան համար Անգլիայի Կանինգսները չէին կարող չմիջամտել Յունաստանը Մեհմեդ Ալիի ճանկերից ազատելու համար: 6) Բուլղարիան չունէր այդ հմայքը, սակայն փոխարէնը կար հզօր Ռուսաստանի զինուած աջակցութիւնը: Երբ սկսուեց

Բոսնա-Հերցեգովինայի ապստամբութիւնը 1875 թուականին, բռնկեց նորից ազատագրական շարժումը և Բուլղարիայում. թիւրքերի բարբարոսութիւնները ապստամբ բուլղարներին նկատմամբ միայն Գլադստոնի ճառերով չէին նշաւակուում, այլ ուստի հասարակութիւնը ստիպեց միջամտել ցարին: Ռուսաստանը զէնքի ոչոքով ստիպեց սուլթանին տալ բուլղարներին աւելի քան այն չնչին բեֆորմները «բուլղարներով բնակուած վիլաէթներում», որ մշակել էր 1876 թուականին դեկտեմբեր ամսում Պոլսի կոֆերենցիան և որ չուզեց իրագործել սուլթանը: Ռուսաստանը մի քանի ամիս անց (1877 թ. ապր.) պատերազմ յայտարարեց և իր զօրքերով գրաւելով Բուլղարիան հէնց պատերազմի ժամանակ այնտեղ փութով կազմակերպեց բուլղարական զօրք էլ, քաղաքացիական ամբողջ մի վարչութիւն էլ և հեռացաւ այդ երկրից միայն այն ժամանակ, երբ Բուլղարիան ունէր իր իշխանը, իր սահմանադրութիւնը, իր զօրքը, իր կառավարութիւնը: Հետեւապէս Ռուսաստանը շատ լաւ էր հասկանում թէ ինչ էր նշանակում իր համակրանքը վայելող երկրների ապահովութեան իրական զարանտիւան թուրքական խժդժութիւններից, վրէժից: Իսկ նոյն կառավարութեան ներկայացուցիչ Լորանով-Ռոստովսկին Պոլսում այդ ժամանակ խրախուսում էր հայերի ոռոսասիրութեան միամիտ, անհեռատես արտայայտութիւնները, շահագրգռուած միայն ներանով որ հայերին զո՞ւ բերելով դժուարութիւններ ստեղծի հակառակօրդ թիւրքիայի առջև: Երբ այդ հարկաւոր էր՝ խրախուսում էին հայերի հակաթրքական բժրոքութիւնները, թուրքերին կատաղեցնող ոռոսամտական յիմար ցոյցերը, թոյլ էին տալիս նրանց սին յոյսերով օրօրուել և անհեռատես քայլեր անել, իսկ երբ շահը այլևս չէր պահանջում այդ տեսակ քաղաքականութիւն—նոյն Լորանով-Ռոստովսկին խրախուսում էր որ Սուլթանի կառավարութիւնը մի լաւ դաս տայ բժրոք հայերին... 7) Եթէ ուզենանք անպատճառ անալոգիաներ անել և գտնել թիւրքիայում թիւրքաց Հայաստանին բախտակից մի երկիր, պէտք է կանգ առնել միայն Մակեդոնիայի վրայ, ուր չկայ միապաղաղ ցեղական կազմութիւն, ուր ալբանացիները կատարում են քրդերի դերը, ուր թիւրքական բեժիմը աւելի խոր է դրել իր աւերիչ դրօշմը: Անշուշտ Մակեդոնիան էլ թիւրքաց Հայաստանի համեմատութեամբ աւելի նպաստաւոր դիրք ունի յեղափոխական գործունէութեան համար, քան Հայաստանը: Մակեդոնիայի սահմանակից բոլոր երկրներում ազատօրէն կազմուած են հրոսական խմբեր, որոնք ամեն տեսակ աջակցութիւն են գտնում այդ երկրների կառավարութիւնների

կողմից: Մակեդոնիայի ամբողջ դժբախտութիւնը այն է որ ազգայնական ժրջութիւնը բաժան բաժան է տնում յոյն, սերբ, բուլղար, ռուս, ալբանացի տարրերը ի մեծ ուրախութեան սուլթանական ընծիմի: Հայաստանում գոյութիւն ունին Մակեդոնիայի բոլոր բացասական հանգամանքները, բայց ոչ մէկը առաւելութիւններից: Մեր «քաղաքագէտները» միամտօրէն կարծում էին թէ անգլո-ռուսական տարամերժ շահերը թիւրքաց Հայաստանում պէտք է դադարեն վճողական նշանակութիւն ունենալու հէնց որ սկսեն ազդել դրանց խղճի, արդարութեան, մարդասիրական զգացմունքի վրայ, հէնց որ ինքնազոհութեամբ զարմացնեն աշխարհը, ապացուցեն որ հայը ընդունակ է յուսահատ կուտւում հարիւր հազարներով կոտորուել: Եւ այդ սնահաւատութիւնը այնքան զօրեղ էր մեր մէջ որ երբ Բերլինի դաշնագրով ոչ մի դրական բան չվստահեցինք, այդ անաշուղդութիւնը բացատրում էինք միայն նրանով որ «արիւն չենք թափել»: Շատ բնորոշ մի նմուշ այդ մտածողութիւնից թող տեսնի ընթերցողը կարդալով ներքեւում առաջ բերած (տես «Հայրենիք» № 24, 362) երկու նամակները.

Կարին, 20 օգոստոս 1878

«Սիրելի Հայրիկ,

Երբ ուղեւորուեցաք յԵւրօպ եւ անդ գտաք այնչափ փառաւոր ընդունելութիւններ, մեծամեծ խոստումներ, սքանչելի յոյսեր քաղաքագէտ նշանաւոր անձինքներէ նոյնիսկ ինքնակալ կայսրերէ ու կայսրուհիէ, յայնժամ յուսոյ եւ լուսոյ ճառագայթները նշմարել կարծեցինք Հայաստանի հօրիզոնին վրայ: Ամէնուս սիրտը ուրախութեամբ արբշիւ, ճակատնիս պանծալի, ապագան յուսածիծաղ, կարծես երկնային զաւառներուն մէջ կ'ալարէինք: Ակնդէտ տպերնիս յԱրեւմուտք դարձուցած, ձեր մի ձայնին կը սպասէիր: Եւրօպական լրագրաց էջերը մեր յոյսերը կը քաջալերէին ու ակնկալութիւնները իրականացնել կը խոստանային. վերջապէս ամենքս ու իՊերլին հաւաքուած գերագոյն ժողովոյ շրթունքներէն առկախ մեր ազատութիւնը կամ դատաւիճիտը կը սպասէինք: Այսպէս 2—3 ամսոյ չափ յուսոյ եւ աշխուժեան մէջ ծփովէ ու տատանելէ ետք, յանկարծ քօնկըէսի փակումն ու թուրքեւ-անգլիական դաշնագրութիւնը լսեցինք, որո՛վ մեր յոյսերը յօգ ցնդած տեսանք. բարէ, ցնորք են եղեր այդ ամէնը որ մեզ կ'օրօտէր ու անուշ երազներով կը տարուբերէր... Որքան ճշմարիտ է եղեր թէ՛ քանի որ չկայ ուղղակի զոհ, չկայ եւ փրկութիւն եւ թէ՛ անպատրաստ ու անզոհաբեր ժողովուրդ մը արժանի չէ ազատութեան:

Եւհ, հոգ չէ, Անգլիան իր շահամոլութեան, Փրուսիան իր եսասի-

քուծեան ոգւոյն, Ռուսիան իր խորամանկ քաղաքականութեան, եւ այլ տէրութիւնք զանազան զգացումներու թող զոհեն տարաբախտ ազգի մը ներկան ու ծիծաղին: Թող կնամարդի եւ լալկան ժողովուրդ անուանեն մեզ, թող կարծեն թէ այս ազգը իրենց շահուն կամ քաղաքականութեան գործիք կարող են ընել: Բայց շատ կը սխալին, որովհետեւ մերն է ապագան. այո, ապագայի հօրիզօնը պայծառ է. սպմ մը երեւցած լոյսը ասուպ մըն է եղեր, սակայն այժմ կը տեսնենք մի լուսաւոր աստղ, հայ ազգին զգացումներու արթնանալը, ձեռք ձեռքի տալը, միասիրտ, միակամ եւ միահոգի խորհելու, զործելու տրամադրութիւնն ու կամքն է: Այլ եւս վախ չունինք, Հայրիկ, բաւական է որ խօսիլը մէկ կողմ դրած՝ գործի սկսինք. այո, առաւել գործ քան խօսք... (նամակին մնացած մասը կարճոյ գաւթականութեան խնդրին կը վերաբերի):

Ընդմիջող ձերդ անձնուէր՝ Յ. Մ. Նշկեան

Պատասխան

«Իմ եւ Հայրենեաց մտերիմ բարեկամ

Ձեր սրտախօս նամակն վաղուց ստացած եմ, զիս մի դատեր որ չկրցայ փութով նորա պատասխանը գրել, վասնզի կարի պատեցին զիս զբաղումներ յայն օրէն երբ ի Պօլիս մտայ:

Ինչ որ գաղթականութեան մասին դրած էիք, այժմ թողունք զայն, զի ինչ պիտի լինէր եղաւ ու անցաւ:

Նամակիդ միայն այն կէտին վրայ ուրախ եմ, որ դուք թերահաւատ չէք ումանց պէս որոնք յուսահատութեան տրտունջ կը բառնան եւ կը խօսին թէ Քօնկրէան հայոց ինքնորինութիւն չտուաւ կամ թէ նորա իրաւունք զլացան եւն: Այլ դուք այսպէս չէք մտածեր եւ իրապէս կը դատէք որ մի ազգ առանց պատրաստութեան որ իր զարգացումը բարոյապէս եւ նիւթապէս, առանց զոհի եւ արեան որ հարկնի ազատութեան զխաւոր պայմաններն են, երբէք այդպիսի մի ազգ արժանի է ազատութեան եւ ինքնավարութեան: Եթէ ամէն դրբա՝ հապա ինչու խնդրեցինք երբ մենք զմեզ կը ճանաչէինք՝ երբ գիտէինք կանխապէս թէ հայոց խնդիրը չպիտի պսակէ Քօնկրէան:

Այս մի թաքուն խորհուրդ է որ շատ պատճառներ ունի եւ ես կարող չեմ դրով պատմել ձեզ այժմ թէ ասդ եւ թէ այդր... Միայն այսքան կը գրեմ որ ազգին քաղաքագէտ եւ հեռատես անձինք խորհրդով աչ խնդիրը երեւան հանեն, որպէսզի այժմէն ապագային համար արժանազորն է եւ ինքն ձայն տայ Եւրօպիոյ առաջ թէ Ասիական մասին մէջ մի ժողովուրդ կայ, որ արժանի է Եւրօպիոյ ուշադրութեան:

Հայոց ներկայ խնդիրը մի առաջին քայլն էր զոր յառաջ տարու. ապագայի ազատութեան համար մի քար էր զոր հիմը դրաւ, որու շէնքը

ալ ժմէն սկսեալ պէտք է պատրաստենք այն յուսացեալ տալազային համար որ զուցէ շատ հեռու չէ, յորում դարձեալ պիտի ծնի Արեւելեան յաւիտեանական խնդիր. Արեւմուտքի մէջ գրեթէ լրացաւ այդ խնդիրը, անշուշտ Արեւելքի մէջ եւս պիտի լրանայ:

Աշխատենք եւ սպասինք այն տալազային համար. աշխատենք, որ երբ հասնի մօտենայ այդ յուսաբեր տապալան, հայք քաջացօտն պատրաստ զօրնունքն. միայն զրջով, թրղթով եւ խեղճ վեղարով ճերկայանան Եւրօպիոյ դահլիճի առաջ, այլ զՆքով ու արիւնով ինչպէս դիպցան Գարատաղին:

Ազնիւ երիտասարդ, ես ծեր եմ թեր եւս չհասնիմ այն ցանկալի տալազային, յորում իբրեւ ծերունին Աիմ,օն պաղատէի բարձրելոյն առաջ «արդ արձակեա՛ն զճառայս քո Տէր, զի տեսի ազատ մանուկն Հայաստան». իսկ զու որ ընդանձակ ախազայ ունիս եւ նորա յոյսով կը խայտաս, զհնուորուիք տոժմէն, քաջալեր՝ եւ զինէ քեզ նման հայրենակիցներդ, լոյս եւ երկաթ միասին լծորդելով վազեցէք դէպի յայն տապալան: Եւ օրնէ՛ ձեզ

1878 Նոյեմ. 10 Պոլիս

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Տեսնում էք ինչպիսի իդէալիզմ, հաւատ թէ՛ մեր փրկութիւնը միայն արիւն թափելու, զոհուելու մէջ է: Այդ մարդիկ կարծեա կորցրել էին ընդունակութիւն կռուելու իրական պայմանները, սառնասիրտ չափելու անդէն, ճորտ գիւղացիութեան եւ ստրկացած հայ բուրժուազիայի ոյժերի անսահման ողնշութիւնը թուրք-քրդական հզօր, ստուար, միապաղաղ զանգուածի հանդէպ: Այդ մարդիկ այնքան հիպնոսած էին ազգային ինքնավարութեան գաղափարով որ բնաւ նշանակութիւն չէին տալիս, մի կողմ թողած թիւրքիւն, նաեւ Անգլիայի եւ Ռուսիայի շահերի մրցութիւնը, որի արանքում հայութիւնը կարող էր ձմրուել, ինչպէս մի մժղուկ: Եւ այդպիսի արտակարգ բարդ, փափուկ, եզակի հանգամանքներում մեր ազգային ջոջերը բոժանտիզմով տարուած միամիտ փորձեր, էքսպերիմենտներ էին անում, ապստամբութիւն ծրագրում... O sancta simplicitas!

Կռիւ էին յայտարարում առանց մտածած, ուսումնասիրած տակտիկայի, առանց ներքին ոյժի, առանց դրսի օգնութեան. դա միթէ խիզախ անստույգութիւն չէր, ազգակործան խաղ չէր հրդեհի հետ: Ահա թէ ինչ թեթիւ սրտով էր սերմանւում քամիներ ապագայ մրրիկներ հնձելու համար: Եթէ պատասխանատուութիւնների յետեւից ընկնելու լինինք նախ այս եօթանասնական թուականի ջոջերի բոժանտիզմի մէջ որոնենք այն...

Ասկախ

(Շարունակելի)

ԿԱՐԼ ՄԱՐՔՍԸ ԵՒ ՄԱՐՔՍԻԶՄԸ *)

I

Մարքսի կեանքը, սոցիալ-քաղաքական, հրապարակախօսական գործունէութիւնը եւ գրական վաստակները:

Segui il tuo corso e lascia dir le genti!

Հետեի՛ր ճանապարհիդ, և թող
մարդիկ խօսեն, ինչ ուղում
են:

Դաճէ:

16.

Մարքսի «Կապիտալի» 1 հատորը:—Մի նոր դարադուլի հասարակական գիտութիւնների մէջ:—«Կապիտալի» նշանակութեան գնահատութիւնը՝ Անդլիայում, Ֆրանսիայում և Գերմանիայում:—«Կապիտալը» և ինտերնացիոնալը:—Գնահատներ Մարքսի լեզուի մասին:—«Կապիտալի» բովանդակութիւնը:—Ապրանքային արդիւնաբերութեան մասին, նրա հասարակական բնոյթը:—Փողի մասին:—Փողի և կապիտալի յարաբերութիւնը:—Կապիտալի սկզբնական ակումուլացիան:—Մարքսի արժէքի և յաւելեալ արժէքի ուսմունքը:—Ցաւելեալ արժէքի երկու ձևերը:—Մեքենաների և մեծ ինդուստրիայի սկզիալական ներգործութիւնը:—Աշխատավարձի մասին:—Շվայցերլէնդելսը և Եօզէֆ Դիցքենը «Կապիտալի» մասին:

Ուղիղ այն ժամանակ, երբ Լօղանում տեղի էր ունենում ինտերնացիօնալի երկրորդ կօնգրեսը (1867.), Լօնդօնում լոյս տեսաւ Կարլ Մարքսի ամենա՜նժ ու աշխարհահռչակ աշխատութեան առաջին հատորը:—«Կապիտալ»-ը:

Երկարամեայ քրթնաշան ուսումնասիրութիւնների և խորագին հետազօտութիւնների հսկայական արդիւնք էր «Կապիտալը», որ եկաւ անցեալ դարու 60-ական թուականներից սկզբած վերաստեղծելու մի անօրինակ դարազուլի հասարակական

*) Տե՛ս «Մուրճ» № 6.

գիտութիւնների սահմանում: «Կապիտալն» էր և միայն «Կապիտալը», որ 40-ական թուականների վերջերին պատմա-փիլիսոփայական հակիրճ ու կլասիք ֆորմուլաների մէջ հիմնաւորուած սօցիալիզմը՝ 60-ական թուականների վերջերին դրեց գիտական անխախտ ու անսասան հիմքերի վրայ: Եւ եթէ մենք այսօր մարքսիստական սօցիալիզմը գիտական սոցիալիզմ ենք յայտարարում, ապա այդ միայն «Կապիտալի» շնորհիւ, «Կապիտալի» առաջին հատորը լոյս տեսնելուց ի վեր: Քանիքանի անուանի տնտեսագէտներ ու սօցիոլոգներ են տարիների զրադմունքի առարկայ դարձրել այդ ունիվերսալ երկասիրութիւնը, «Կապիտալի» իւրաքանչիւր հատորը, նրա մէջ շօշափուած ու հիմնաւորուած այս կամայն թէօրիան: «Կապիտալի» զրակունութիւնն-դա կազմում է ամենամեծ ու պատկառելի բաժինը ողջ մարքսիզմի ծով գրականութեան մէջ:

Մենք դեռ յետոյ՝ մեր յօդուածների II սերիայում, պիտի ծանրանանք մարքսիստական բոլոր գլխաւոր թէօրիաների — կլասիք մարքսիզմի — վրայ, այնպէս որ այստեղ, I սերիայում Մարքսի ընդհանուր կենսագրական բաժնում, չպիտի շօշափենք այն տնտեսագիտական թէօրիաներն ու պրոբլեմները, որ տալիս է մեզ «Կապիտալի», առաջին հատորը, այլ միայն համառօտ գաղափար կը տանք նրա բովանդակութեան մասին, ինչպէս սովորաբար արել ենք Մարքսի միւս աշխատութիւնների նկատմամբ:

«Կապիտալը» ըստ Մարքսի յայտարարութեան, կազմում է շարունակութիւնը 1859 թ. լոյս տեսած գրքի՝ «Zur Kritik d-r Politischen Oekonomie» վերնագրով: Ուէթ տարիների երկար ընդմիջումը՝ սկզբնաւորութեան և շարունակութեան մէջ, վերագրելու է Մարքսի երկարամեայ հիւանդութեան, որ շատ յաճախ ընդհատում էր նրա ինտենզիւ զրադմունքները: Նախկին աշխատութեան («Zur Kritik»-ի) բովանդակութիւնը, որի հետ մենք ծանօթացանք իր ժամանակին, համառօտաբար ամփոփուած է «Կապիտալի» I հատորի առաջին գլխում՝ անպայման աւելի բովանդակալից ու սուր, աւելի քննադատաբար ու վարպետօրէն, քան առաջ: Սկզբի գրքում եղած երկու հատուածները՝ արժէքի և փողի թէօրիաների մասին, դուրս են ձգուած «Կապիտալից»:

«Կապիտալի» արժէքն ու նշանակութիւնը գնահատուեց հրապարակով բաւական ուշ: Յետոյ միայն՝ 80-ական թուականներից սկսած հետզհետէ հեղեղեց գիտական զրականութիւնը «Կապիտալի» վերաբերեալ եղած ուսումնասիրութիւններով: Ուրիշ խօսքով «Կապիտալին» վիճակուեց սկզբում

այն, ինչ վիճակում է առհասարակ իւրաքանչիւր խոշոր, եզակի տեղ գրաւող և դարագլուխ կազմող աշխատութեան: Ուշ յայտարարուելով նրա էութիւնը, բնականաբար ուշ զգացուեց ու յայտնի դարձաւ նաև նրա ազդեցութիւնը, սոցիալական ներգործութիւնը: Եւ չնայելով, որ այդ հսկայ երկի] հատորը լոյս տեսնելուց դեռ ամբողջ հինգ տարի շարունակեց ինտերնացիօնալը իր գոյութիւնը, այնուամենայնիւ նրա ներկայացուցիչներին շատ շատերին, մանաւանդ բոմանական՝ մասնաւորապէս ֆրանսիական պրուդօնիստներին, խորթ ու օտար, անմատչելի և անըմբռնելի մնաց «Կապիտալի» մէջ ամփոփուած ժարքսիզմը. ճիշտ այնպէս, ինչպէս անմատչելի մնաց նրանց համար Մարքսի հեղինակած «Ինսուրգուրալ ադրեսի» առաջնորդող մտքերը:

Յնգլիայում երբէք առանձնակի բարձրութեան չհասաւ տեսական (թէօրետիկական) մտածողութեան վարգացումը. այնտեղ տիրել է մեծ մասամբ «անհետևողական օպպորտունիզմը», ինչպէս անուանում է Վերը անգլիացիների անսկզբունքային պրակտիցիզմը (գործնականութիւնը), այնպէս որ անկարելի էր սպասել «Կապիտալի» նման տեսական կառուցուածքի արագ և սիրալիւր ընդունելութիւնը գործնական անգլիացիների կողմից: «Կապիտալը» չէր կարող հեշտութեամբ մատչելի լինել նաև ֆրանսիացի պրուդօնիստ իդէօլոգներին, որոնք աւելի շատ տարուած էին ակնթարթային շահերի քաղաքականութեամբ և յափըշտակուած ընկերակցական ձեռնարկութեան գաղափարով: Իսկ Գերմանիան, որ յետոյ մարքսիզմի իսկական հայրենիքը դարձաւ, դեռ թոյլ ու անզարգացած վիճակի մէջ էր բանուորական շարժման տեսակէտից, որպէսզի կարողանար գիտական սօցիալիզմը ընդունել իր մէջ և տոն տար նրա յաղթական ընթացքին:

Այսպէս, կապիտալիստական արդիւնարեւութիւնն եղանակի և յարաբերութիւնների խոր հետազօտութեան նուիրուած այդ հսկայ աշխատութիւնը մնաց սկզբներում անպատու իր հեղինակի կազմակերպչական ստղեծագործութեան համար. և միայն հին Ինտերնացիօնալի անկումից յետոյ է, որ «Կապիտալը» դարձաւ միլլիօնաւոր բանուորներ իր ստուար բանակի մէջ պարփակող միջազգային սօցիալիզմօկրատիայի համար մի գիտական մշտարժէք կաթեխիզմ:

Երկար ժամանակ, նոյն իսկ մինչև այժմ, բուրժուական գիտնականները զանգատում էին, որ Մարքսի «Կապիտալը» վերին աստիճանին դժուար, մութ ու խորթ լեզուով գրուած մի աշխատութիւն է, իսկ վուլգար տնտեսագէտների և ֆիլիսոփ

հասարակագէտները համար՝ նոյն իսկ մշուշապատ և անըմբռնելի միտքիֆիկացիայով վարագուրուած մի երկ համարուեց «Կապիտալը»:

Անտարակոյս, կան «Կապիտալի» մէջ այնպիսի գլուխներ՝ մանաւանդ առաջին հատուածը՝ ուր Մարքսը խորազննին անալիզի է ենթարկում ապրանքը, որոնք ղեկուար ըմբռնելի են, մանաւանդ անփորձ ընթերցողների համար: Սակայն դրանում մեղաւոր չէ Մարքսի ոչ լեզուն և ոչ էլ նրա պատկերացման եղանակը: Շատերը մոռանում են, որ «Կապիտալը» մի տնտեսագիտական ձեռնարկ չէ՝ մատչելի անգամ սովորական սկսնակին: Նրանք մոռանում են, որ դա լինելով մի սուր ու խոր կրտիկա բիւրգերական քաղաքատնտեսութեան, որ «Կապիտալը» կազմելով մի բաղմակողմանի վերլուծական ուսումնասիրութիւն կապիտալիստական կատարելագործուած տնտեսութեան, տեխնիքական ինդուստրիայի և հասարակական բարդ յարաբերութիւնների, որ դա հիմնելով պատմական և տնտեսական մի մեծարժէք սիստեմ և այլն, անհրաժեշտօրէն նախադրում է պատմագիտական և տնտեսագիտական նախապատրաստութիւն, որպէսզի հնարաւոր լինի «Կապիտալը» կամ առհասարակ Մարքսը կարդալ և հասկանալ: Մի այնպիսի քըննադատական-վերլուծական աշխատութիւն, որի մէջ մասնագիտական հմտութեամբ շօշափուած են այնքան լուրջ ու ծանրակշիռ պրօբլեմներ ու երևոյթներ, անկարելի է պահանջել աւելի պարզ ու յստակ լեզու, քան Մարքսի լեզուն է «Կապիտալի» մէջ: Կառուցկին այդ տեսակէտից դեռ աւելին է տաւում. «Մարքսը գրել է այնքան ժողովրդական, որքան հնարաւոր է: Որտեղ ղեկուար հասկանալի կտորներ կան, այդտեղ մեղաւորը ոչ թէ լեզուն է, այլ դրուածքի առարկան և ինքը ընթերցողը: Եթէ այդ ղեկուարամարս տեղերը վերածուէին գլորմարս կտորների, ապա դա կը կատարուէր ճշգրտութեան գնով ու հաշուին: Ժողովրդականացումը (պօպուլարիզացիան) կը հասնէր մինչև տափակութեան աստիճանը»: 55)

Գերմանական պանգերմանիստ իդէօլոգները առանձին չափ, քաղաքական մօտիւններ ունեն այդ տեսակ արտաքին սին նկատողութիւններով ու մանրակրկտութեամբ նսեմացնելու Մարքսի գարազլուխ կազմող անմեռ երկասիրութեան նշանակութիւնը: Եւ այդ բանը ամենից ճիշտ նկատել է հէնց ինքը Մարքսը 73 թ., իր գրքի երկրորդ հրատարակութեան յառաջաբանում. «Գերմանական բուրժուազիայի ուսեալ և անուս

55) Karl Kautsky, «Karl Marx Oekonomische Lehren» յառաջաբան էր. X.

Ջատագողները (ապօլոզետները) ամենից առաջ փորձեցին «կապիտալը» մեռցնել, մթուժեան մէջ թաղել, ինչպէս յաջողուել է նրանց նոյնը իմ հախկին գրուածքների վերաբերմամբ: Հէնց որ այս տակտիկը երկար ժամանակ չհամապատասխանեց նոր պայմաններին, իմ գիրքը քննադատելու պատրուակով գրեցին նրանք զանազան ցուցումներ՝ «Բիւրգերական գիտակցութիւնը հանգստացնելու համար»: Սակայն նրանք շուտով գտան բանուորական մամուլի մէջ—տես օրինակ Եօդիէֆ Դիցգէնի յօդուածները գերմ. «Volkstaat»-ի մէջ—այնպիսի գերազանց կոիւններ, որոնց համար հակառակորդները գեռ մինչև այժմ պարտական մնացին իրանց պատասխանով»: 56)

Այս բնդհանուր գիտողութիւններից յետոյ, տանք այժմ մի քանի խօսքով «Կապիտալի» բովանդակութեան էական կէտերը:

«Կապիտալի» I հատորի մէջ Մարքսը զբաղւում է բացառապէս կապիտալի արդիւնաբերութեան պրօցեսով («Der Produktionsprozess des Kapitals»): Նա բաժանում է ամբողջ բովանդակութիւնը 7 մեծ հատուածների (25 գլուխներով):

I. Հատուած—Ապրանք եւ փող (1. գլուխ—Ապրանքը: 2. գլուխ—Փոխանակութեան պրօցեսը: 3. գլ.—փողը կամ ապրանքների շրջանառութիւնը):

II. Հատուած—փողի վերածումը կապիտալի (4. գլուխ փողի վերածումը կապիտալի):

III. Հատուած—Բացարձակ (աբսօլյուտ) յաւելեալ արժէքի (Mehrwerth) արտադրութիւնը (5. գլուխ—աշխատանքի պրօցեսը եւ շահեցման պրօցեսը: 6. գլ.—Հաստատուն կամ անփոփոխ (konstant) եւ շարժական կամ փոփոխուող (variabel) կապիտալ: 7. գլուխ—յաւելեալ արժէքի համեմատական բաժինը (Rate): 8. գլուխ—Աշխատանքի օրը: 9. գլ.—յաւելեալ արժէքի բաժինը (համեմ.) եւ քանակը):

IV. Հատուած—համեմատական (րելատիւ) յաւելեալ արժէքի արտադրութիւնը (10. համեմատական յաւելեալ արժէքի գաղափարը: 11. Կօօպերացիան: 12. գլ.—Աշխատանքի բաժանումը եւ մանուֆակտուրան: 13. գլ.—Մեքենաները եւ մեծ ինդուստրիան):

V. Հատուած—բացարձակ եւ յաւելեալ արժէքի արտադրութիւնը (14. գլ.—Բացարձակ եւ համեմատական յաւելեալ արժէք: 15. գլ.—Աշխատանքի ոյժի գնի մեծութեան փոփոխու-

56) Marx «Das Kapital» I հատ. 2-րդ հրատ. յառաջաբան էր. XIII.

թիւնը և յաւելեալ արժէքը: 16. գլ.—յաւելեալ արժէքի բաժնի (համեմ.) զանազան ձևերը):

V1. Հատուած—աշխատանքի վարձը (17. գլ.—Աշխատանքի ոյժի արժէքի կամ գնի վերածումը աշխատանքի վարձի: 18. գլ.—Ժամանակի վարձ: 19. գլ.—Հատավարձ: 20. գլ.—Աշխատավարձերի ազգային տարբերութիւնները):

VII. Հատուած—Կուպիտալի կուտակման պրոցեսը (Der Akkumulationsprozess). 21. գլ.—Պարզ վերարտադրութիւն: 22. գլ.—ցաւելեալ արժէքի վերածումը կապիտալի: 23. գլ.—կապիտալիստական կուտակման ընդհանուր օրէնքը: 24. գլ.—Այսպէս անուանուած սկզբնական կուտակումը: 25. գլ.—Նորագոյն գաղութային բաքաքականութեան տեսութիւնը):

Ինչպէս տեսնում ենք, Մարքսը զբաղւում է իր գլուխ գործոցի մէջ ներկայումս տիրապետող արդիւնաբերութեան և տնտեսութեան սիստեմով—կապիտալիստական արդիւնաբերութեան եղանակով: Նա չի զբաղւում իր երկի մէջ բնութեան օրէնքներով՝ որոնք արտադրութեան ընթացքի հիմքն են կազմում. դա քաղաքատնտեսութեան գործը չէ, այլ մեխանիկայի և քիմիայի խնդիր է: Միւս կողմից նա չէ հետազոտում բոլոր ազգերի մէջ գտնուող արդիւնաբերութեան ձևերը: Մարքսը ուսումնասիրում է յատկապէս հասարակական արդիւնաբերութեան մի որոշ ձևի շարժման օրէնքները, որ յատուկ է որոշ ժամանակի (վերջին դարերին) և որոշ ազգերի—եւրոպական ազգերի կեանքին:

Կապիտալիստական տնտեսութեան ամենաբնորոշ և առանձնայատուկ կողմերից մէկը կազմում է նրա ապրանքային արդիւնաբերութիւնը, որի հետազոտութեամբ և սկսում է Մարքսը իր կրիտիկական անալիզը: Ներկայ կուլտուրական երկրներում հասարակական մարմինների բոլոր հարստութիւնները արտայայտւում են ապրանքային ահադին կուտակումներով: Որքան մանր մունր արդիւնաբերութիւնները՝ ագրարային թէ ինդուստրիական սահմաններում, ընդարձակւում և տոնու ծաւալ են տալիս հսկայական ձեռնարկութիւնների, այնքան էլ աշխատանքի այդ բոլոր ձիւղերում տիրապետում է ապրանքային արդիւնաբերութիւնը. այսինքն բոլոր արտադրող իրերը սկզբից և եթ որոշւում են փոխանակութեան, շրջանառութեան համար և ոչ թէ սեփական գործածութեան համար: Հէնց այն հանգամանքը, որ իւրաքանչիւր իր՝ ապրանք կարող է լինել միայն այն ժամանակ, երբնա արտադրւում է փոխանակութեան համար, պարզ ցոյց է տալիս, որ ապրանք առաջ գլուտ հասարակական առանձնայատկութիւններ ունի և

ոչ թէ բնական: Եւ ապրանքը իր արտադրութեան, շրջանառութեան, փոխանակութեան և գործածութեան պրոցեսով ըստինքեան ունի մի հասարակական ֆունկցիա, խաղում է հասարակական խոշոր դեր: Ինքը ապրանքային արդիւնաբերութիւնը ուրիշ ոչինչ չէ, բայց եթէ արդիւնաբերութեան մի հասարակական ձեւը, այնպէս որ անկարելի է երևակայել նրա դոյութիւնը՝ հասարակական կեանքից դուրս:

Այստեղ, ինչպէս ասացինք, չենք ծանրանում խնդիրների զուտ թէօրետիկական կողմերի վրայ, դա թողնում ենք իր տեղին ու ժամանակին: Ուստի այստեղ շատ համառոտաբար ենք անցնում:

Ապրանքային արդիւնաբերութեան հասարակական բնոյթը որոշուող յետոյ, Մարքսը անցնում է այնուհետեւ նրա դանազան ֆունկցիաներին, ցոյց տալիս նրա արժէքի ձեւերը—նրա գործածական արժէքը և փոխանակութեան արժէքը: Մարքսը մերկացնում է ապրանքի մէջ թաքնուած զաղտնիքը—նրա ֆեոլդալական բնաւորութիւնը: Մաթեմատիկական ճիշտ ֆորմուլաներով նա նկարագրում է ապրանքի շրջանառութեան ողջ պրոցեսը:

Ապա Մարքսն անցնում է փողին, բացատրում նրա էութիւնը, զանազան ձևերն ու ֆունկցիաները, նկարագրում է ապրանքների մետամորֆոզը և փողի շրջանառութիւնը, մանրամասն վեր է լուծում այն երկու մեծ ախտերը, որոնք կոչւում են առևտրի մէջ՝ գնել ու վաճառել, վաճառել ու գնել:

Այնուհետեւ Մարքսը անցնում է փողի և կապիտալի յարաբերութեան և ցոյց տալիս, թէ ինչպէս փողը վերածւում է կապիտալի, թէ ինչպէս է ծագում կապիտալը: Ապրանքային արդիւնաբերութիւնը և ապրանքների բարձր աստիճանի շրջանառութիւնը, ապա առևտուրը կազմում են այն պատմական նախապայմանները, որոնց միջոցով և զօրութեամբ ծագում է կապիտալը: Համաշխարհային առևտուրն ու համաշխարհային վաճառանոցը (շուկան) բաց են անում կապիտալի նորագոյն կեանքի պատմութիւնը:

«Պատմականորէն—ասում է Մարքսը—ամենուրեք հանդէս է գալիս կապիտալը կալուածատիրութեան հանդէպ փողի ձևով, և իրաւ որպէս փողային կարողութիւն, վաճառականի կապիտալ և վաշխառուի կապիտալ: Կարիք չկայ մի յետադարձ հայեացքի՝ կապիտալի ծագման պատմութեան վրայ, ցոյց տալու համար, որ փողը եղել է կապիտալի ծագման երևոյթի առաջին ձևը: Նոյն պատմութիւնը տեղի է ունենում ամեն օր մեր աչքի առջև: Իւրաքանչիւր նոր կապիտալ առաջին անգամ Յուլիս, 1906.

հրապարակ—այսինքն շուկայ, ապրանքների, աշխատանքի կամ փողի շուկայ—է գալիս միշտ որպէս փող. փող, որ անցնելով որոշ պրօցեսների բովով վերածւում է կապիտալի»:⁵⁷⁾

Վուլգար տնտեսագէտների այն իլլիւզիաները և պատմական անպիտութիւնը, որ իբր կապիտալի ծագումը, դրամական կուտակումները վերագրելու են անհատական եռանդի, աշխատասիրութեան և խնայողութեան, Մարքսը սուր մերկացումներով օգն է ցնդեցնում այդ բոլորը այն պատմական խոշոր փաստերով, որ հայթհայթում է մեզ կապիտալի պատմական ծագման դարեշրջանը: Եւ մեծ տնտեսագէտի բերած բազմաթիւ օրինակները՝ «կապիտալի» 24-րդ յայտնի զլխում («Այսպէս անուանուած սկզբնական ակկումուլացիան») ⁵⁸⁾, պարզ ցոյց են տալիս, թէ ինչպիսի բռնի ու աւերիչ, անգութ ու անխիղճ մեթօդներով են առաջացել փողային կուտակումները. մի պատմութիւն, որ մանրամասն նկարագրում է, թէ ինչպէս է Անգլիայի ժողովրդական մասսան անողոր էքսպրօպրիացիայի ենթարկուել—զըրկուելով հող ու կալուածքից, կենսական միջոցներից և աշխատանքի գործիքներից: Մի պատմութիւն, որ սրտախեղ է 15-16-րդ դարերում կողոպուտներով ու յափըշտակութեամբ, մաքսանկեղութեամբ, առևտրական աւերումներով և գաղութային բռնի նուաճումներով, Ամերիկայի և Հնդկաստանի անբաւ հարստութիւնների, մեծաքանակ ագելու մետաղների ներմուծումով: Մի պատմութիւն, որ փաստական զօկումնետներով վկայում է, թէ ինչպէս նորագոյն ինդուստրիական և ագրարային բուրժուազիայի նախահայրերը—ֆինանսական և կալուածատիրական արիստօկրատիան—այնքան մեծ գիւրութեամբ անհատական սեփականութեան գիրկն են ցրաւել պետական դոմինները, եկեղեցապատկան և վանքապատկան կալուածները և ժողովրդի համայնական սեփականութիւնը:

«Կապիտալի» I հատորի ամենամեծ և ամենաէական բաժինը գրաւում է Մարքսի արժէքի և յաւելնալ արժէքի ուսմունքը, որի մէջ մեծ տնտեսագէտը այնքան խոր ու ինքնուրոյն է իր քննադատական վերլուծութիւններով: Այստեղ, իհարկէ, չպիտի շօշափենք այդ ուսմունքի սահմանները, որպէս թէօրիաներ, դա կաննք մեր ազագայ յօդուածների բաժնում հիմնապէս և մանրամասն: Բաւականանա՞նք առայժմ միայն համոռօտ ակնարկներով բովանդակութեան մասին:

Ներկայ կապիտալիստական տնտեսութեան շրջանում տի-

⁵⁷⁾ K. Marx, «Das Kapital» I հատ. 5-րդ հրատ. եր. 109

⁵⁸⁾ տես «Das Kapital» I հատ. եր. 679.

յապետող վարձու աշխատանքը տարբերում է հին ժամանակների անվճար աշխատանքից գլխավորապես նրանով, որ ներկայումս կապիտալի շարժումը անսահման է, իսկ նրա ձեռք տուած զէպի յաւելեալ աշխատանքը՝ անկուշտ ու անսանձ: Տընտեսական-հասարակական կեանքի այնպիսի կազակերպութիւնների մէջ, ուր գերակշռում է իրերի ոչ թէ ապրանքային կամ փոխանակութեան արժէքը, այլ գործածութեան արժէքը, այդ տեղ յաւելեալ աշխատանք առածո որոշ չափով սահմանափակում է դոյութիւն ունեցող պահանջների շրջանակով: Սակայն այլ բան է, երբ արդիւնաբերութեան մէջ գերակշռում է փոխանակութեան արժէքը, այսինքն երբ արտադրող իրերը որոշուած են փոխանակելու, շուկայ հանելու, ուրիշ խօսքով՝ ապրանք դարձնելու: Այդտեղ արդէն արդիւնաբերող կապիտալիստը հանգէս է գալիս որպէս օտարի աշխատանքի ոյժը շահադործող մի սուրիեկտ, և նրա կապիտալը՝ որպէս մի ազահ վիշտպ, անցնում է յաւելեալ աշխատանք շահագործելու էներգիայի բոլոր չափ ու սահմաններից:

Ինչպէս որ ապրանքը ներկայացնում է մի միութիւն գործածութեան և փոխանակութեան արժէքների, այնպէս էլ արդիւնաբերութեան ողջ պրոցեսը կազմում է մի միութիւն աշխատանքի պրոցեսի և արժէք առաջ բերող պրոցեսի:

«Եթէ համեմատենք արժէք առաջ բերող պրոցեսը—ասում է Մարքսը—շահեցման (կամ շահագործման) պրոցեսի հետ, կը տեսնենք, որ շահեցման պրոցեսը ուրիշ ոչինչ չէ, բայց եթէ մի որոշ կէտի սահմաններից դուրս երկարացրած արժէք առաջ բերող պրոցես: Եթէ այս վերջին պրոցեսը համեմատ է մինչև այն կէտը (նոտրագիրը մերն է) երբ կապիտալից (այսինքն կապիտալիստի կանխիկ գումարից. Բ. Ի.) վճարուած արժէքը՝ աշխատանքի ոյժի համար, փոխարինում է մի նոր էքվիվալենտով, ապա դա կազմում է մի պարզ արժէք առաջ բերող պրոցես: Իսկ եթէ արժէք առաջ բերող պրոցեսը անցնում է այդ որոշ կէտի սահմանից դէնը, այն ժամանակ դա կոչւում է շահեցման կամ շահագործման (նոտրագիրը մերն է) պրոցես» ⁵⁹⁾:

Ահա այս տողերի մէջ է թագնուած Մարքսի յայտնի յաւելեալ արժէքի թէօրիայի սաղմը, որի փաստական ապացուցումը և մաթեմատիկական ճշգրտութեամբ հիմնաւորումը կը տանք մենք իր տեղին ու ժամանակին:

Ուրեմն ըստ Մարքսի, ինչպէս տեսանք, շահեցման կամ

⁵⁹⁾ Marx, «Das Kapital» I հատ. 5-րդ հրատ. էր. 158:

բանուորի ոյժի շահագործութեան, յաւելեալ արժէք դիզելու անողոք պրոցեսը սկսում է այն կէտից և այն ժամանակից, երբ բանուորի ջլուտ բազուկները արդէն վաստակում, վերջացնում են իրանց ստացած աշխատավարձի հաւասար կամ համազօր (էքվիվալենտ) արժէքը:

Կապիտալիստական արդիւնաբերութեան պրոցեսի կամ ապրանքային արդիւնաբերութեան կապիտալիստական ձևի ամենամեծ առանձնայատկութիւնը կայանում է հէնց նրանում, որ նա իր մէջ միացնում է աշխատանքի և շահագործման պրոցեսը, որ նա ընդգրկում է իր մէջ՝ կապիտալիստի միօրինակ հրամանատարութեան ներքոյ՝ հաստատուն կամ անփոփոխ (կոնստանտ) և անկայուն կամ փոփոխական (վարիարլ) կապիտալները—այսինքն նախ արդիւնաբերութեան միջոցները (հում նիւթ, օժանդակ նիւթ, մեքենայներ, աշխատանքի գործիչներ) և ապա՝ աշխատանքի ոյժը: Այս վերջին (վարիարլ) կապիտալն է՝ աշխատանքի ոյժը՝ որ վեր արտադրում է ոչ միայն իր սեփական արժէքը, այլև մի յաւելում—յաւելեալ արժէք—որ փոփոխական, առաձգական մեծութիւն ունի, կարող է մեծ կամ փոքր լինել:

Մարքսը տարբերում է յաւելեալ արժէքի երկու ձևեր—բացարձակ (աբսօլիւտ) յաւելեալ արժէք և համեմատական (րելատիւ) յաւելեալ արժէք: Բացարձակ յաւելեալ արժէք արտադրում է այն ժամանակ, երբ կապիտալիստը աշխատանքի ոյժի վերարտադրութեան համար որոշուած անհրաժեշտ ժամանակը ընդարձակում, երկարացնում է: Եթէ կապիտալիստի անյաջ ցանկութեան լինէր թողնուած ամեն բան, աշխատանքի օրը կ'ունենար 24 ժամ, որովհետև որքան երկար լինէր աշխատանքի օրը այնքան աւելի մեծ կը լինի յաւելեալ արժէքը: Ընդհակառակը համեմատական յաւելեալ արժէքը արտադրում է այն ժամանակ, երբ աշխատանքի ոյժի վերարտադրութեան համար անհրաժեշտ ժամանակը կրճատում ինըպատ յաւելեալ աշխատանքի: Այս երկրորդ դէպքը պատահում է յատկապէս այնպիսի ինդուստրիական ճիւղերի մէջ, ուր բարձրանում է աշխատանքի արդիւնաբերութեան կամ արտադրողական ոյժը, իսկ դա մի երևոյթ է, որ ձգում է աշխատանքի ոյժի արժէքը (կամ բանուորի աշխատավարձը): Աշխատանքի ոյժի արժէքը (կամ բանուորի աշխատավարձը) չի կրողից կաղմում է անհրաժեշտ արդիւնքը արդիւնաւետութեան սխտեմի, տեխնիքական միջոցների և հասարակական յարաբերութիւնների շարունակական յեղաշրջումների: Եւ այն բոլոր պատճառներ, տնտեսական, տեխնօլոգիական և սոցիալ-հոգեբանական բացա-

տրութիւնները, որ տալիս է Մարքսը այդ առթիւ մի շարք գլուխների մէջ՝ վերլուծելով կոօպերացիայի, աշխատանքի քաժանման, մանուֆակտուրայի, մեքենաների եւ մեծ ինդուստրիայի էութիւնը, — կազմում են Մարքսի մտաւոր արտադրութիւնների ամենանշանակալից կտորները «Կապիտալի» մէջ:

Մարքսը սուր ու խորաթափանց անալիզով մերկացնում է այն հակասական գաղտնի տենդենցները, որ նոր ու նորագոյն դարերում բերել են իրանց հետ մեքենաներն ու մեծ ինդուստրիան: Նա ոչ միայն մերկացնում է մեր առաջ այն դարհուրելի պառպելիքին ու անծայր թշուառութիւնը, որ հայթայթել է մօգերն տեխնիքական ինդուստրիան, այլև նրա աստիճանաբար զարգացող այն յեղափոխական տենդենցը, որ առաջնորդում է ներկայ կապիտալիստական հասարակութեան դէպի մի այլ աւելի բարձր կարգի հասարակական կազմակերպութիւն: Գործարանների համար մշակուած նորագոյն օրինական նորմաները համարում է Մարքսը որպէս հասարակութեան առաջին գիտակցական և կանոնաւոր-ծրագրային ներգործումը՝ արդունաբերութեան պրոցեսի հին, բնական դրութիւնը կազմաւորելու համար: Եւ ըստ Մարքսի, գործարանական օրէնսդրութիւնը կանոնաւորելով գործարանների և մանուֆակտուրայի աշխատանքը, խառնում է շահագործութեան իրաւունքների մէջ և հարուածում նրա այլանդակ առաջխաղացութեան դէմ: Օրինական նորմաները թափանցում են անգամ տնայնագործութեան սահմանը և խախտում ծնողների հեղինակութիւնը: Այսօր մեծ ինդուստրիան կազմալուծելով հին ընտանիքի էութիւնը և նրան համապատասխանող ընտանեկան աշխատանքը, միաժամանակ կազմալուծում է և՛ ընտանեկան յարաբերութիւնները:

Որքան էլ զարհուրելի և նողկալի երևայ ներկայ կապիտալիստական սխտեմի օրով հին ընտանիքի էութեան կազմալուծումը, այնուամենայնիւ մեծ ինդուստրիան վճռողական դերով հայթայթում է մի նոր տնտեսական հիմք ընտանիքի և երկու սեռերի յարաբերութեան բարձր ձևի համար հէնց նրանով, որ նա կանանց, երկու սեռի երիտասարդ և մանուկ սերնդին համախմբում է հասարակականօրէն կազմակերպուած արդիւնաբերութեան պրոցեսների մէջ՝ դուրս տնային սահմանների շրջանակից»: ⁶⁰⁾

Այնուհետև Մարքսն անցնում է աշխատավարձին և տալիս դրա թէօքիան այնպիսի կլասիք ձևերով և վարպետու-

⁶⁰⁾ K. Marx, «Das Kapital». I հատ. եր. 455

թեամբ, որ մինչև օրս դա համարում է միակ րացիոնել թէօրիան, որ գոյութիւն ունի առհասարակ տնտեսագիտութեան սահմանում: Մարքսը վեր է լուծում աշխատավարձի երկու հիմնական ձևերը՝ ժամանակի վարձ և հատուկարձ: Հատավարձը, ըստ Մարքսի, կազմում է կապիտալիստական արդիւնաբերութեան եղանակի ամենահամապատասխան վարձատրութեան ձևը: Նա տիրապետում էր մանուֆակտուրայի շրջանում և անգլիական մեծ ինդուստրիայի զարգացման օրով դարձաւ ամենամեծ լծակը՝ աշխատանքի ժամանակի երկարացման և աշխատավարձի կրճատման համար:

Ապա Մարքսն անցնում է կապիտալի ակկումուլացիայի տեսութեան:

Այս բոլոր թէօրեաների մասին մենք կը խօսենք յետոյ՝ ընդարձակօրէն:

Մենք բաւականանում ենք այստեղ այս համառօտ ակնարկներով «Կապիտալի» I հատորի բովանդակութեան վերաբերեալ: Նրա մէջ ամփոփուած տնտեսագիտութեան թէօրեաները շօշափելու ժամանակ մենք առիթ կ'ունենանք հիմնապէս ծանօթանալու «Կապիտալի հարուստ բովանդակութեան հետ:

Մարքսը քննադատելով քաղաքատնտեսութիւնը, միևնոյն ժամանակ լրացրեց նրան և հասցրեց մինչև բարձրութեան դեռ չեղած աստիճանը: Նա կառուցեց իր տեսական ինքնօրինակ փառահեղ շէնքը այն հիմքերի վրայ, որ դրել են Ադամ Սմիտն ու Դաւիթ Րիկարդօն: Նա մեծ վարպետութեամբ ու հմտութեամբ շարունակեց կապիտալիստական արդիւնաբերութեան սխտեմի վերաբերեալ թերի միացած հետազոտութիւնը: Եւ առանց չափազանցութեան կարելի է ասել, որ այսօր չկայ մի լուրջ քաղաքատնտեսական աշխատութիւն բիւրգերական իդէօլոգիաների բանակում, որի հեղինակը անմիջապէս թէ միջնորդապէս աղդուած չլինի Մարքսի «Կապիտալից»:

Եւ որքան բուրժուական գիտնականները աշխատում էին սկզբներում այդ պատմական հանճարեղ ստեղծագործութիւնը մթութեան ու լուութեան մէջ թաղել, այնքան «Կապիտալի» I հատորը լոյս տեսնելուց յետոյ փառաւոր քննադատուեց պրօլետարիատի սակաւաթիւ գիտակից ներկայացուցիչների կողմից: Ամենից առաջ յայտնի Շվայցերն էր, որ «Sozialdemokrat»-ի մէջ մի շարք յօդուածներով խօսեց «Կապիտալի» մասին, կատարելապէս ըմբռնելով նրա բովանդակութիւնը: Ապա «Demokratisches Wochenblatt»-ի (Լիբլինեստի օրգանը) մէջ էնգելսը երկու յօդուածով բացատրեց «Կապիտալի» այն աստիճան խոշոր նշանակութիւնը պրօլետարիատի դասակարգային

ազատագրութեան համար: Ամենահետաքրքրականը, սակայն, Եօզեֆ Դիցգենի — գերմանացի առաջին գիտնական-փիլիսոփայ բանուորի — քննադատութիւնն էր «Կապիտալի» մասին վերոյիշեալ թերթի մէջ: Այդ հանդամանքը շատ ուրախացրեց Մարքսին, որ սովորութիւն ունէր Դիցգենին «մեր փիլիսոփան» անուանելու:

Ամենամեծ բարոյական վարձատրութիւնը, որ ունեցաւ Մարքսը, այն սիրալիր ընդունելութիւնն էր, որ գտաւ իր «Կապիտալը» բանուորական մամուլի կողմից:

Բ. Իշխանեան

(Կը շարունակուի)

ՔՆՆԱԳԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՍՈՒԹԻՒՆ

Քաղաքական-ոոցիալիստական բրոշիւրների երեք կուս. հրատարակութիւններ:

Վերջին ժամանակներս աչքի է ընկնում քաղաքատնտեսական և սոցիալական հարցերի վերաբերեալ բրոշիւրների բաւական մեծաքանակ հրատարակութիւններ և հայերիս մէջ: Չգիտենք թէ աստիճան են տարածում այդ բրոշիւրները մեր ժողովրդի մէջ, սակայն ինքը երևոյթը կապ ունի վերջին տարուայ հատարակական-քաղաքական շարժման հետ: Այդ հրատարակութիւններին զարկ են տալիս մեղանում երեք յեղ. կադմակերպութիւններ. 1) Դաշնակութիւնը, 2) Սոց. Դեմ. Բան. Հայ Կադմ. («Կեանք») և 3) Ռ.Ս.-Դ. Բ.Կ.-եան հայերը («Կայծ»): Եւ բնականաբար այդ գործունէութիւնն էլ աւելի մեծ ծաւալ կարող է ստանալ այն կադմակերպութիւնը, որ դրամական կողմից անհամեմատ հարուստ է բոլոր միւս յեղ. կուսակցութիւններից: Յամենայն դէպս այդ հրատարակչական մրցութիւնից ընթերող հասարակութիւնը կարող է միայն օգտուել:

«Դաշնակցութեան» հրատարակած բրոշիւրներն են. 1) Ռուս. Ձեմատիւ և Կովկասի պահանջները, 2) Թէ ինչով են կուտւում

գիւղացիները իրանց կարիքներէ համար, 3) Սարգեբր և ճանճեր, Լիբկնիստի, 4) Հարուստները և Աղքատները, Բախի, 5) Հաց, Լոյս և Ազատութիւն, Պեշխոնովի:—«Ղեւնըրի» հրատարակութիւններ են. 1) Տնտեսական Զարգացման փազերը, Բ. Իշխ. 2) Ընդհանուր ընտրողական իրաւունքը Արեւմուտքում, Վոգովովի. 3) Աւստրիայի ճգնաժամը, Կառլսկի, Նորմալ 4) բանուորական օր, Չէյդէլի, 5) Մարքսի յաւելեալ արժէքը, Շտերնի: «Կայծի» հրատարակութիւններն են 1) Կառլսկի «Հայրենասիրութիւրը» և 2) Բրակէի «Կորչեն Սոց.-Դեմոկրատները»:

Այդ բրոշիւրներէ մէջ նկատուում է աշխատանքի հապճեպութիւն, լեզուի արուեստակեալ, «խնտելիզենտ» կազմութիւն, որ հազիւ թէ գիւրացնի բուն ժողովրդի ընթերցանութիւնը: Պէտք է ասել որ փոքր ի շատէ ինտելիգենտ ընթերցողները մեզանում այդ տեսակ բրոշիւրներէ հետ ծանօթ են լինում արդէն ուսեանքով, հետեւեալ թարգմանողները պէտք է ի նկատի ունենան մեր հասարակ դրագէտ մասսան, իսկ նրա հետ զրոյց անելիս պէտք է աւելի պարզ, ժողովրդական դարձուածներով միտքը արտայայտել. մի բան որ ի հարկէ աւելի մեծ աշխատանք է պահանջում քան մեքենայական թարգմանութիւնը «խնտելիզենտ» ոճով: Խնդիրը բրոշիւրներէ քանակի մէջ չէ, այլ և որակի:

Մ.

Ասրպէ, Հոգաւորութիւնը Կովկասում, հետազոտութիւն, Ալեքսանդրապոլ, 1906, գ. 10 կ.

Այս գրքովում հեղինակը նպատակ է դրել «ամփոփել թէ ինչ վիճակում էր հոգատիրութիւնը Կովկասում Իսլամի տիրապետութեան ժամանակ և ինչ վիճակի ենթարկուեց ուսական տիրապետութիւնից յետոյ»: Բրոշիւրի տեղեկեացը այն է որ թուրք բէգերը, խաները և աղալարները, օգտուելով ուսական տիրապետութեան անտեղեակութիւնից, իրանց հողերի «կալուածատէրեր» և գիւղացիների «ճորտատէրեր» դառան, մինչդեռ իսլամի օրէնքով հողը համայնական է և հողը պիտի ձանաչել պետական, բաժանել երկրագործ դասակարգին առանց որեւէ վարձատրութեան: Հետազոտութեան փաստական մասը թոյլ է: Ագրարային հարցը տեղական կոմիտէներում վճռելիս այս հետազոտութիւնը կարող է պարզել մի քանի կէտեր:

Մ.

ՆՈՐ ՍՏԱՅԱԾ ԳՐՔԵՐ

- 1) Կանոնագիր հայկական բարեգործական ընդհանուր միութեան Գահիրէ. Աղէքսանդրիա 1906 թ.
- 2) Մ... Արդարութեան Յաղթանակը, (հայ որբերու խնդիրը, յեղափոխական հարցեր, անիշխանականութիւնը և հայը, Զօպանեանի հոգին մերկացուած, Փարիզի հայ գաղութը): 1905—6, գին. 1 ֆր.
- 3) Մրաւեան, Ժամանակ է սթափուելու (մի գաշնակցականի դիմումը իր ընկերներին), Վիեննա, 1906, գ. 15 կ.
- 4) Ա. Վ. Պեշխանով, Հաց Լոյս և Ազատութիւն, Թարգ. Խ. Կարճ., Թիֆ., 1906, գ. 12 կ.
- 5) Կարլ Կառլցկի՝ Հայրենասիրութիւն, Թիֆլիզ, 1906.
- 6) Հրատ. Դոք. Կ. Կ. Փաշայեան-Պանի. վիպական հաւաքածոյ. ա) Միշէլ և Քըլիզան, Լուսանկարը, գ. 10 կ. բ) Ճակատագիր, գ. 10 կ.
- 7) Տեղեկագիր Թիֆլիզի Հայոց բարեգործական Ընկերութեան 1905 թ.
- 8) Ատրպետ, Հողատիրութիւնը Կովկասում, հետազօտութիւն, Ալէքսանդրապոլ, 1906, գ. 10 կ.:
- 9) Ի. Շտէրն, Մարքսի յաւելեալ արժէքի թէօրիան, Թիֆլիս, 1906 թ. գ. 5 կ.:
- 10) Ձէյդել՝ Նորմալ բանուորական օր,
- 11) Ազգային զրադարան, Ա. պրոֆ. Գր. Խալաթեանց Հայ. Արշակունիք ըստ Մովսէս Խորենացոյ կամ նոր ուսումնասիրութիւններ Մովսէս Խորենացու մասին, Թարգմ. Ա. սարկ. Սիմոնեանց, Վիեննա, 1906 թ. գ. ֆր. 1,50.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Դուժայի պատմական միասիան.—Ուրուսովի մերկացումները, Բեյոսոսի ջարդը Բննոյ յանձնաժողովը եւ սուղին օրէնսդրական ակտը՝ մահուան պատժի վերացումը.—Մեծ եւ փոքր Բաօս.—Բռնի ոյժի չեզոքացումը քննութիւններէց.—Իստանբուլ քննութիւնն է մեզ հարկաւոր:

Յեղափոխութիւնից վայրիվերոյ եղած կեանքը այժմ ներկայացնում է հին մեռնող կարգերի ու սկզբունքների և նորարողըջ կարգերի ու ազատագրութեան ըմբոստ ձգտումների եռուն մի խառնուրդ, մի քաօս: Դոյութիւն ունեցող ըէալ ոյժերի համագումարը ստեղծեց մի ընդգիմագիր Դուժա, որի պատմական կոչումն է՝ դուրս բերել քաօսային շրջանի մէջ հեծող երկիրը դէպի զարգացման ուղիղ, խաղաղ ճանապարհ: Եւ Դուժան աստիճանաբար իրագործում է իր միսսիան: Նրա հաստատական տակտիկան քայլ առ քայլ վերցնում է բիւրօկրատիայի ամբողջիւնները, ոչնչացնում գիտութեան և արդարութեան խորտակող քննադատութեամբ բիւրօկրատիայի բոլոր սուտ ու մուտ առարկութեաները, մերկացնում նրա իշխանութեան ամբողջ գարշանքը: Եւ Դուժայի օրէցօր աճող հեղինակութիւնը ժողովրդի մէջ ստեղծում է այնպիսի բարոյական ոյժ, որի առջև ստիպուած են արդարանալ, նուաստացած ոճով խօսել երեկուայ բոնապետները: Այն մերկացումները, որ արաւ իր աշուհետե պատմական ճառում ներքին գործոց մինիստրի նախկին օգնական իշ. Ուրուսովը յունիսի 12-ի նիստում, այն ընդունելութիւնը որ ցոյց տուաւ Դուժան զինուորական ընդհանուր դատախազ գեներալ Պաւլովին (յունիսի 19-ին) բղաւելով նրա երեսին—«Դոժես, դահիճ, մարդասպան, աւելի լաւ է ընդհատել նիստը քան լսել Շմիդտի դահճին»—ստիպելով հեռանալ դահլիճից. այն դերը որ կատարեց Դուժան իր՝ ընտրած յանձնաժողովի միջոցով քննելով Բելոստոկի ջարդերում վարչութեան, պոլիցիայի և զօրքի կատարած դերը—վերջապէս այն առաջին օրէնսդրական ակտը, որ ընդունեց Պետական Դուժան յունիսի 20-ին, միաձայն որոշելով վերացնել մահուան պատիժը—այդ բոլորը

ապացոյց են որ Պետական Դուման ընդունակ է իրազործելու իր պատմական մեծ կոչումը: Նրանից դուրս այժմ կեանքը չի կարող ստեղծել այլ մարմին, որ անարխիայի կամ զինուորական դիկտատուրայի վտանգից ազատի այդ լայնածաւալ, տարբեր կուլտուրաների և ցեղերի վիթխարի դանդուած Ռուսաստանը: Անպատասխանատու մինիստրութեան օրերը հաշուած են, և այդ յաղթանակը կը տանի Դուման, որովհետեւ քաղաքական ազատութիւն ձեռք բերելու կուտւոյ Դումայի բոլոր առաջադէմ տարրերը գործում են միահամուռ ոյժերով:

Լսելով Կովկասից եկած հայ, վրացի, թուրք և լեռնական պատգամաւորների ճառերը, որոնց մէջ դուրս էին բերուում ռուս խայտառակ քիւրօկրատիական բէժիմի արարքները «աւերակ դարձրած մի հրաշալի երկրում», լաւ էր նկատել մի ռուս պատգամաւոր թէ «եւրո մենք ռուսներա վատ էինք ապրում, վատ էր և ձեր կեանքը, կը բարուօքուի մեր կեանքը, կը լաւանայ և ձեր վիճակը»: Արդարեւ, մեր բոլոր ցաւերի և դժբախտութիւնների հիմնական պատճառը հին կարգերի մէջ է, որոնց վերացումը միայն կ'ազատի մեզ կամայականութեան զաղիր ճիրաններից: Այդ ճշմարտութիւնը այժմ հասկացել են և թուրք ինտելիգենտները, որոնք մի քանի ամիս առաջ չէին ուզում խոստովանել Կովկասի իշխանութեան գրդող, մեղսակից դերը թուրք-հայկական ոճրագործ ընդհարումների մէջ: Լաւ է ուշ, քան երբէք: Իսկ մինչև նրանք հասկացան այդ, «հրաշալի երկրի» մէջ սովը, թշուառութիւնը, վայրենացումը սաւառնում են կիսաւեր գիւղերի աւերակների վրայ, գաղանային կըրքերը դեռ չեն հանգարտուել, սպանութիւնները, գերի վերցընելը իրարից դեռ շարունակուում են:

Ինչո՞ւ Կովկասի պատգամաւորները չպէտքէ պահանջեն որ Դուման իր անդամներից ընտրած մի մասնաժողով ուղարկի մեր երկիրը, որը միթէ մի Բելոստոկ չարժէ. ինչու չպէտք է դիմեն Դումային, որ մի քանի միլիոն նպաստ բաց թողնուի մեր զիւղացիների տնտեսութիւնը վերականգնելու համար: «Սոցիալիզմի» մասին այրուբեանական ճշմարտութիւններ և միտինգային ճոռմարանութիւններ արտասանելու համար չեն ուղարկուած Դուման մեր պատգամաւորները, այլ մեր երկրի կարիքները մասին դրական պահանջներ անելու: Նախահաշուից դուրս այն 15 միլիոնը, որ Դուման որոշել է սերմի և մատակարարութեան պէտքերի համար, պէտք է գործադրուի և մեր երկրի կարիքների համար: Դրա մասին խօսք բարձրացրել են մեր պատգամաւորները, թէ ոչ: Մեզ յայտնի որ նրանք լուել են:

Մեր կարիքները այնքան սոսկալի չափեր են ստացել որ Նպաստամատուցների չնչին օգնութեան վրայ յոյս դնելով գիւղացիներին կերակրել խոստումներով՝ անխղճութիւն է: Պետական միջոցներով պէտք է բուժուեն այն ցաւերը, որոնք առաջ են եկել համարեա բացառապէս այդ պետութեան ապիկար, յանցագործ պաշտօնեաների շնորհիւ:

Այդ իրականութեան դիմաց մարդ իսկապէս սիրտ չունի խօսել այն համեմատաբար երկրորդական խնդիրների մասին, որոնք յուզում են մեր «հայկական կեանքը». դպրոցական ընտրութիւններ, ուսուցչական ժողովներ, հոգևորականների ընտրութիւններ, պատգամաւորական ժողով և այլ և այլն. բոլորը շուրջ եկեղեցու և դպրոցի: Մեծ քաօսի մէջ ապրելով, դժուար է ազատ լինել փոքր քաօսներից, և այդպիսի քաօս, հնի և նորի խճճուած խառնիթօր զանգուած է ներկայցնում և մեր կեանքը:

Գաղափարների, կուսակցական խնդիրների, հին կամայական կարգերի և նոր ձգտումների մի այնպիսի հանգույց է դառել և մեր կեանքը որ նրանից դուրս գալու այլ հնարաւորութիւն մենք չենք գտնում, քան մի փոքրիկ Դումա, ժողովրդական ներկայացուցչութիւն հրաւիրելու: Սակայն այստեղ պէտք է կանգ առնենք և աշխատենք սառն վերլուծելով տեսնել թէ ո՞րն է ժողովրդի անկախ կամքի արտայայտութիւնը և ինչ է կեղծած, ճնշման տակ, բռնութեամբ կորզած համաձայնութիւնը:

Յայտնի է թէ կամայականութեան բեժիմից դեռ իսպառ չազատուած երկրներում զանազան Ստամբուլիներ, զանազան դիկտատոր օլիգարխներ իրանց սև հարիւրեակների միջոցով ինչպէս են ընտրութիւններ կատարել տալիս: Ընտրութիւններ կեղծելու ամենավտանգաւոր ձևն է դինուած խմբերի միջամտութիւնը, և այդ է պատճառը որ բոլոր ազատ, դեմոկրատ երկրներում բռնի, դինուած ոյժը չէզոքացնում է ընտրական պայքարից:

Այդ պատճառով զօրքը, պոլիցիան Գերմանիայում, Ֆրանսիայում, Աւստրիայում, Ունգարիայում, Հոլլանդիայում, Իտալիայում, Միացեալ Նահանգներում և առհասարակ բոլոր դեմոկրատ երկրներում իրաւունք չունի մասնակցելու ընտրութիւններին, որովհետև բռնի, դինուած ոյժը միշտ կարող է ճնշել, միշտ գործ դնել իր ահաբեկող ազդեցութիւնը: Զէնքը տրուած է պետութեան պաշտպանութեան կամ ժողովրդի ինքնապաշտպանութեան համար և ոչ նրան ճնշելու, ստրկացնելու նպատակով:

Ընդհանուր, հաւասար, ուղղակի գաղտնի ընտրութիւն

Նշանակում է մեր՝ «հայ-լուսաւորակականներին» նկատմամբ՝ որ ամեն մի հափաւոր ծխական, կին թէ տղամարդ, իրաւունք ունի զազանի քուէարկութեամբ միայն մի ձայն տալ, ուղղակի պատգամաւոր յայտարարելով նրան, որին հաւանում է։ Ոչ ուղղակի, այլ շեղակի (косвенный) են կատարւում մեղանում ընտրութիւնները, նախ լիազօրներ ընտրելով, որոնց և յանձնւում է պատգամաւորներ ընտրելու իրաւունքը։ Շեղակի ընտրութեան ժամանակ ժողովրդի և ժողովրդական ներկայացչութեան միջև կանգնում են միջանկեալ միջնորդներ, «լիազօրներ», մի խումբ մարդիկ, որոնց կամքը յայտարարւում է իբրև ժողովրդի կամք։ Դա կեթծիք է, որովհետև այդ դէպքում պատգամաւորները պատասխանատու են դառնում լիազօրների և ոչ ժողովրդի առաջ։ Հետեւեալ, ժողովրդի կամքը իմանալու համար պէտք է խիստ կերպով պահպանենք ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ընտրութիւնները։

Նախընտրական պայքարում թոյլատրելի է իհարկէ պրօպագանդան, համոզելու բոլոր միջոցները, բայց ոչ երբէք բռնի ոյժը, ահաբեկումը, սպառնալիքը։ Իւրաքանչիւրը ժողովներում, մամուլի մէջ ազատ է իր մտքերը յայտնելու։ Իւրաքանչիւր կուսակցութիւն կարող է իր ծրագիրները, իր թեկնածուների անունները յայտարարել ի լուր ամենքի, սակայն բռնի ոյժ, ճնշում գործ դնել, զինուած խմբերի ահաբեկման միջոցների զիմել, նշանակում է ծաղրել, ոտնակոխ անել, կեղծել ժողովրդի կամքը։ Այդ խել պատճառով իւրաքանչիւր քաղաքական կուսակցութիւն, եթէ նա կանգնած է զազափարական մաքուր հողի վրայ, երբէք իրան թոյլ չի տալ բռնութեան այդ ստոր գէնքներին զիմելու։ Այդ բոլորը պէտք է մենք ի նկատի ունենանք և ընտրութիւնների գործը հանենք այն տնային, կիսատպոստ ձևերից, որ մինչև այժմ եօլա էինք տանում։ Ընտրութիւնը պէտք է կատարուի ճիշտ պահպանելով այն բոլոր ձևականութիւնները, որոնք երաշխաւորում են իւրաքանչիւրի ազատ, անկախ կամքի արտայայտութիւնը։ Այլապէս դա ընտրութիւններ չեն այլ գիմակահանդէս, գեմաղող-գիայի և բռնութեան մի ճիւղային պար... Ժողովուրդը ինքը պէտք է բողոքի իր կամքը բռնաբարողների դէմ և թոյլ չտայ որ իրան ստրկացնեն, ինչ անուսով և գործում լինեն բռնի ոյժ բանեցնողները։ Կամքի, մտքի անկախութիւն նախ և առաջ! Sapienti sat.

Մենք առաջիններից ենք եղել որ պաշտպանել ենք այն միտքը թէ ժողովրդի ներկայացուցչութեամբ պիտի սահմանադրուին մեր ազգային-եկեղեցական գործերը (տես «Մուրճ».

№ 4-5): Ռուսաց մեծ յեղափոխութիւնը դիւրացրեց և մեր ներքին կեանքի յեղափոխութիւնը. կաթողիկոսը ինքնայոժար կամբքով առաջ գնաց ժամանակի պահանջների դիմաց: Այդ պայմաններում ինչո՞ւ ընտրողական իրաւունքի կատարեալ ձեւը թողած՝ անկատարով բաւականանանք: Վեհափառ կաթողիկոսի յունիսի 7-ին տուած կոնդակը մասամբ է միայն լուծուած հարցը, որովհետեւ այդպիսի լուծ զործ ձեռնարկելու ոչ մի նախապատրաստութիւն չի արուած, որպէսզի այս առաջին համառուսահայ ժողովրդական ընտրութիւնը կատարուի նոր, աւելի արդար և կատարելագործած եղանակով: Վեհափառ կաթողիկոսի հրահանգը չափազանց հապճեպով է կազմուած և կարող է բաղմամբիւ թիւրիմացութիւնների, անվերջ կռիւների պատճառ դառնալ: Մինչև օգոստոսի 15-ը այնքան ժամանակ կար որ կարելի էր մշակել մի յատուկ յանձնաժողովի միջոցով աւելի մանրամասն և կատարեալ հրահանգ. փառք Աստծոյ ընտրական գործը այնքան նրբորէն կատարելագործուած է եւրոպայում որ հարկ չկայ սեփական տնայնագործական փորձերի: Մենք առաջ եօլա էինք տանում գործը գանազան տէրտէրների և եպիսկոպոսների քաղաքահաւարական իմաստութիւններով, և քանի որ հարցերը պտտում էին գանազան տիրացուներ և հոգաբարձուներ ընտրելու անձուկ շրջաններում՝ մի կերպ համակերպում էինք, իսկ այժմ ուզում էք մի փոքրիկ «պարլամենտ» ընտրել և հնացած, անկատար և կիսատ-պռատ տնային հղանակներով: Ողջունելով բոլոր սրտից Վեհափառ կաթողիկոսի քայլը սկզբունքային տեսակէտով, մենք կը ցանկայինք որ նախ և առաջ մանրամասն մշակուէր ընտրողական պրօցեդուրան, ղեկավարուելով ղեմօկրատ երկրների փայլուն փորձերով:

Նշանաւոր քայլը արուած է, մնում է որ Վեհափառ կաթողիկոսը կէս ճանապարհի վրայ չկանգնի և տայ ժողովրդին կատարեալ ձևի ընտրական իրաւունք, որից մոռացուած է ուղղակի անդամը: Ինչո՞ւ տալ ժողովրդին անկատար գործիք, երբ մեր դարը գիտէ աւելի նուրբ և կատարելագործուած միջոց ժողովրդի անկախ կամքը արտայայտելու: Յանկանք ուրեմն որ այդ երկրորդ քայլն էլ անուկ և մենք ունենանք ճշտօրէն իրագործուող կատարեալ ձևի անկախ ընտրողական իրաւունք:

Այդպիսի կատարեալ ընտրողական սկզբունքով կազմած կենդրոնական ժողովը կը կազմի մեր ուսահայերիս ազգային-եկեղեցական սահմանադրութիւն, որ կը ներկայացուի Պետական Դումային և այնուհետեւ կը դառնայ օրէնք. և արխիւ կը նետուի 1836 թուականի «պոլոժենիէն» իր բոլոր հիմնար-

կութիւններով: Այլապէս չափազանց խախուտ և երերուն կը լինի մի սահմանադրութիւն, որի իրագործումը կախուած կը լինի հոգևոր իշխանութեան բարի կամքից: Քիչ ունենք կաթողիկոսական կոնգալներով հաստատուած կանոններ, որոնց գործադրել չգործադրելը սրա նրա քմահաճոյքից էր կախուած: Այդ է ճանապարհը որ մեզ կը հանի քառասոյս շրջանակից:

Լ. Ս.

25 Յունիսի.

ՊԱՐՔԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱՅԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ

«Նախարարաւ», երգիծաբանական թերթ.-Յեղափոխական եռուն կեանքի արտայայտութիւններից մէկն էլ բազմաթիւ երգիծաբանական թերթերի ծնունդն էր: Ամեն բանում մենք հայերս էլ իհարկէ, ենթարկում ենք ժամանակակից հոսանքներին և տրամադրութիւններին: Պետերբուրգում լոյս տեսաւ «Մարիչ» երգիծաբանական թերթի մի քանի համարները, սակայն մեր կենտրոնից հեռու. այդպիսի հրատարակութիւնը աջնալ էլ աջողութիւն ունենալ չի կարող: Թիֆլիսում էլ սկսուեց հրատարակուել «Պաթարալա» թերթը, որ հետեւեալ կերպով է ընդդրոշում իր կոչումը, դիմելով «հասարակական մանր ու մեծ գործիչներին»:— «Պախարաւ»-ի էջերում գունաւոր և անդոյն պատկերներով, խօսքով, առակով, հանելուկներով, ոտանաւորով և այլ նոյնանման այժմ խիստ արգելուած գէնքերով կռուելու ենք ձեր գէժ ամեն անգամ, երբ ձեր գործունէութեան մէջ կը նկատենք ձեզ համար պատուաւոր, իսկ մեր

աչքում ծիծաղելի կամ պախարակելի մի գիծ:

Նկարիչները՝ Րոտտեր և Շլինդտանձին փայլ են տալիս այդ թերթին: Առանձին ուշադրութիւն դարձրէք, օրինակի համար, ՏՃ 1-ում և 3-ում հայ-թրքական ընդհարումները սկզբնապատճառ և ֆինալը ներկայացնող պատկերները, որոնք դեղարուեստօրէն միայն վիրշտ, արտասունք են յարուցանում և ոչ ծիծաղ: Շատ սրամիտ է ծագրած հայ բրժիշկի էվօլյուցիան ծնուած օրից մինչև թղթախախի կանաչ դաշտը (ՏՃ 3): Վատ չեն Դումայի և մեր հասարակական գործերը (հոգաբարձական ընտրութիւններ, բարեգործական ընկերութեան) մասին նրկարներն ու խժրժանքները: Այն պախարակելի կոպները որ խօսակցութեան առարկայ են—«Պաթարաւան» նորից շեշտում է, ընդգծում, աւելի բիւրեֆ դարձնում և ընդհանրացում: Այդպիսի թերթի գլխաւոր արժեքը կայանում է անպայման շիտակութեան և անկախութեան մէջ:

նա թայֆայական չպիտի լինի և մարդկանց մասնաւոր, ինտիմ կեանքը մի կողմ թողնի. նա պիտի ձդտի անաշտօրէն և անկախօրէն ծառայել, ղեկավարուելով միայն հասարակական շահերով: Յանկանում ենք յարատեւութիւն:

Կեանք.—Առց. դեմ. հայ կաղմ. այդ օրգանը շարունակում է պրոլետարական շատ որոշակի տեսակէտով քննել մեր կեանքում նշանակութիւն ունեցող մի քանի հասարակական հարցեր: Հետաքրքրութեան արժանի են մանաւանդ «Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան» և «Սոցիալ-դեմոկրատիայի կազմակերպչական սիստեմը» յօդուածները, ինչպէս և բանակութիւնները «Պաշտակցականներ»-ը: Ընդհանրապէս լուրջ, խիստ տրամաբանօրէն գրուած յօդուածների կողքին ցաւալի է գտնել այնպիսի վայրիվներով հեղ աղանդաւորական ոգով և անհամոզեցուցիչ կերպով գրած յօդուածներ, որոնք Գուման վարկաբեկ անելու նպատակ ունին: Մենք միշտ եղել ենք և շարունակում ենք լինել կողմնակից մտքի, քննադատութեան ազատութեան, սակայն արեւոյդի հայհայտանքները, ինստիտուցիաները, աշկարայ խեղաթիւրումները վայել չեն լուրջ հրապարակախօսութեան: Սկզբից մինչև վերջ խիստ օպպօզիցիօն Գուման—որ արժանացել է նաեւ եւրոպական սոցիալիստների համակրութեան—ներկայացնել իր «կառավարութեան բարեկամութիւնը փնտռող» և «մտավախ». ուսաց ինտելիգենցիայի լաւադոյն ներկայացուցիչներին կոչել «միամիտ երեխաներ», «շատախօս և երկարաբան պառականայք», «երկշոտ և մտավախ իդէօլոգներ», Գուման մկրտել «կենսադուրկ, փթած, անպէտք և անարժէք» ածականներով (№ 11)—դա չափազանց սենսացիօն է և թունդ բուրստական, բայց ոչ... արդարացի...

Մենք չէինք ուզենալ որ մեր բանուորութիւնը կրթուէր այդ ոգով, որ ենթադրում է մշտական միտինդային, յուզուած, առողջամտութիւնը կորցրած տրամադրութիւն: Խոր, լուրջ գիտակցութիւն, հասարակական կարգերի փոփոխութեան գիտական ըմբռնում, շրջահայեաց, բանական վերաբերմունք դէպի երևոյթները—ահա ինչ է մեզ հարկաւոր, իսկ quasi յեղափոխական թունդ պոռոտախօսութիւնը լաւ է թողնել նրանց, որոնք այլ բան արտադրելու ընդունակ չեն. մինչդեռ, ինչպէս վերեւում նկատեցինք, «Կեանք»-ը կարող է տալ լրջմիտ, ուսումնասիրական ոգով գրուած յօդուածներ...

Boston Armenia, Vol II, №6.—Ամսաթերթի պատուակալ իմքազիրներէր Mr. Edwin Mead մի առաջնորդող ունի այս համարում «Հայոց հարցը և հասարակաց կարծիքը» վերնագրով:

Նա պնդում է որ Ամերիկեան ժողովուրդը և կառավարութիւնը ազդու կերպով պէտք է բողոքեն հայերի կրած անպատեւելի չարչարանքների մասին:

Խօսելով Congo-ում բնիկ ազգաբնակչութեան տառապանքների մասին, նա կոչ է անում անտարբեր չմնալ հանդէպ այս տեսակ ճիւղային բռնապետութեանց և անլուր հայաձանաց որոնց ենթակայ է եղել մասնաւորապէս հայ ժողովուրդը Թիւրքիայում տառնեակ տարիներով և անվերջ ու տնվախճանապէս:

Հունգարիան 60 տարի առաջ Kossuth-ի գրօշակին տակ կռուում էր իր ազատութեան և անկախութեան համար աւստրիական լուծից: Այն առիթն Ամերիկեան կառավարութիւնը ուղարկում է մի յատուկ ազնետ հարցը քննելու: Աւստրիայի կայսրը բարկանում է դրա համար և նրա ղեկավարը կատաղի մի բողոք է ներկայացնում Washington-ի կառավարութեան: Այդ առթիւ պետական

քաղաքացիական պատերազմի (1850) նշանաւոր document է: Այդ դիպումատիկ գրութեամբ վերջանում է հետեւեալ բնորոշ եզրակացութեամբ. «Եւր Միացեալ Նահանգների ժողովուրդները տեսնում են իրանց աչքի առաջ որ օտար երկրներում ճնշուած ազգերը գերմարդկային ճիգեր են անում ձեռք բերելու, մեզ պէս, իրանց վիճակը բարուրդով միջոցներ են օրէնսդրութիւն, բոլորովին անտեղի կը լինէր երեւակայել և սպասել որ նրանք կը մնային անտարբեր հանդիսատեսներ հանդէպ այդ ահաւոր իրողութեանց: Danil Webster մեծանուն պետական քաղաքական Միացեալ Պետութեանց, յետոյ վճռական և բացարձակ կերպով յայտարարում է.—Վիէննայի հասկիճը թող վտար լինի որ Մ. Նահանգները ժողովուրդն և պետութիւնը հաւատարմօրէն պահպանելով հանդերձ կատարեալ չէզոքութիւն, միեւնոյն ատեն ոչ մի բան ոչ մի ժամանակ նրանցից ոչ մէկին և ոչ միւսին պիտի չարգելէ ազատօրէն արտայայտելու իրանց կարծիքը աշխարհի քաղաքակիրթ ազգերի շրջանում կատարուած կամ կատարուելիք քաղաքական մեծ անցքերի մասին:

Սրանից չորս-հինգ տարի առաջ Ռուսմանիայում հրկայք հալածւում են և զբանցից 50,000 դաղթում են Ամերիկա, այդ պատճառով 1902-ին John Hay պետական քաղաքական իր վեց մեծ պետութեանց ուղղած շրջաբերականով խտրել բողոքում է Ռուսմանիոյ կառավարութեան դէմ պահանջելով անմիջապէս վերջ դնել այդ բարբարոսութեանց: Այդ document-ում Mr. Hay կոչ անելով յանուն մարդկութեան ստպէս և եզրակացնում.—«Մ. Նահանգները իհարկէ չեն կարող Բերլինի դաշնադրութեան արտադրութիւնների անմիջական գործադրութիւնը պահանջել վճարկանապէս, քանի որ նրանք ոչ այդ դաշնադրութիւնը ստորագրել են և ոչ Յուլիս, 1906.

էլ կարող են ստորագրել, այլ նրանք լրջօրէն կոչ են անում ազգերին (այսէնքն 6 մեծ պետութեանց) ի գործ դնելու այն սկզբունքները որոնք ընդունուած են այն դաշնագրութեամբ, որովհետեւ դրանք միջազգային օրէնքի և յաւիտենական արդարութեան սկզբունքներ են:

Ակնարկելով այդ վառ խնդրոյն այն ատեն «New-York Tribune» լրագիրը ասում է. «Նկատելով որ այդ պետութիւնը պատասխանատու են Ռուսմանիոյ գոյութեան, որը այս պարագայում յայտնապէս յանցաւորն է», (մի բան որ հայկական հարցի մասին էլ պէտք է ասել ու կրկնել այսօր) Պետական Քաղաքականութեան Պաշտօնակատը ուղարկեց այդ գրութիւնը նրանց միայն այն գովելի և ազնիւ նպատակով որ դաշնագիր պետութիւնները ճնշուած գործ դնէին Ռուսմանիայի վերայ որպէսզի խելքի գար և կատարելու ձեռնարկէր իր պարտականութիւնները, որ նա ստանձնել էր հանդիսաւորապէս քաղաքակրթութեամբ ազգերի աչքերի առաջ:

Այսօր Հայաստանի ամեն կողմերում կատարած խժոժութիւնները, որոնց սոսկալի մտնրամտանութիւնները օրը օրին և ամսէ ամիս մեզ հաղորդում են, զերազանցելով այն ամեն անարկարութիւնը և հալածանքը որոնք երբէք կատարուել են 1850-ին Հունգարիայում և կամ 1900 են Ռուսմանիայում, որպէս հազարը մէկին, Ամերիկեան ժողովուրդը և պետութիւնը պարտի մտիկ ասլու Ռուսման ժամանակ է մեզ համար մտածել և որոշել թէ արդեօք աշխարհի տանջուող ազգերի խլացնող աղաղակների հանդէպ մենք բարի Մամարացու դէրը պէտք է կատարենք, այդպէս մենք արել ենք անցնելոյն մեծ ճշմարտամերի աւթիւ, թէ մնալու ենք անհոգ անտարբեր նման Աւտացուն:

Ամերիկեան հասարակայն կարծիքը անցեալ ժամանակներում ճնշուած շատ ազգերին մեծ օգնու-

թիւներ մատակարարելուն նպաստեց և յարգելի Mr. White, որ Itasca նահանգում փետ. 12-ին արտասանած բանախօսութեան մէջ իրաւամբ շեշտեց. «Ութնասուն տարիներ առաջ ամերիկեան հասարակաց կարծիքը զօրեղ գործոն մը հանդիսացաւ ազատելու յոյներին օսմանցոց արինարբու բռնապետութիւնից և նմանապէս ազատելու Բուլղարներին և Մակեդոնացիներին (?) միևնոյն զազանի ձերաններէց: Հետեաբար, թող հայերը քաջալերուեն և սիրտ առնեն—ասում է յարգելի Mr. Mead—ի նկատի ունենալով այն

իրողութիւնը որ Ամերիկեան դեռ այնքան չէ որ հասարակաց կարծիքը ոյժ մ'է:

—Իսկ թէ իրապէս ճշմարտեան քաղաքականութիւնը մենք տեսանք Րուզվելտի խօսքերից. «մեք միջամտութիւնը աւելի կը վատթարացնի ձեր դրութիւնը» ասաց նա...—նոյն համարում հրատարակուած է պ. Ֆարհատի անցեալ տարուայ «Մուրճում» լոյս տեսած «Զպսմած իրողութիւններ» վերնագրով պատմուածքի թարգմանութիւնը Մ. Պաղլասարեանի աշխատութեամբ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Թիւրքահայերի վիճակը.—Հից նախապաշարումներ եւ հոռւ հանապարհի:

Թիւրքահայերի ծանր վիճակը դարձեալ ուշադրութիւն գրաւեց՝ Պօլսի հայոց պատրիարք Օրմանեանի և Կիլիկիայի կաթողիկոս Սահակի հրաժարականի պատճառով: Սուլթանը չյարգեց նոյնիսկ այդ երկու բարձր հոգևորականների զգուշ, համակերպուող քաղաքականութիւնը և յարքունիս գրաւեց Կիլիկիայում գտնուող Թլանի աղգային ընդարձակ ազարակը, որ պէսզի այդ հողերի վրայ բնակեցնի մուսուլման զաղթականներ (մահաճիրներ): Այս հարուածը համեմատութեամբ այն խրժուղութիւնների հետ, որ կատարուել են և կատարուում են Բիթլիսի և Վանի վիլայէթներում, ի հարկէ, չնչին է, սակայն բնորոշ սուլթանական ռիսերիմ հայատեցութիւնը ցոյց տալու համար:

Ի՞նչ անել—ահա մի հարց որ մօտ 30 տարի ցցուած է հայ ժողովրդի առջև, մի հարց, որի լուծման փորձը «գինուած ապրտամբութեան միջոցով» աւելի ևս անտանելի և վատթար դարձրեց թիւրքահայ ժողովուրդի կացութիւնը:

Աշխարհիս զանազան ծայրերը ցիր ու ցան եղած թիւր-
քահայ աղգարնակութեան մի մասը զրկուեց իր հողաբաժիննե-
րից, բնիկ գաւառներում բնաջնջումից մազապուրծ եղած թը-
շուառ մնացորդը սոված, տկուր օր և գիշեր պիտի դողդողայ
իր կեանքի համար:

Անցածը անցած է, և հին սխալները միայն դժուարացրել
են, խճճել հարցի լուծումը. սակայն թողնել որ հայ ժողովուրդը
թիւրքիայում վիրաւոր, արիւնաքամ ընկած մնայ ազատու-
թեան ճանապարհի վրայ՝ դա արդէն թեթեամտութիւն չէ, այլ
մասսային ոճրագործութիւն: Եւ նրանք, որոնք ամենից շատ
են պատասխանատու այդ դրութեան համար, պէտք է Կայէնի
նման մինչև վերջին շունչը մտատանջուեն և հանգիստ չգտնեն,
եթէ խիզ՞ ունին, պէտք է իրանց ամբողջ գոյութիւնը նուիրեն
այդ թշուառների համար մի ելք գտնելու ջանքերին:

Ռուսաստանի մեծ յեղափոխութիւնը մասամբ ցոյց տուեց
նոր ճանապարհը: Այդ յեղափոխութիւնը ապացուցեց որ խառն
աղգարնակութիւն ունեցող պետութիւններում միայն ամբողջ-
ութեան վերանորոգութիւնից է կախուած բաղկացուցիչ աղ-
գութիւնների կեանքի բարուրդումը, եթէ այդ բաղկացուցիչ
մասերը հնարաւորութիւն չունեն անջատուելու և անկախ գոյու-
թիւն պահպանելու: Հայը ոչ մի երկրում այդպիսի հնարաւոր-
ութիւն չունի: Մի անգամ ընդմիջտ պէտք է թողնել ազգասէր
բանաստեղծների և ֆանտաստների հնարած այդ ցնորքը: «Խն-
քնավարութիւն»ը իսկապէս անցողական շրջան է այն աղ-
գերի համար, որոնք անջատման հնարաւորութիւն ունեն. այդ-
պէս էր Արեւելեան Ռումելիայի, Բուլղարիայի, Սերբիայի, Ռու-
սասիայի, Կրետէի աւտօնոմիան, որ դառաւ յետոյ անկախութիւն:
Իսկ հայերին թղթի վրայ տուին այդ խոստումը, իսկ մարմնաց-
նելու համար մատը մատին չխփեցին կեղծաւոր դիպլոմատները և
թողեցին որ մի բուռն հայեր, անգէն, անպաշտպան իրադրո՞հն
այդ սեփական ոյժերով, հինգ պատիկ ստուարաթիւ թշնամի աղ-
գարնակութեան և օսմանեան բանակի դիմաց: Անիրադրօ՞նելին
մնաց անիրադրօ՞նելի, չնայած այդ բուռն ժողովրդի չափանուած
անձնազոհութեան: Երբ մէջ տեղում միայն մի Անգլիա և մի Ռուսիա
պէտք է համաձայնութիւն կայացնէին և նրանք թշուառի անվնաս
գոյութիւնն էլ աչքի առաջ չունեցան, ի՞նչ յոյս ունենալ որ
Երեքով, Գերմանիայի մէջ տեղ մտնելով, աւելի բարեսիրտ կը
լինեն և իրանց շահերը մոռանալով սամարացու հոգատարու-
թիւն կը ցոյց տան: Հերիք է դիւրահաւատ հրեշտակների նման
յոյսեր դրեցինք այդ կեղծաւոր բարերարների վրայ, սթափու-
ենք և մեր անելիքը անենք, չընկնելով խաբուսիկ միրա՞թների

ետեից: Մերկ իրականութիւնը աւելի հրող է, սակայն անխուսափելի էութիւն է և գործիչը պէտք է այդ հասկանայ:

Այդ միութենքը մեր ուշքից հանել էին մեր կողքին ապրող տաճիկ ժողովուրդը, որ համեմատած մեր թիւրքերի հետ շատ աւելի խաղաղասէր, մեղմ և համբերատար է: Ճիշտ է, օսմանեան թէօկրատ-բունապետութիւնը նրան աւելի «արտօնութիւններ» է տուել, քան ռայա հային, բայց սրբան է բախտաւոր այդ արտօնութիւններից այդ տաճիկ դիւղացին, արհեստաւորը, մշակը, մանր առևտրականը: Միթէ «պողոբոմների» հայրենիք Ռուսաստանում էլ մուժիկը «արտօնեալ» չէ «ջնդի» համեմատութեամբ: Եւ ի՞նչ. — բախտաւոր է այդ մուժիկը, ռուս աշխատաւոր մասսան:

Մեր ուշքը սկեռած մեզ հմայող 61-րդ մնամէջ յօդուածի վրայ մենք չենք աշխատել մերձենալ, ձեռք ձեռքի տալ այդ տաճիկ ժողովրդին, մտերմանալ, գործելու ընդհանուր եղանակը մշակել այդ ժողովուրդի և նրա սակաւաթիւ սրտացաւ ինտելիգենտների հետ: Կենտրոնացած մեր ազգային անձուկ շրջանում, առաջ վարելով մեր՝ զոյութիւնը, ինչքը, պատիւը պահպանելու հարցը, առանց նոյնիսկ մտադիր լինելու շօշափել մեր հարեանների ազգային ինքնասիրութիւնը, մենք այնուամենայնիւ երեացել ենք «սեպարատիստ», «անկախ թագաւորութեան ձղտող», «հոսկան»: Սխալ է, թիւր է, ընդհանուր առմամբ, այդ կարծիքը, սակայն տաճիկ ժողովրդի հոգեբանութիւնը այդ կողմից մի բացառութիւն չէ կազմում. նոյն ձևով կը բացատրէին առանձնացումը և «ամենաքրիստոնեայ» ազգերը: Ճիշտ է, հայերը այդպէս առանձնացած էին գործում մասամբ այն պատճառով որ աւելի ևս դժուար էին համարում ընդհանուր թուրքական բեժիմի փոփոխութիւնը և կարծում էին թէ պետութիւնները կ'օգնեն զէթ մի քանի վիլայէթների բարեկարգութեան հարցում: Եւ միամտաբար ծուղակի մէջ ընկած, անձնագոհութեամբ գործում էին հայերը, հաւատացնելով իրանց հարեաններին որ բարենորոգութիւններից պիտի օգտուեն հաւասարապէս բոլորը... Ոչ մի կասկած որ այդ անկեղծ էր: Բայց միթէ հրեշտակների հետ գործ ունէին հայերը. միթէ թիւրքը կամ քիւրդը պարտաւոր են աւելի լայնասիրտ, աւելի զարգացած լինել, քան գերմանացին, քան չեխը, որոնք պատրաստ են աւելի շուտ իրար ծուլնծուլն անել, քան ազգային մի չնչին զիջողութիւն: Մի արսուրդ, անմիտ ծրագիր էին ստեղծել վեց փեղեվենգ պետութիւնները, առանց մազաչափ մտատանջուելու, թէ շատ էլ որոշեցինք որ խիզախ գառը ինքնավարութիւն ունենայ գայլերի և բորենիների մէջ, իսկ ինչ գրաւականներ ստեղծեցինք նրա կեանքը ապահովե-

լու համար... Այդպիսով մի ոճրագործ խաղ էր լուսամիտ դիպ-
լոմատների արածը Բերլինում և այդ խաղին զոհ գնացին մի-
այն «խորամակ» երևացող, բայց իսկապէս պարզամիտ հայերը:

Թիւրքիւն «Հիւանդ մարդ» անուանող Նիկոլայ Լ-նը մի
փոքրիկ անհամեստութիւն ունէր՝ սեփական բեժիմի սքանչելի
կողմերը չնկատելու, սակայն սուլթանը կարող էր համարձակ
պատասխանել նրան թէ «Եղբայր պատուական, քո հալդ էլ ի-
միցը բէշ բէթար»: Բայց և այնպէս Նիկոլայի բեժիմը չմնաց
անփոփոխ, ինչպէս և Ալէքսանդր III-ինը: Անփոփոխ չէ և
թիւրքական բեժիմը, թէև նրա էվոլյուցիան չափազանց դան-
դաղ է զնուծ, որովհետև տաճիկ ժողովուրդը ուշ է պատմական
ստպարէզ դուրս եկել, անվերջ պատերազմներից զլուխ չի թա-
փել, խաղաղ կուլտուրական կեանքով նոր է սկսել ապրել:

Ռուսաստանը իր բեֆորմները Մեծն Պետրոսի ժամանակ-
ներում սկսեց, և այն էլ աւելի զօրքի, նաւատորմի, ֆինան-
սների յետաձայն գրութիւնը բարուղեւոյց ստիպուած: Այդ
պրոցեսսը սկսուեց և Թիւրքիայում միայն 1829 թրականին,
երբ Սուլթան Մահմուդ II-ը բնաջինջ արաւ ենիչերական գըն-
դերը և եւրոպական ձևի զօրք, նաւատորմի կազմեց և ազդական
պահանջներ համեմատ զանազան հիմնարկութիւններ բացեց:
Գէթ սպաներ, բժիշկներ, ֆելդշերներ և ծառայողներ ունենալու
համար եւրոպական ձևի ուսումնարաններ պէտք էր ունենալ:
Ինչքան և վատ դրած լինէին դրանք՝ այնուամենայնիւ մտաւո-
րականութան ազօտ ճառագայթներն էլ պէտք է ազդեցութիւն
անէին թուրքական թանձր խաւարի վրայ:

Իսկ յոյն, հայ հպատակների աւելի բարձր կուլտուրան,
դրանց աւետարական կապերը եւրոպական երկրների հետ,
եւրոպական գրամատիկների հետ նաեւ եւրոպական քաղաքակր-
թութեան մոտքը? Մի՞թէ այդ բոլոր ֆակտորների դիմաց
կարող էր միանգամայն անշարժ մնալ թուրք ժողովուրդը: Եւ
նա անշարժ չէ, եթէ լաւ ծանօթանանք և նրա այժմեան վիճակը
նախկինի հետ համեմատենք: Նիկոլայ Լ-ինի ժամանակ էլ յեղա-
փոխական ըմբոստացումները միայն զօրքի բարձր շրջաններում
էին ծագում (պեկաբերիստներ), ինչպէս յիսնական թուականներից
սկսած Թիւրքիայում է: Իսկ այսօր կայ թէև ոչ ստուար, սակայն
բաւական նկատելի ինտելիգենտ շերտ, որ ազդեցութիւն ունի
թուրք ժողովրդի կեանքի վրայ իր հրատարակութիւններով,
կազմակերպութիւններով. «Երիտասարդ Թիւրքերի» կուսակ-
ցութիւնը այժմ քաղաքական ֆակտոր է, պրինց Սաբահեդդի-
նը նոր մտաւոր հոսանքի մի արտայայտութիւն է: Բարձրից
չնայեմք և քմիծաղներով չանցնենք երևոյթների մօտով, այլ

ազգային սնահաւատութիւնը մի կողմ թողած՝ արեւելքը արեւմուտքից ջրկենք։ Միթէ Սպերանսկիի նման ռուս բեֆորմատորները աւելի բախտաւոր վախճան ունէին, քան թուրք Միզհազները։ Միթէ ռուս բիւրօկրատիայի կազմած խուլիգանական վոհմակները, պոպերը, Սուլորին—Վելիչկօները կարող են աւելի բարեհոգի համարուել, քան մուսուլման խուլիգանները, ֆանատիկոս ուլեմները և սօֆտանները և օսմանցի «ազգասէր» օտարակերները։ Ուրեմն, պնդել թէ թիւրք ժողովուրդը և նրա ստեղծած պետութիւնը մի քարացած, անշարժ պատմական վիժմունք է—դա բրիտանական նախապաշարմունք է, հասարակագիտական անմտութիւն։ Մի կողմ նետենք և այդ սնահաւատութիւնը, որ այնքան ձեռնտու էր երոպական շահագրգռուած պետութիւններին, որոնց համար թուրքերի վերածնութիւնը համահաւասար է մի փառաւոր շուկայից զրկուելուն։ Եթէ այդ շահամոլութիւնը չլինէր, եթէ Պոլսի երոպական դեսպանների ստոր ինարիգները չլինէին—գուցէ թուրք ժողովուրդը այժմ շատ քիչ բանով յետ մնացած լինէր իր հարեան ռուսից։

Մենք ռուսահայերս միակողմանի ենք եղել ու կոյր, և մեր թուրքահայ աղբարները վստահօրէն հետեւել են մեզ, շեղուելով խելացի ճանապարհից։ Շովինիզմը այնքան արեւմտում է մարդկանց որ նրանք անգիտակցաբար են շատ բաներ անում։ Բայց այդ անգիտակցութիւնը չի թեթեւացնում ծանր հետեւանքները։ Դժբախտաբար ազգասիրական նախապաշարմունքները, սնահաւատութիւնները շուտ չեն անհետանում, ինչպէս և նրանց յարուցած ատելութիւնները։ Եւ այդ բանից շատ լաւ գիտեն օգտուել թէ ռուս և թէ թուրք բիւրօկրատներն ու պրովոկատորները։ Թէ ինչե՞ր կարողացան այդ հողի վրայ իրագործել այդ երկու իրար արժանի բիւրօկրատիաները թողնենք, որովհետեւ բոլորիս յիշողութեան մէջ քստմնելի տեսարաններով են դրոշմուած։

Ուրեմն, ի՞նչ ենք առաջարկում մենք։—Մենք առաջարկում ենք շարունակել եւրոպական դիպլոմատիայի երեսին նրա արիւնաշաղախ 61-րդ յօդուածը և մերձենալ թուրք ժողովուրդին և նրա առաջադէմ ինտելիգենցիային, հասկացնելով մեր ձեռնտուները, որ նոյն են, ինչ պէտք է լինի տաճիկ աշխատաւոր մասի և նրա շահերն պաշտպանող ինտելիգենցիայի նպատակը։ Մենք պէտք է վերջ դնենք մեր ժողովուրդների կեանքը պղտորող դոչիական տիպի «գործիչների» գոյութեան, և թէ Կովկասում, թէ Թիւրքիայում և թէ Եւրոպայում միանանք համաթիւրքական վերանորոգութեան

մի ծրագրով և գործենք համերաշխ։ Ռուսական մեծ յեղափոխութիւնը պէտք է հաւատ ներշնչէ այդ ճանապարհով գործողներին մէջ։ Այդ մերձեցման գաղափարը պէտք է բարոյուի, այդ գաղափարի շուրջ միացնեն իրանց ոյժերը թիւրք բեժիմի դէմ բոլոր թուրքահպատակ կռուողները։ Ոչ մի աշխարհայեցողութիւն այնքան զօրեղ չի բուժում մարդկանց հոգուց քրոնիկական ցաւ դառած նացիօնալիզմը, որքան սոցիալիստականը։ Հետեաբար, թիւրքիայի կեանքի մէջ այդ նոր ուղղութեան իրագործումը պէտք է սկսեն թուրք և հայ սոցիալիստները։ Կորիզը պէտք է առողջ լինի որ նրանից ծլած ծառն էլ կենսունակութիւն ունենայ։ Նոր ճանապարհ ընտրէք թիւրքահայեր! Հանգամանքները ժամանակի հետ փոխուել են, պէտք է փոխուի և գործելու եղանակը։ Անցեալը շատ բան պարզեց մեզ, շատ փորձանքներ անցան մեր գլխով։

Մենք այս հարցին դեռ կը վերադառնանք։

Լ. Ս.

27 Յունիսի։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մի կարեւոր քաջատրութիւն

Անցեալ 1905 թուի «Մուրճի» 11—12 №№-ում պ. Լէօի քննադատական յօդուածը կար պրոֆ. Մառի Аркаунъ, монгольское название християнъ, въ связи съ вопросомъ объ армянахъ-халкедонидахъ մակագիր հեղինակութեան վերաբերմամբ։

Պրոֆ. Մառ իր վերոյիշեալ հեղինակութեան մէջ՝ իբրև փաստ Անիում հայ-քաղկեդոնիկների գոյութեան, ի միջի այլոց առաջ է բերել ինչ որ Գր. Լուսաւորիչ եկեղեցու մի արձանագրութիւնը, որի մէջ գործածուած է խստ վրացերէն (?) բառը, առարկելով թէ՛ Վրաստանի սահմաններում գտնուող հայ-քաղկեդոնիկները լուսաւորչական հայերի հետ դաւաճաբանական խտրութիւն ունենալուն պատճառով սկսել էին օտարանալ իրանց ազգութիւնից։

Յիշեալ յօդուածում պ. Լէօի խառ բառ մասին յայտնած կարծիքը «վրայից սահելով անցած»-ի տպաւորութիւնը թողեց մեր վրայ, մինչդեռ եթէ նրա վրայ հարկաւոր ուշադրութիւնը դարձնէր, իր ձեռքում մի գօրեղ փաստ ևս պիտի ունենար իր տեսակէտը աւելի դրական կերպով պաշտպանելու համար՝ Պ. Լէօ համաձայն է պրօֆ. Մառի հետ, թէ արձանագրութեան մէջ գործածուած խառ բառը վրացերէն է, միայն սա տարբերութեամբ՝ որ այդ երեոյթը պ. Լէօ նախ՝ վերագրում է նոյն ժամանակուայ Վրաստանի հայոց վրայ ունեցած ազդեցութիւնը, և երկրորդ՝ աշխատիլ է ապացուցանել, որ խոտոր ոչ թէ լոկ իբրև վրացերէն բառ գործածուած է արձանագրութեան մէջ, այլ իբրև հայերէն նոյնիմաստ բառի համանիշը:

Ընդունելով պ. Լէօի առարկութեան առաջին կէտը իբրև զուտ մի պատմական ճշմարտութիւն, չենք կարող թաղցնել սակայն այն հանգամանքը, որ նա իր առարկութեան երկրորդ կէտով հակասել է ճշմարտութիւն: «Արձանագրութեան մէջ խառ բառը—ասում է պ. Լէօ,—չէ գործածուած իբրև մի ինքնուրոյն հասկացողութիւն, այլ իբրև հայերէնի համանիշը», բայց իրողութիւնը հակառակ է պ. Լէօի կարծիքին: Ահա արձանագրութիւնը՝ ինչպէս որ այդ առաջ է բերուած նոյն յօդուածում.—«Շինեցի—ասում է Հոնենց,—զեկեղեցիս յանուն սրբոյն Լուսաւորչի Գրիգորի և զարդարեցի բազում զարդիւք փրկական նշանաւոր սուրբ խաչիւ ոսկիւ և արծաթիւ և պատկերագործ խառերով»: Արդ՝ ինչպէս յայտնի է, համանիշ բառերը նախ՝ թուով և հոլովով պէտք է յամաձայնեն միմեանց հետ, և երկրորդ՝ ստորակէտով էլ պէտք է բաժանուին միմեանցից. իսկ այստեղ՝ ինչպէս տեսնում էք, այդ կանոնների երկուսն էլ զանց է առնուած. «զարդարեցի... պատկերագործ խառերով» է ասուած սա պարզ պտտոճառով, որ այդտեղ պտտկերագործ-ը խառ-ի վերաբերմամբ ոչ թէ իբրև համանիշ այլ իբրև յատկացուցիչ է գործածուած, և ըստ կանոնի յատկացեալից նախագաս լինելով՝ թիւ և հոլով չէ փոխած ու կէտով էլ չէ բաժանուած: Ուրեմն եթէ այս անվիճելի իրողութիւնը աչքի առաջ ունենանք, այն ժամանակ կը տեսնենք, որ յիշեալ արձանագրութեան մէջ խառ բառը իբրև մի ինքնուրոյն հասկացողութիւն է, որը պ. Լէօ սխալմբ ժխտում է:

Մնում է այժմ այն հարցը, թէ խառ բառը իրօք՝ վրացերէն է,—մենք դրան դժուարանում ենք դրական պատասխան տալ, որովհետև խառ-ը թէ՛ մեր բոլոր գաւառաբարբառներում գրեթէ անխտիր գործածուած է և թէ՛ իբրև արմատ բառ՝ մեր հին գրականութեան մէջ մի շարք ածանց և բարդ բառեր կազ-

մուսժ են նրանից: խատ՝ ուսմական բառ է և նշանակում է խայտ (=թուրքերէն նաղը): Արդ՝ ի նկատի ունենալով, որ խատ նշանակում է խայտ, կարելի է հաստատապէս պնդել, որ խայտ գրական ձևը առաջացած է ուսմի. խատ ձևից: Մնում է բառի մէջ գործածուած ձայնաւորների տարբերութեան հարցը, որը և կազմում է խնդրի էական մասը:

Մեր բոլոր գաւառաբարբառների մէջ գործածւում է մի երկբարբառ ձայնաւոր—էա *), որը մերհին գրականութեան հիմնադիրները փոխել են այ երկբարբառի: Ընդունելով իբրև հիմք մեր վերևի բացատրութիւնը, կը տեսնենք՝ որ խտտ պարզ ձայնաւորով բառ չկայ մեր ժողովրդական բարբառներում, այլ կայ խէատ՝ էա երկբարբառով, որը գրական բարբառում փոփոխուել է խայտ—ի՝ այ երկբարբառով: Բայց այն օրից՝ երբ մեր գրողները այլ և այլ պարագաներում սկսեցին ուսմի. բառեր կիրակրել գրականութեան մէջ, ուսմի. էա երկբարբառի փոխարէն—երբեմն իրանց ըմբոսողութեան համաձայն և շատ անգամ էլ ըստ դիպաց,—ոմանք միայն է գործածեցին, իսկ ոմանք էլ միայն ա: Հնումը—մանաւանդ մեր գրականութեան անկման շրջանում,—գրական որոշ ուղղութեան մասին հազիւ թէ հասկացողութիւն լինէր, և այդ պատճառով էլ ամեն ինչ խառն ի խառն էր գնում, ամեն ինչ կամայականութեան ենթարկւում: Իսկ ներկայումս մեր գրականութիւնը ունի երկու որոշ ուղղութիւն, որոնք են՝ արեւմտեան—թիւրքահայ գրականութիւն և արևելեան—սլաւոնայ գրականութիւն: Արեւմտեան և արևելեան գրական ուղղութեան տարբերութիւնը, գրողները երկուստեք էլ ուսմի. բառերը գրականութեան մէջ կիրարկելու ձևին և եղանակին վերաբերմամբ հետեւել են ուրոյն ուղղութեան: Այսպէս էլ՝ ի միջի այլոց, էա երկբարբառը գրելիս արեւմտեան հայերը փոխում են բացառաբար ա—ի, իսկ մեզանում՝ բացառաբար է—ի: Որպէսզի մեր ասածը լաւ հասկացուի, առաջ ենք բերում իբրև նմոյշ մի քանի բառեր ուսմի., արեւմտեան ու արևելեան գրողների և գրական բարբառի արտասանութեամբ:

Ռամկ. բարբառ. Արեւմտեան գրողների բարբ. Արեւելեան գրող. ք. Գրական ք.

խէատ

խատ

խէտ

խայտ

ձէան

ձան

ձէն

ձայն

*) Էա երկբարբառը շատ դժուար կարող է արտասանել անվարժ եղողը. խէատ արագ պէտք է արտասանել, առանց մէկ կամ միւս ձայնաւորը շեշտելու, և չպէտք է շփոթել եա—ի հետ, որից շատ տարբեր է հնչիւնով:

փէատ	փատ	փ'տ	փայտ
զէալ	զալ	զէլ	զայլ
ծէար	ծար	ծէր	ծայր
վէար	վար	վէր*)	վայր

Բայց դառնանք բունը խնդրին:

Վերևում ասացի՞ք, թէ խատը իբրև արմատ բառ՝ նրանից մի շարք բարդ և ածանց բառեր կազմուած և կիրարկութեան են դրուած մեր գրականութեան մէջ, բայց գուցէ այդ դեռ բաւական չլինի ապացուցանելու համար, որ խատը հայերէն բառ է, ուստի պէտք է յիշել նաև, որ խատից կազմուած ածանց բառեր մեր ռամկ. բարբառի մէջ էլ կայ, օր.¹ խէտտոտիկ, խէտտուկ, խէտտած, և այլն: Նոյնպէս՝ մի քանի գաւառաբարբառներում խատ բառը տեղի է տուել թուրքերէն նոյնիմաստ նաղը բառին, և մանաւանդ շատ գործածական են այդ բառի ածանցեալները, օր.² նախշած, նախշուկ, նախշուն, և այլն: Իսկ դեռ ներկայումս էլ խատ բառը լոյն կիրարկութեան մէջ է համշնեան բարբառում, որը ապահովաբար Անիի բարբառի հարազատ մի ճիւղը կարելի է համարել: Բացի սրանցից՝ կայ և մի սլո ոչ այնքան արհամարհելի հանգամանք մեր ասածը հաստատող, այն է՝ վերոյիշեալ եկեղեցուն թուրքերի տուած անունը—«նաքըշլի քիլիսէ» (նախշուն եկեղեցի)—երևի գեղեցիկ քանդակներով զարդարուած լինելուն համար: Եւ այլապէս էլ չի կարելի թարգմանել «պատկերազործ խատեր»-ը, եթէ ոչ՝ քանդակործ (քանդակ բանուած) նախշեր, որովհետև պատկեր բառն էլ մեր հին գրականութեան մէջ աւելի յաճախ քանդակի կամ արձանի իմաստով է գործածուած, քան թէ պատկերի (նկար):

Աւելորդաբանութեան մէջ չընկնելու համար այսքան բացատրութիւնը խտտի մասին բաւական ենք համարում, յուսաւով՝ որ հարցը բաւականին պարզուած է:

Պ. Սրսպեան

*) Վեր նշանակում է ցածր, ներքե, որը սխալմամբ շատրը ե-ով են գրում, որ ընդհակառակը՝ վերե է նշանակում:

ՊՈՍՏ—ԱՐԿՂ

ԿԱԼԿՈՒՏՏԱ, հայ հասարակութեան պ. պ. ներկայացուցիչներին.
«Մուրճ» ամսագրի խմբագրին ուղարկած նամակը եւ պար-
սկական ընդհանուր հիւպատոս Միրզա Մահմուդ խանի անու-
նով ուղերձը արժան է տուփի մէջ ստացուած են: Յունիսի 16-
ին առանձին պատգամաւորութեամբ ուղերձը ներկայացրած
է Միրզա Մահմուդ խան Մուֆախխամ ուս-սալթանային, որ
սրտագին շնորհակալութիւն յայտնեց ձեր այդ դիմումի առի-
թով: Այդ պատգամաւորութեան եւ ընդունելութեան մանրա-
մասնութիւնները տպուած են «Մշակ» լրագրի № 136 ում:

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր № 6-ում:

Երես	տող	տպուած է	պէտք է լինի
51	1 վ.	հաւատարմութեան	հաւասարութեան
51	31 »	կատարելագործուելով	կատարելագործուող
53	1 »	100 տղամարդու	1000 տղամարդու
54	32 »	առաջարկութիւններ	առարկութիւններ
«	35 »	իսկ ինքը	իսկ կինը
61	13 »	դա պէտք է բացա- տրել ժառանգակա- նութեան օրէնքով միւս կնոջ ուղեղը և այլն	դա պէտք է բացա- տրել ժառանգակա- նութեան օրէնքով. կնոջ ուղեղը ժառան գել է մարդկութեան միւս կէսի մտաւոր առաջադիմութիւնը:
116	15 ն.	չհամարուեն	համարուեն
«	7 «	բացատրութիւններին	բացառութիւննե- րին
11	5 վ.	4 դրս.	41 դրս.
153	1 վ.	զարգացման համար	զարգացուիլ ին- քը:

Խմբագիր՝ Լ. Սարգսեան
Հրատարակիչներ՝ Վ. Գանունեան
Լ. Սարգսեան:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՇԵՐՈՒԻՎ ՎԱՐԺԱՐԱՆ

Լոգան (Զվեյցարիա)

5-րդ տարեշրջան

Լոգանի հայ կրթարանը սահմանափակ թուով աշակերտներ կընդունի:

Ընդունելութիւնը տեղի կ'ունենայ մինչև սեպտեմբերը, որ ատեն կը սկսեն դասախօսութիւնները:

Սաների ընդհանուր կրթութիւնը կը կատարուի տեղական պետական ուսումնարաններում, իսկ ազգայինը, ինչպէս և թոյլ առարկաների պատրաստութիւնը՝ կրթարանիս մէջ:

Կրթարանս ունի ֆրանսերէն և գերմաներէն լեզուների համար օտարազգի ներքին օգնականներ:

Մեր սաները կարող են ուսանել և ուսաց լեզուն:

Ընդունելութեան տարիք՝ 8-ից 15:

Հինգ աշակերտ զեղջով կ'ընդունուին:

Մանրամասները գիմել տեսչին հետեւեալ հասցեով՝ Institut annémien, Lausanne (Suisse):

Տեսուչ

Մ. Նալբանդեան

Դոկտ. Գիտութեանց

«ԳՈՒՏՏԵՄԲԵՐԳ» գրախանութում

Վաճառուում են Լեոն Սարգսեանի հետեւեալ գրքերը.

- 1) Ժողովրդի կրթութեան զործը մեզանում, 1892 թ. գինն է 20 կ.:
- 2) Հին ցաւ (հրապարակախօսական խոհեր—մեր կղերի մասիւր), 1900 թ. » 30 կ.:
- 3) Մի քանի օր Արցախում եւ Սիւնիքում » 20 կ.:
- 4) Այց Թիւրքաց Հայաստանին, 1890 թ., » 60 կ.:

ԱՌԱՆՁԱՐԻ

- 1) Վշտի ծիծաղը (պատմութեան ժողովածու) գ. 1 ր.:

Լոյս տեսաւ

Յ. Յակոբեանի «ԱՇԽԱՏԱՆԻՆ ԵՐԿԵՐ»

Բանաստեղծութիւններ. գինը՝ 20 կոպ.

Դիմիլ, Тифлисъ, Бебутовская 60. А. Акопяну

19. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ	128
20. ՅԱԽԵԼՈՒԱԾ 1-ին. Ջէյմս Մորիէր՝ «ՀԱՋԻ ԲԱԲԱՆ ԱՆՔԼԻՍՅՈՒՄ», վէպ պարսկ. կեանքից, թարգմ. անգլ. Մ. Կարապետան	255—270
21. ՅԱԽԵԼՈՒԱԾ II-րդ, ԼԷՕԻՎ ՀԱՅՈՅ ՀԱՐՅԸ . . .	33—64

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից՝ գրել պարզ մտնաւանդ բուերք, յատուկ անուններն ու օտար բառերը, եւ քերթի միայն մի երեսի վրայ, առանձնապէս ու չ դարձնել կէտադուրքեան, ուղղագրութեան եւ մօր պարբերութիւնները որոշակի լինելու վրայ, Թարգմանութեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեանը նաեւ բնագիրը:

2. Ձեռնդրուած մեծ յօդուածները պահւում են խմբագրատանը 6 ամիս, իսկ յետոյ ոչնչացնւում են: Ձեռագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհօժակսը: Փոքր յօդուածներն ու ոտանաւորները չեն վերադարձնւում:

3. Դրուածքների վարձատրութեան չափը սրոշում է խմբագրութիւնը: Խմբագրութեան առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները համարւում են անվճարելի:

4. Խմբագրութիւնս իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:

5. «Մուրնի» համարը շտապուելու դէպքում պէտք է խմբագրութեանը տեղեկութիւն տալ ոչ ուշ, քան յաջորդ համարի լոյս տեսնելը:

6. Խմբագրութեանը դանադան հարցումներով գիմող անձինք պէտք է պատասխանի համար ուղարկեն նամակագրոշմ կամ պոստային ըլանի:

7. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպէկի Հասցէի փոփոխումը պէտք է ստացուի իւրաքանչիւր ամսի 10-ից ոչ ուշ, որպէսզի առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցէով: Նոր հասցէի հետ պէտք է այտնել նաեւ հին հասցէն:

ՅԵՐՈՒՆԱՆՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1906 թ.

„ՄՈՒՐՃ“

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Փ Ր Ի

(Նոր շրջան VI տարի)

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ի Ն Ը

ԿՈՍՏԱՆԱՆԻ	և	ՊԱՐԱԿԱՍՏԱՆԻ	տարեկան	10 ռ.
			կէս տարին	6 »
			ամսական	90 կ.

ԱՐՏԱՍԱԽԱՆԻ	տարեկան	12 ռ.	(32 ֆ.)
	կէս տարին	7 »	(18 ֆ.)
	ամսական		(3 ֆ.)

Բաժանորդագրինք կարելի է վճարել նա՛նու մաս-
մաս(5—5 ռ.), երկրորդ վճարը լինում է մայիսին: Ժխ. ուղղ-
ւորցնելում ուսուցանողների, աշակերտների, ուսանողների,
գիտացիների եւ քանուորների համար բաժանորդագրինք է
Տ ր ու լ ի տարեկան, որ կարելի է վճարել մաս-մաս(4-4) ռ.:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԻՈՒՄ Է

ԹԻՓԼԻՍԻՍ — Խմբագրատանը (ձապնալաձեան փողոց, տ. № 12)

Կոստանթնուպոլիսի «Եղեքից պէտք է գիմեկ» Тифлисъ,

въ редакцію журнала «МУРЧЪ».

Արտաստանից՝ Tiflis, Rédaction de la revue «MOURTCH».

ՅԱՇՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ քնդուռում է ամեն լեզուով: Յայտարա-
րութիւնների համար վճարում են.—1 երես բոլոր յայտարարութեան հա-
մար 15 ռ., 1/2 եր. 8., 1/4 եր.—4 ռ., տողատեղ (կորպ.)—40 կ.:

Խմբագիր՝ ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ